

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**



**«Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի
2021 – 2030թթ կառավարման պլան»
հիմնադրությային փաստաթղթի**

ՁԵՌՆԱՐԿՈՂ՝

«Ուայդ Գեյթ» ՍՊԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ ՇՄ նախարարության Անտառային կոմիտե

ԵՐԵՎԱՆ – 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
Ամփոփ նախաբան	4
1. Ձեռնարկորդի ԱՆՈՒՆԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ	7
2. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ	7
3. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	8
3.1. Անտառտնտեսության տեղադրություն	8
3.2. Տարածքի կազմավորումը.....	8
3.3. Անտառտնտեսության կառուցվածքը	8
3.4. «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի սահմանները.....	8
3.5. Անտառտնտեսության տարածքի փոփոխությունը.....	9
3.6. Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր	12
3.7. Կլիման.....	12
3.8. Զրագրություն.....	13
3.9. Բուսական և կենդանական աշխարհ.....	13
3.10. Իրադրության սխեման և այլ քարտեզներ	15
4. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	20
4.1. Անտառի կատեգորիաներ	20
4.2. Անտառների գնահատման մեթոդը.....	20
4.3. Անտառտնտեսության հողերի դասակարգում:	21
4.4. Գույքագրման տվյալների ծրագրային ապահովում.....	23
4.5. Քարտեզագրական աշխատանքներ.....	23
4.6. Օդալուսանկարներ և արբանյակային նկարներ.....	24
4.7. Քառակուսիների տեղաբաշխման սխեմա	24
4.8. Կոլեկտիվ ուսուցում	25
4.9. Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցում	26
4.10. Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի.....	28
4.11. Անտառային հողերի և փոփոխությունն ըստ հողատեսքերի.....	29
4.12. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ անտառկազմող ծառաթփատեսակների	30
4.13. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունը ըստ ծովի մակերևույթից բարձրության.....	31
4.14. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի	31
4.15. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ լանջի թեքության և տարիքային խմբերի.....	34
4.16. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ բռնիտետային դասերի.....	34
4.17. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության.....	35
4.18. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ հասակային դասերի	36
4.19. Անտառի տիպը.....	38
4.20. Անտառաճման պայմանների տիպ	39
4.21. Հիմնական անտառկազմող ծառատեսակների գնահատման միջին ցուցանիշները	40
4.22. Անտառի ներկա իրավիճակի վերլուծություն	44
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	45
5.1. Ֆլորա	45
5.2. Ֆաունա.....	46
5.2.1. Անողնաշար կենդանիներ	46
5.2.2. Ողնաշարավոր կենդանիներ.....	46

5.2.3.	Երկկենցաղներ և սողուններ.....	48
5.2.4.	Թռչուններ.....	49
5.2.5.	Կաթնասուններ.....	50
5.3.	«Գետիկի» պետական արգելավայր.....	51
5.4.	Անտառային տնտեսության վարման հիմնական սկզբունքները.....	54
5.5.	Անտառշահագործման և փայտամշակման բնութագիրը.....	54
5.6.	Բնափայտային անտառօգտագործում.....	55
5.6.1.	Անտառվերականգնման հատումներ.....	55
5.6.2.	Խնամքի հատումներ.....	55
5.6.3.	Անտառպաշտպանական միջոցառումներ.....	58
5.6.4.	Նախագծված անտառօգտագործման ծավալներն ըստ հատման տեսակների.....	59
5.7.	Ոչ բնափայտային անտառօգտագործում.....	60
5.8	Անտառվերականգնման միջոցառումներ.....	62
5.8.1.	Անտառաճեցման պիտանելիության դասակարգում.....	64
5.8.2.	Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ.....	64
5.9.	Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները.....	65
5.10.	Տնկանյութի աճեցում.....	78
5.11	Նախատեսվող միջոցառումների արդյունքում անտառային տարածքների արդյունավետության բարձրացում.....	81
5.12	Անտառի պահպանություն.....	85
5.12.1	Անտառպահպանության խնդիրներն ու պահաբաժինների առանձնացումը.....	85
5.12.2	Ճանապարհային ցանց.....	87
5.13	Պահպանություն անտառային հրդեհներից.....	88
5.14	Անտառտնտեսության կառավարում.....	90
5.15	Անտառի և կենսաբազմազանության պահպանություն.....	90
5.16	Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ.....	91
5.16.1	Մոնիթորինգի ծրագիր.....	91
5.16.2	Գիտական ուսումնասիրություններ.....	92
6.	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	94
7.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	95

Ամփոփ նախարան

Ճամբարակի անտառտնտեսության ներկայիս սահմաններում (նախկին Կրասնոսելսկի վարչական շրջան) անտառշինական աշխատանքներ առաջին անգամ իրականացվել են 1947–48թվականներին և կրկնվել հաջորդական՝ 1955թ, 1965թ, 1975թ և 1985թ թվականներին, իսկ նախորդ անտառշինականը իրականացվել է 2007–08 թվականներին՝ ՀՀ Տավուշի ու Լոռվա մարզերում Բնական պաշարների և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում:

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի և «Ուայդ Գեյթ» ՍՊ ընկերության միջև կնքվել է 14.04.2020թ. N ՇՄՆԱԿ–ԲՄԱՇՁԲ–20/1–2 պայմանագիր Ճամբարակի (Գեղարքունիքի մարզ) և Սևքարի (Տավուշի մարզ) անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների պատրաստում համաձայն տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի:

Պայմանագրի համաձայն իրականացվել է.

- Ճամբարակի գործող անտառկառավարման պլանի գույքագրման և քարտեզագրական նյութերի ուսումնասիրություններ,
- կլիմայի, լանդշաֆտի, ռելիեֆի և անտառային հողերի տիպերի բնութագրում,
- անտառտնտեսության տարածքում գետերի քանակի և ձգվածության, ջրահավաք ավազանի, լճերի և գրունտային ջրերի մակարդակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- ծրագրի տարածքում բնակչության զբաղվածության, անտառանյութի տեղական սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- ոչ բնափայտային անտառային պաշարների օգտագործման ուսումնասիրություն,
- նախորդ անտառշինության պլանշետների, անտառճառուտային պլանների և քարտեզ սխեմաների ձեռք բերում և ուսումնասիրություն,
- ժամանակավոր օգտագործման հատկացված հողերի քարտեզագրական նյութերի ձեռք բերում և ուսումնասիրություն,
- անտառտնտեսության և հարակից հողօգտագործողների սահմանների վերաբերյալ իրավաբանական ձևակերպումների ուսումնասիրություն,
- անտառուերմային տեղամասերի, պլանտացիաների և տնկարանային տնտեսության առկայության և վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- հարակից համայնքների հետ անտառշինական և համայնքների կադաստրային քարտեզներում առկա անտառային հողատեսքերի անհամապատասխանությունների ճշտման աշխատանքներ:

Անտառգույքագրման մեթոդների և դաշտային գործողությունների ուսուցման նպատակով ծրագրի հիմնական և օժանդակ (տեխնիկական) անձնակազմի համար կազմակերպվել է գործնական ուսուցում:

Իրականացվել են նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման ու սահմանազատման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ:

Դաշտային գույքագրման արդյունքները մշակվել են Forest Book ծրագրային ապահովմամբ:

Քարտեզագրական նյութերը մշակվել են օգտագործելով ArcGIS ծրագրային ապահովումը, որը հնարավորություն է ընձեռել դաշտային գույքագրման նյութերի վրա ստեղծել բազմանպատակային ԱՏՀ տվյալների բազա, ինչի շնորհիվ էլ պատրաստվել են թեմատիկ քարտեզները: Ստեղծված թվայնացված հատվածային քարտեզագրական բազան լրացվում է ինֆորմացիայով՝ թեմատիկ քարտեզների համար հատվածների բնութագրերի հետ EXCEL-ի աղյուսակների կցման ճանապարհով, ընդ որում, թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որն առկա է Forest Book անտառային հատվածային բնութագրերի բազայում:

Տվյալների քարտեզագրական բազան ունի հատվածային բնութագրեր, որոնք օգտագործվել են թեմատիկ քարտեզների կազմման համար:

Գույքագրման և անտառտնտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի կադաստրային քարտեզագրական նյութերի համադրությունն ի հայտ է բերել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ, դրանք ճշտվել և քարտեզները համաձայնեցվել են համայնքների ու անտառտնտեսության հետ:

Համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգի (2005թ), սահմանված կարգով իրականացվել են տեխնիկական և անտառշինական խորհրդակցությունները:

1-ին տեխնիկական խորհրդակցությունը կազմակերպվել է Ճամբարակի անտառտնտեսության տնօրենի կողմից 2020թ. մայիսի 22-ին, «Zoom» ծրագրի միջոցով: Քննարկվել են նախապատրաստական փուլի աշխատանքները, կայացվել են համապատասխան որոշումներ:

Անտառշինական առաջին խորհրդակցությունը կազմակերպվել է Անտառային կոմիտեի կողմից, 2020թ. հունիսի 8-ին՝ անտառտնտեսական գրասենյակում: Քննարկվել են անտառկառավարման պլանի պատրաստման դաշտային փուլում իրականացվող գործողությունները, խնդիրները, անտառտնտեսության և անտառշինական աշխատանքները իրականացնող կազմակերպության միջև համագործակցությունը ու այլ հարցեր:

Կազմակերպվել է նաև երկրորդ տեխնիկական խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել են անտառշինական դաշտային աշխատանքների կատարման արդյունքները, անտառների վիճակի և անտառտնտեսության վարման նախնական վերլուծությունը, տեղամասերի ցանկը, որտեղ նշանակված են հիմնական անտառտնտեսական միջոցառումները և այլ խնդիրները:

Երկրորդ անտառշինական խորհրդակցությունը իրականացվել է անտառկառավարման ծրագրի հիմնական բաժինների մշակման ավարտից հետո 2021թ. մարտի 17-ին՝ «Zoom» ծրագրի միջոցով: Քննարկվել են՝

- Անտառային ֆոնդի գնահատման հիմնական ցուցանիշները, առկա փոփոխությունների բնույթը և պատճառները նախորդ ժամանակաշրջանի համար,
- անտառային տնտեսության վարման վերլուծության արդյունքները,
- անտառօգտագործման ծավալները, վայրը, իրականացման եղանակները և մեթոդները, հատումների տնտեսական, անտառագիտական և բնապահպանական հիմնավորումները,
- անտառօգտագործման և անտառվերականգնման միջոցառումների ծավալները,
- անտառսերմնային տնկարանային տնտեսության կազմակերպումը,

- անտառների հակահրդեհային և անտառպաշտպանական միջոցառումների ծրագիրը,
- կողմնարդյունքի (ոչ բնափայտային հումքի պաշարների) գնահատումը:

1. ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՈՒՆԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

Նախատեսվող փորձաքննական գործընթացում, որի նախնական փուլի մեկնարկի նպատակով մշակվել և ներկայացվում է սույն Նախնական գնահատման հայտը, որպես ձեռնարկող հանդես է գալու «Ուայդ Գեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որը գտնվում է ք. Երևան, Գևորգ Քոչար 21 հասցեում:

2. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Հիմնադրությամբ փաստաթղթի անվանումն է «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2021 – 2030թթ կառավարման պլան»-ի նախագիծ: Փաստաթղթի նպատակն է Ճամբարակի անտառտնտեսության մասով անտառաշինության արդյունքների մշակումը և այդ անտառտնտեսության վարումը: «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի համաչ իրականացված անտառաշինության ընթացքում անտառային տնտեսության վարման նպատակով կազմվել են համապատասխան նախագծեր, որոնք տալիս են անցած ժամանակաշրջանի համար անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման ամբողջական գնահատականը, ինչպես նաև անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները:

3. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

3.1. Անտառտնտեսության տեղադրություն

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ճամբարակի անտառտնտեսությունը գտնվում է Գեղարքունիքի մարզի նախկին Կրասնոսելսկի վարչական շրջանում: Անտառտնտեսության գրասենյակը գտնվում է Ճամբարակ քաղաքում, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 110 կմ, իսկ մարզկենտրոն Գավառից՝ 80կմ: Անտառտնտեսությունը հյուսիս-արևմուտքից և հարավ-արևմուտքից սահմանակցում է «Դիլիջան» ազգային պարկին, իսկ մյուս կողմերից՝ Ճամբարակի ենթաշրջանի համայնքային հողերին: Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 19 կմ է, իսկ արևելքից արևմուտք՝ 31 կմ (քարտեզ 1):

3.2. Տարածքի կազմավորումը

Ճամբարակի (նախկինում Կրասնոսելսկի) անտառտնտեսությունը կազմավորվել է ՀՍՍՀ մինիստրների սովետի 1969թ. օգոստոսի 9-ի թիվ 593 որոշմամբ 8973 հա ընդհանուր տարածքով, որին փոխանցվել է «Դիլիջան» պետական արգելոցից Չայքենդի անտառպետությունը (5728հա) և Կարմիրի անտառպետությունը (3245հա): Մինչ նշվածը, տարբեր շրջաններում մաս է կազմել Իջևանի անտառտնտեսության (1931թ), Դիլիջանի անտառտնտեսության (1954թ) և Գետիկի անտառտնտեսության (1982թ): 1985թ. անտառշինությամբ Կրասնոսելսկի անտառտնտեսության կազմում ընդգրկված են եղել Արեգունի անտառպետությունը՝ 3865հա, Արծվաշենի անտառպետությունը՝ 513հա և Կարմիրի անտառպետությունը 726հա մակերեսով:

ՀՀ Բնապահպանության նախարարի 10.12.1998թ. թիվ 171 հրամանով Կրասնոսելսկի անտառտնտեսությունը վերակազմավորվել է «Ճամբարակի անտառտնտեսություն» դուստր փակ բաժնետիրական ընկերության 10837հա ընդհանուր մակերեսով:

2006թ. անտառշինությամբ «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի կազմում ընդգրկված են եղել Կարմիրի, Գետիկի և Դպրաբակի անտառպետությունները:

3.3. Անտառտնտեսության կառուցվածքը

«Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի կազմում 2021թ. ընդգրկված են երեք՝ Կարմիրի՝ 715հա, Գետիկի՝ 3825հա և Դպրաբակի՝ 3839հա մակերեսով անտառպետությունները: «Ճամբարակի» անտառտնտեսության ընդհանուր մակերեսը կազմում է 8379,0հա:

3.4. «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի սահմանները

Անտառտնտեսության սահմանները որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահման, ինչպես նաև արբանակային պատկերների վերձանման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի ներկայիս սահմանները:

3.5. Անտառտնտեսության տարածքի փոփոխությունը

Վերջին մոտ 35 տարիներին անտառտնտեսությունում կառուցվածքային և մակերեսային փոփոխություններ է կատարվել 2006թ-ի՝ 1985թ. համեմատությամբ, անտառտնտեսության մակերեսի նվազումը 1803 հեկտարով բացատրվում է տարածաշրջանի բնակավայրերի վարչական սահմաններում կադաստրային քարտեզագրմամբ նախկինում հաշվառված պետական սեփականության ոչ անտառային հողերը ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով այլ հողօգտագործողների փոխանցման, իսկ 2021թ.-ի՝ 2006թ. համեմատությամբ, 643հա նվազումը բացատրվում է համայնքների վարչական սահմաններում անտառային հողատեսքերի կադաստրային քարտեզագրմամբ անհամապատասխանությունների և մակերեսները երկրատեղեկատվական համակարգով ճշտման հիմնավորումով (աղյուսակ 1, 2 քարտեզ 2):

Աղյուսակ 1. Անտառտնտեսության կառուցվածքը

№	Անտառպետության անվանումը	Մակերես, հա						Տարբերություն
		1985թ	%	2006թ	%	2021թ	%	
1	Կարմիր	726	6,7	984	10,9	715	8,5	-269
2	Գետիկ	7083	65,4	5218	57,8	3825	45,7	-1393
3	Դպրաբակ	726	27,9	2820	31,3	3839	45,8	1019
Ընդամենը		10837	100	9022	100	8379	100	-643

Աղյուսակ 2. Ճամբարակի անտառտնտեսության քառակուսիների համարակալման ամփոփ տեղեկագիր ըստ անտառպետությունների

Անտառպետության անվանումը	2006թ.		2021թ.		Տարբերություն	Բացատրություն
	Քառակուսու համարը	Մակերեսը հեկտար	Քառակուսու համարը	Մակերեսը հեկտար		
Կարմիր	1	115	1	90	-25	Սահմանների ճշտման արդյունք
	2	167	2	84	-83	Սահմանների ճշտման արդյունք
	3	132	3	101	-31	Սահմանների ճշտման արդյունք
	4	63	4	62	-1	Սահմանների ճշտման արդյունք
	5	166	5	131	-35	Սահմանների ճշտման արդյունք
	6	42	6	20	-22	Սահմանների ճշտման արդյունք
	7	7	7	4	-3	Սահմանների ճշտման արդյունք
	8	239	8	178	-61	Սահմանների ճշտման արդյունք
	9	17	9	16	-1	Սահմանների ճշտման արդյունք
	10	19	10	15	-4	Սահմանների ճշտման արդյունք
	11	17	11	14	-3	Սահմանների ճշտման արդյունք
Ընդհանուր		984		715	-269	
Գետիկ	1	145	1	133	-12	Սահմանների ճշտման արդյունք
	2	247	2	168	-79	Սահմանների ճշտման արդյունք
	3	30	3	28	-2	Սահմանների ճշտման արդյունք
	4	33	4	28	-5	Սահմանների ճշտման արդյունք
	5	154	5	152	-2	Սահմանների ճշտման արդյունք
	6	6	6	6	0	-
	7	6	7	8	2	Սահմանների ճշտման արդյունք
	8	21	8	19	-2	Սահմանների ճշտման արդյունք
	9	80	9	80	0	Սահմանների ճշտման արդյունք
	10	123	10	123	0	Սահմանների ճշտման արդյունք
	11	34	11	52	18	Սահմանների ճշտման արդյունք

Անտառապետության անվանումը	2006թ.		2021թ.		Տարբերություն	Բացատրություն
	Քառակուսու համարը	Մակերեսը հեկտար	Քառակուսու համարը	Մակերեսը հեկտար		
12	202	12	174	-28	Սահմանների ճշտման արդյունք	
13	70	13	67	-3	Սահմանների ճշտման արդյունք	
14	94	14	85	-9	Սահմանների ճշտման արդյունք	
15	71	15	70	-1	Սահմանների ճշտման արդյունք	
16	138	16	130	-8	Սահմանների ճշտման արդյունք	
17	165	17	173	8	Սահմանների ճշտման արդյունք	
18	118	18	123	5	Սահմանների ճշտման արդյունք	
19	89	19	83	-6	Սահմանների ճշտման արդյունք	
20	122	20	135	13	Սահմանների ճշտման արդյունք	
21	166	21	152	-14	Սահմանների ճշտման արդյունք	
22	144	22	155	11	Սահմանների ճշտման արդյունք	
23	90	23	68	-22	Սահմանների ճշտման արդյունք	
24	154	24	153	-1	Սահմանների ճշտման արդյունք	
25	136	25	133	-3	Սահմանների ճշտման արդյունք	
26	151	26	150	-1	Սահմանների ճշտման արդյունք	
27	102	27	95	-7	Սահմանների ճշտման արդյունք	
28	89	28	69	-20	Սահմանների ճշտման արդյունք	
29	80	29	87	7	Սահմանների ճշտման արդյունք	
30	179	30	164	-15	Սահմանների ճշտման արդյունք	
31	146			-146	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի անտառապետությանը	
32	91			-91	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի անտառապետությանը	
33	81	31	81	0	-	
34	51	32	31	-20	Սահմանների ճշտման արդյունք	
35	38	33	34	-4	Սահմանների ճշտման արդյունք	
36	105	34	84	-21	Սահմանների ճշտման արդյունք	
37	235	35	156	-79	Սահմանների ճշտման արդյունք	
38	98	36	76	-22	Սահմանների ճշտման արդյունք	
39	21	37	20	-1	Սահմանների ճշտման արդյունք	
40	197			-197	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի անտառապետությանը	
41	131	38	103	-28	Սահմանների ճշտման արդյունք	
43	201	39	177	-24	Սահմանների ճշտման արդյունք	
44	105			-105	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի անտառապետությանը	
45	126			-126	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի անտառապետությանը	
46	58			-58	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի անտառապետությանը	
47	64			-64	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի անտառապետությանը	
48	63			-63	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի անտառապետությանը	
49	87			-87	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի անտառապետությանը	
50	93			-93	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Դպրաբակի	

Անտառապետության անվանումը	2006թ.		2021թ.		Տարբերություն	Բացատրություն
	Քառակուսու համարը	Մակերեսը հեկտար	Քառակուսու համարը	Մակերեսը հեկտար		
						անտառապետությանը
Ընդհանուր		5218		3825	-1393	
Գյուղատեղակայումք	1	78	1	61	-17	Սահմանների ճշման արդյունք
	2	117	2	115	-2	Սահմանների ճշման արդյունք
	3	204	3	200	-4	Սահմանների ճշման արդյունք
	4	106	4	101	-5	Սահմանների ճշման արդյունք
	5	80	5	78	-2	Սահմանների ճշման արդյունք
	6	9	6	16	7	Սահմանների ճշման արդյունք
	7	207	7	231	24	Սահմանների ճշման արդյունք
	8	114	8	113	-1	Սահմանների ճշման արդյունք
	9	166	9	177	11	Սահմանների ճշման արդյունք
	10	78	10	80	2	Սահմանների ճշման արդյունք
	11	164	11	162	-2	Սահմանների ճշման արդյունք
	12	121	12	120	-1	Սահմանների ճշման արդյունք
	13	85	13	71	-14	Սահմանների ճշման արդյունք
	14	89	14	90	1	Սահմանների ճշման արդյունք
	15	125	15	122	-3	Սահմանների ճշման արդյունք
	16	188	16	193	5	Սահմանների ճշման արդյունք
	17	143	17	138	-5	Սահմանների ճշման արդյունք
	18	44	18	66	22	Սահմանների ճշման արդյունք
	19	96	19	96	0	-
	20	101	20	108	7	Սահմանների ճշման արդյունք
	21	87	21	82	-5	Սահմանների ճշման արդյունք
	22	101	22	74	-27	Սահմանների ճշման արդյունք
	23	72	23	65	-7	Սահմանների ճշման արդյունք
	24	163	24	147	-16	Սահմանների ճշման արդյունք
	25	82	25	80	-2	Սահմանների ճշման արդյունք
		26	155	155	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
		27	85	85	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
		28	106	106	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
		29	136	136	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
		30	58	58	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
		31	70	70	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
		32	72	72	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
		33	89	89	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
		34	96	96	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
		35	186	186	Տարածքի վերակազմավորման արդյունքում միավորվել է Գետիկի անտառապետությունից	
Ընդհանուր		2820		3839	1019	
Ամբողջը		9022		8379	-643	

3.6. Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր

Ճամբարակի անտառտնտեսության տարածքը գտնվում է Փոքր Կովկասյան լեռնահամակարգի հյուսիսային հատվածում: Անտառտնտեսության անտառները տարածվում են Արեգունու լեռնաշղթայի հյուսիսային և Միափորի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լեռնաբազուկների վրա, որոնք ընդգրկում են Գետիկ գետի ջրհավաք ավազանը:

Անտառտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 800-2200 մետր բարձրությունների վրա, ընդ որում Կարմիրի անտառապետությունում՝ 1600-1800մ, Գետիկի անտառապետությունում՝ 1200-2200մ, և Դպրաբակի անտառապետությունում՝ 800-2200մ:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, սակայն անկախ կողմնադրություններից, գերակշռող են 21-30° թեքության լանջերը (անտառտնտեսության 45%-ը):

Ճամբարակի անտառտնտեսության տարածքի, և ընդհանրապես լեռնային ծագման հողերի, կազմավորման պրոցեսում կարևոր դեր են խաղում տեղագրական պայմանները, որին համապատասխան հաճախակի փոփոխվում է հողերի ջրագրական ռեժիմը: Վերջինս իր ազդեցությունն է թողնում բուսականության տեսակային կազմի, էոզոլոն պրոցեսների ինտենսիվության և դրանից կախված՝ հողակազմավորման ընթացքի տարբերության, հողերի բազմազանության բնութագրի, նրանց զարգացման, քիմիական ու մեխանիկական կազմի վրա:

Համաձայն հանրապետության հողային քարտեզագրական նյութերի՝ անտառտնտեսության տարածքում հանդիպում են լեռնային դարչնագույն, լեռնային գորշ անտառային և լեռնային մարգագետնային հողերի տիպերը:

Հյուսիսային կողմնադրության լանջերին ձևավորված լեռնային մուգ շագանակավուն հողերը բավականաչափ հզոր են, իսկ հարավային կողմնադրության լանջերում գերիշխում են բաց գորշավուն հողերը, որոնք բնորոշ են կաղնու և կաղնուտ-բոխուտային տարբեր տիպի ծառուտներին:

Լեռնային (անտառային) դարչնագույն հողերը հանդիպում են մինչև 1700մ բարձրությունների վրա, որոնցում զարգացած են բոխու, կաղնու, թխկու անտառային զանգվածները:

Անտառային գորշ հողերը հիմնականում հանդիպում են 1400-1900մ բարձրության՝ չափավոր տաք և խոնավ կլիմայի, լվացվող ջրային ռեժիմի և բոխու, կաղնու, հաճարի ծառատեսակների ծածկոցի պայմաններում, իսկ լեռնամարգագետնային հողերը հիմնականում զբաղեցնում են 1900մ-ից բարձր տարածքները (քարտեզ 3,4):

3.7. Կլիման

Հայաստանի տարածքն աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների մեծ բազմազանությամբ: Համաձայն Հայաստանի ագրոկլիմայական տեղեկագրի՝ Ճամբարակի անտառտնտեսության տարածքը հիմնականում վերագրվում է 9-րդ ագրոկլիմայական գոտուն, որն ընդգրկված է արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում՝ ծովի մակերևույթից 1100-2600մ բարձրության վրա: Ձմեռը երկարատև է, ցուրտ, կայուն ձնածածկույթով: Բազմամյա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ձմեռը սկսվում է հոկտեմբերի վերջին, նոյեմբերի սկզբին, ավարտվում՝ ապրիլի

երկրորդ տասնօրյակում: Գարունը տաք չէ, շարունակվում է մինչև հունիսի երկրորդ տասնօրյակը: Ամառը կարճատև է, զով, աչքի է ընկնում եղանակային անկայուն պայմաններով: Աշունն աչքի է ընկնում հաճախակի ամպամածություններով: Հոկտեմբերից սկսվում է աշնանային ցրտերը:

Տարեկան տեղումների միջին քանակը հասնում է 450-520մմ: Ձյան շերտի հզորությունը հասնում է մինչև 60-70սմ: Առանց սառնամանիք օրերի տևողությունը 130-150 օր: Գարունն ու աշունը տեղումնատառ են: Գերակշռում են լեռնահովտային քամիները:

Նշված անտառաճման շրջանի կլիմայական պայմանները նպաստավոր են հյուսիսային Հայաստանի դենդրոֆլորայի ոչ քիչ ծառաթփատեսակների աճման համար (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Կլիմայական բնութագրերը ըստ Ճամբարակի օդերևութաբանական կայանի տվյալների

Օդի դիտված առավելագույն ջերմաստիճանը (°C)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Առավել
2019	6,4	4,9	9,9	17,5	26,0	27,5	31,5	29,0	25,0	24,0	20,0	9,4	31,5
2020	7,4	8,4	15,5	18,0	27,0	26,0	28,5	24,0	28,5	22,0	19,5	9,4	28,5
Օդի դիտված նվազագույն ջերմաստիճանը (°C)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Նվազ
2019	-13,1	-11,5	-13,1	-5,5	2,0	6,1	6,6	6,6	-0,5	0,0	-9,5	-11,0	-13,1
2020	-16,1	-25,2	-6,5	-8,0	-1,5	7,1	8,6	6,0	5,6	1,0	-10,5	-18,2	-25,2
Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճան (°C)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
2019	-3,0	-2,3	-1,3	3,8	11,9	15,6	16,0	15,8	11,2	9,7	1,9	-0,5	6,6
2020	-5,2	-4,3	2,6	3,4	10,8	14,9	16,2	13,3	13,8	9,7	1,9	-2,5	6,2
Ամսական և տարեկան տեղումների քանակը (մմ)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
2019	21,7	34,0	79,1	42,9	50,4	115,3	45,1	37,1	46,3	7,6	13,6	24,1	517,2
2020	9,9	26,9	14,8	91,4	62,2	103,2	46,1	55,8	34,0	30,1	23,5	15,9	450,6

3.8. Զրագրություն

Ուսումնասիրվող տարածքի ջրագրական ցանցը պատկանում է Գետիկ գետի ավազանին, որի երկարությունը 58կմ է, ջրհավաք ավազանը՝ 581կմ²: Սկիզբ է առնում 2000մ-ից բարձր աղբյուրներից, սակայն սնուցումը հիմնականում ձնաանձրևային է: Զրի ծախսը կազմում է մոտ 3մ³/վ, վարարում է մայիս-հունիս ամիսներին: Վտակներից աչքի է ընկնում Բերբերը:

Անտառտնտեսության տարածքի գետերը ջրային տրանսպորտի համար պիտանի չեն: Տարածքը հարուստ է աղբյուրներով, կան մանր լճակներ, ճահճուտները բացակայում են (քարտեզ 5):

3.9. Բուսական և կենդանական աշխարհ

Ճամբարակի անտառտնտեսությունը, պայմանաորված ռելիեֆի խայտաբղետությամբ, աշխարհագրական դիրքով և ուղղաձիգ գոտիականությամբ, աչքի է ընկնում հարուստ կենսաբազմազանությամբ:

Ճամբարակի անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերի 56 ընտանիքի և 122 ցեղի պատկանող 356 տեսակ, որոնցից 4 տեսակն ընդգրկված են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում:

Ճամբարակի անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց օգտագործվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների՝ տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (72 տեսակ), մեղրատու (116), դեղատու (128), կերային (100) նշանակության տեսակները:

Ճամբարակի անտառտնտեսության տարածքն ըստ անտառաճման պայմանների մտնում է Տավուշի ֆլորիստիկ շրջանի մեջ, որտեղ հիմնական բուսական տիպն անտառայինն է:

Անտառկազմող գլխավոր ծառատեսակներն են խոշորառեջ և վրացական կաղնիները, արևելյան հաճարենին, կովկասյան լորենին, կովկասյան սոճին, կովկասյան բոխին, իսկ ուղեկցող ծառատեսակներն են, սովորական հացին, անտառային տանձենին, Լիտվինովի կեչին, սրստերև թխկին, արևելյան բոխին և այլ տեսակներ, որոնք մասնակցում են հաճարի և կաղնու խառը կամ բարդ ծառուտների կազմավորմանը, իսկ առանձին դեպքերում ձևավորում են միատարր ոչ մեծ ծառուտներ:


Միջին լեռնային գոտում հյուսիսային կողմնադրության լանջերը հիմնականում զբաղեցնում են հաճարկուտները, հարավային լանջերը՝ կաղնու համակեցությունները: Հաճարկուտներում անտառի կազմի մեջ մտնում են բոխին, կաղնին, լորենին, հացին և այլ ծառաթփատեսակներ:

Հարավային լեռնալանջերին, մինչև 1300մ բացարձակ բարձրությունները գերակշռում է վրացական կաղնին, իսկ դրանից վերև, մինչև անտառի տարածման վերին սահմանը, հիմնականում զբաղեցնում են խոշորառեջ կաղնու ծառուտները: Կաղնու ծառուտներին բնորոշ է խառը կազմ՝ հիմնականում բոխու, հացու, թխկու, լորենու, անտառային տանձենու մասնակցությամբ:


Դպրաբակի անտառապետության կազմում է գտնվում «Գետիկի» արգելավայրը: Այն հիմնվել է 1971 թվականին՝ անտառային կենդանիների պահպանման նպատակով: Կենդանական աշխարհը ներկայացված է Կովկասյան լայնատերև անտառների բնորոշ տեսակներով: Տարածքի կենդանական աշխարհի բազմազանությանն ու հարստությանը նպաստում է լեռնային ռելիեֆը, անտառները և ջրային օբյեկտների առատությունը, ինչպես նաև «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերին մոտ գտնվելը: Անտառտնտեսության տարածքում հանդիպում են գորշ արջ, վայրի խոզ, գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, թռչունների, սողունների և միջատների բազմաթիվ տեսակներ: Գետերում և լճակներում հանդիպում են կարմրախայտ, սազան, բեղլու, մուրժի:

3.10. Իրադրության սխեման և այլ քարտեզներ


Քարտեզ 1. Ճամբարակի անտառտնտեսության իրադրության սխեման




Քարտեզ 1. Անտառտնտեսության անտառապետությունները




Քարտեզ 3. Անտառտնտեսության գետային ցանցը




Քարտեզ 4. Անտառտնտեսության քառակուսային ցանցը




Քարտեզ 5. Անտառտնտեսության տարածքն ըստ նպատակային նշանակության




Քարտեզ 6. Անտառտնտեսության տարածքն ըստ բռնիտետային դասերի




Քարտեզ 7. Անտառտնտեսության հարակից համայնքների



Քարտեզ 8. Անտառտնտեսության պահպարժինները



Քարտեզ 9. Անտառտնտեսության և հարակից տարածքների ճանապարհների



4. ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1. Անտառի կատեգորիաներ

Ճամբարակի անտառտնտեսության կառավարման պլանի պատրաստման աշխատանքները իրականացվել են համաձայն սույն ծրագրի տեխնիկական առաջադրանքի՝ հիմք ընդունելով ՀՀ Անտառային օրենսգիրքը (2005), համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում անտառներն ըստ նպատակային նշանակության դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

Պաշտպանական նշանակության անտառներ, որոնք են.

- ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների անտառները,
- բարձր թեքության (30°-ից ավել) վրա գտնվող անտառները,
- անտառների վերին և ստորին սահմանների 200մ լայնությամբ շերտը,
- բուսաբանական, կենդանաբանական այգիների, դենդրոպարկերի շրջակա անտառները՝ 100 մետր շառավղով,
- կիսաանապատային, տափաստանային, անտառտափաստանային գոտիներում աճող անտառները:

Հատուկ նշանակության անտառներ, որոնք են.

- Բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված անտառները,
- Քաղաքային և քաղաքամերձ անտառները,
- Ռեկրեացիոն և առողջարարական անտառները,
- Սահմանային, ռազմական նշանակության անտառները,
- Պատմական և գիտական արժեք ներկայացնող անտառները,
- Սանիտարական գոտիները պահպանող անտառները:

Արտադրական նշանակության անտառներ, որոնք են՝ բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները, որոնք չեն դասվում հատուկ և պաշտպանական նշանակության անտառների շարքին:

4.2. Անտառների գնահատման մեթոդը

Անտառների ընդհանուր գույքագրումն իրականացվել է համաձայն Հայաստանի անտառներում անտառաշինության և անտառկառավարման պլանների մշակման հրահանգի, ընտրելով աչքաչափային-չափողական մեթոդը, որը հիմնված է բնականում անտառի աչքաչափային, ընտրողական չափողական և հաշվարկային գնահատման մեթոդների համատեղման վրա, իսկ միջոցառումներ նախատեսվող հատվածներում կիրառվել է հաշվարկային մեթոդը՝ հիմնական շառավղով շրջանաձև հրապարակների տեղադրմամբ:

Անտառի գնահատման բոլոր ցուցանիշները գրանցվել են գնահատման քարտում, որը հանդիսացել է հիմնական դաշտային փաստաթուղթը, ընդ որում այն լրացվել է գնահատման յուրաքանչյուր անտառային հատվածի համար:

Հանջերի բաժանումն ըստ թեքության աստիճանի կատարվել է համաձայն լեռնային պայմաններում հատումների կատարման գործող կանոնների:

Հանջերն ըստ թեքության բաժանվում են հարթ՝ մինչև 10° թեթև զառիվայր, 11-20° զառիվայր, 21-30° կտրուկ զառիվայր, 30°-ից բարձր՝ խիստ կտրուկ զառիվայր:

Շարահարկերի բաժանումը կատարվել է հետևյալ պայմաններում.

1. յուրաքանչյուր շարահարկի լրիվություն պետք է լինի ոչ պակաս 0,3,
2. շարահարկների միջին բարձրության տարբերությունը պետք է կազմի ոչ պակաս 20%,
3. շարահարկի միջին բարձրությունը կազմում է վերին շարահարկի բարձրության ոչ պակաս 1/4-ը:

Պարզ ծառուտներում տեսակային կազմը կամ բարդ ծառուտներում շարահարկը որոշվում է տոկոսային հարաբերությամբ անտառկազմող տեսակի պաշարից (անտառի էլեմենտ) և գրանցվում է ֆորմուլայով, որտեղ բերվում են յուրաքանչյուր ծառատեսակի կրճատ նշանակումը և յուրաքանչյուրի մասնակցության բաժինը ծառուտի կազմում՝ արտահայտված գործակցի տեսքով (ամբողջ թվով), որում յուրաքանչյուր միավորը համապատասխանում է 10% մասնակցության չափի ընդհանուր պաշարում:

Ծառատեսակը, որի պաշարը կազմում է մինչև 2-5% ծառուտի ընդհանուր պաշարից (շարահարկ), գրվում է ֆորմուլայի կազմում «+» նշանով:

Միջին տարիքը որոշվել է անտառկազմող յուրաքանչյուր տեսակի համար և գրանցվել գնահատաման քարտերում:

Բունիտետային դասը որոշվել է միջին տարիքով և միջին բարձրությամբ անտառի հիմնական էլեմենտի համար (շարահարկ):

Լրիվությունը որոշվել է առանձին ծառուտի ամեն շարահարկի համար՝ ծառերի տրամագծերի ընդլայնական կտրվածքների ընդհանուր մակերեսների գումարով, կամ շրջանաձև հրապարակներում ծառերի հաշվառման ճանապարհով կամ էլ ժապավենային հաշվառումով:

Բնափայտի 1հա-ի պաշարը որոշվել է անտառի գնահատման ժամանակ ծառուտների առանձին շարահարկերի համար տարածաշրջանի համար ընտրված ծավալային աղյուսակներով:

Անտառի բնական վերածի նկարագրության համար նշվել են. տեսակային կազմը՝ կենսունակ նմուշների ընդհանուր քանակի համեմատությամբ, տարիքը (միջին), միջին բարձրությունը, նմուշների քանակը՝ հազար հատ 1հա-ի հաշվով:

Ենթանտառի նկարագրության ժամանակ նշվել են թփերի հիմնական տեսակները և նրանց խտության աստիճանը: Խտության աստիճանը որոշելու համար օգտագործում են հետևյալ չափանիշները՝ խիտ (տարածքի 50%-ից ավել ծածկված), միջին խտության (10-49% ծածկված) և նոսր (10%-ից պակաս):

Ճանապարհային հասանելիությունը նշվել է յուրաքանչյուր հատվածի համար: Մատչելի համարվում է հատվածը, եթե նրանով անցնում է ճանապարհը կամ հատվածի սահմանից մինչև ճանապարհը պակաս է 200մ-ից: Գոյություն ունեցող բոլոր ճանապարհները պատկերվել են անտառային քարտեզներում:

Հատվածները հաջորդաբար համարակալվել են արաբական թվանշաններով՝ քառակուսու հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք:

4.3. Անտառուտեսության հողերի դասակարգում:

Հողատեսքերի գույքագրման և գնահատման ժամանակ հիմք է ընդունվել անտառչինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգով սահմանված հետևյալ դասակարգումը.

1. *Անտառային հողեր* - անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողեր: Անտառային հողերին պատկանում են.

- անտառածածկ հողերը,
- ոչ անտառածածկ հողերը,
- չմիակցված սաղարթով անտառմշակույթները,
- անտառային տնկարանները և պլանտացիաները:

2. *Անտառածածկ տարածքներին վերագրվում են.*

- 0,4 և բարձր լրիվությամբ երիտասարդ տարիքային խմբի ծառուտները,
- մնացած տարիքային խմբերի 0,3 և բարձր լրիվության ծառուտները,
- թփերով պատված հողատեսքերը, որոնցում առանց հատուկ անտառմելիորատիվ աշխատանքների հնարավոր չէ հիմնել անտառ:

3. *Ոչ անտառածածկ անտառային հողերին պատկանում են.*

- հատված տարածքները,
- անտառվերականգնման համատարած հատման հատատեղերը,
- բացատներ - որտեղ բացակայում կամ առկա են առանձին ծառեր,
- նոսրուտներ - 0,1-0,2 լրիվության ծառուտները (բացի երիտասարդ խումբը),
- հրդեհված - անտառի հատված մինչև աճի դադարեցման աստիճան վնասված,
- մահացած ծառուտներ - անտառամասեր ֆիտո և էնոտ ներգործությունից, արտադրական արտանետումներից, ռեկրեացիոն բեռնվածության և այլ գործոնների ազդեցությունից արմատի վրա չորացած, մահացած ծառուտներ, ինչպես նաև համատարած քամատապալ և ձնետապալ անտառամասերը:

Գնահատման ժամանակ առանձնացվում են ոչ անտառային հողերի հետևյալ կատեգորիաները.

- գյուղատնտեսական հողահանդակներ և հատուկ նպատակային նշանակության հողեր, վարելահող, խոտհարքներ, արոտավայրեր, այգիներ, պտղատու տնկարաններ, անտառային ճանապարհներ, անտառուղիներ և հակահրդեհային ճեղքեր, էլեկտրահաղորդակցության, հեռախոսակապի գծեր, բնակատեղեր, ավազահանքեր, մելիորատիվ առուներ և այլն,
- հողեր, որոնք առանց հատուկ մելիորատիվ միջոցառումների պիտանի չեն անտառաճեցման համար,
- ժայրեր, քարացրոններ, ճահճուտներ, ոչ անտառածածկ թեք լանջեր և այլն:

Աղյուսակ 4. Գնահատման հատվածների նվազագույն մակերեսը

№	Հողատեսքեր	Մակերեսը, հա
1	Ստուգման ժամանակաշրջանի անտառմշակույթներ	0,1
2	Բնական ծառուտներ	0,3
3	Ոչ անտառածածկ տարածքներ	0,3
4	Անտառուերմային բազաներ	0,1
5	Բնության և մշակութային ժառանգության արժեքավոր օբյեկտներ	0,1
6	Վարելահողեր, այգիներ, ավազուտներ	0,1
7	Խոտհարք, արոտավայր	0,3

4.4. Գույքագրման տվյալների ծրագրային ապահովում

Անտառտնտեսության դաշտային գույքագրման արդյունքները ենթարկվել են COPII ծրագրային հենքի վրա մշակված Forest Book համակարգչային ծրագրային մշակման:

Քարտեզագրական նյութերը համակարգչով մշակվել են՝ օգտագործելով ArcGIS ծրագրային ապահովումը, որը հնարավորություն է ընձեռնում դաշտային գույքագրման նյութերի վրա ստեղծելու բազմանպատակային ԵՏՀ տվյալների բազա, որից և պատրաստվել են թեմատիկ քարտեզները: Ստեղծված թվայնացված հատվածային քարտեզագրական բազան լրացվում է ինֆորմացիայով՝ թեմատիկ քարտեզների համար հատվածների բնութագրերի հետ EXCEL-ի աղյուսակների կցման ճանապարհով, ընդ որում, թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որը առկա է անտառային հատվածային բնութագրերի բազայում:

Հատվածների մակերեսները ներմուծվել են գնահատման քարտերի մեջ քարտեզագրական նյութերի թվայնացումից և ArcGIS բազայից համակարգչով հատվածների մակերեսների (կլորացված մինչև տասնորդական) որոշումից հետո:

Տվյալների քարտեզագրական բազան ունի հատվածային բնութագիր, որը հնարավորություն է ընձեռել պատրաստել թեմատիկ քարտեզներ:

4.5. Քարտեզագրական աշխատանքներ

Ճամբարակի անտառտնտեսության անտառների քարտեզագրման համար հիմք են հանդիսացել.

- Ճամբարակի անտառտնտեսության 3 անտառպետությունների նախորդ անտառչինության քարտեզագրական նյութերը,
- 1:25000 մասշտաբի տեղագրական քարտեզները,
- ծրագրի տարածքի արբանյակային պատկերները,
- համայնքների հատակագծերն ու կադաստրային վերջին քարտեզները:

Վերը նշված նյութերը տեղափոխվել են երկրատեղեկատվական համակարգ: Կատարվել է քարտեզների և պլանշետների թվայնացում և դրանց գրանցում աշխարհագրական կոորդինատային ցանցում:

Համայնքների հատակագծերից, կադաստրային քարտեզներից և 2006թ անտառչինական պլան-քարտեզներից վերցվել են անտառային տարածքների ուրվագծերը: Տեղագրական քարտեզները վերցվել են գետային և ճանապարհային ցանցերը, բնակավայրերը, բարձրության իզոգծերը (հորիզոնականներ) և այլ տվյալներ, որոնց միջոցով ճշտվել է անտառային տարածքների որոշ սահմաններ, օրինակ՝ քառակուսիների միջև սահմանները, որոնք անցնում են գետերով կամ ջրաբաժաններով:

Ճշտվել են նաև ճանապարհային և գետային ցանցի որոշ տվյալներ, ինչպես նաև անտառային տարածքի արտաքին և ներքին սահմանները:

Համայնքների վարչական տարածքներում անտառային հողերի գույքագրման և գնահատման արդյունքներով բացահայտվել են համայնքների կադաստրային քարտեզներում անտառային հողատեսքերի անճշտությունները, որոնք կազմակերպության կողմից քարտեզագրվել և համաձայնեցվել են համապատասխան համայնքների հետ: Որոշ քարտեզներ ներկայացված են սույն Նախնական գնահատման հայտի 3-րդ բաժնի 3.10 ենթաբաժնում, իսկ ամբողջական

քարտեզագրական նյութերը կներկայացվեն հետագայում՝ ռազմավարական գնահատման հաշվետվությունում:

4.6. Օդալուսանկարներ և արբանյակային նկարներ

Աշխատանքն իրականացնելու նպատակով կատարվել է օդալուսանկարահանում անօդաչու թռչող սարքի միջոցով:

Հանույթն իրականացվել է 2 տեսախցիկներով՝ բազմասպեկտրալ 5 ալիքներով (կապույտ, կանաչ, կարմիր, հեռավոր կարմիր, մերձավոր ինֆրակարմիր) և տեսանելի RGB ալիքներով:

Բազմասպեկտրային հանույթն իրականացվել է պիկսելի 50 սմ լուծաչափով, իսկ տեսանելի RGB հանույթը՝ 15 սմ լուծաչափով, որոնք, համապատասխանաբար, կարող են ապահովել 25 և 7,5սմ քարտեզագրական ճշտություն: Օբյեկտիվի թեքման անկյունը կազմել է 0° (աղյուսակ 5): Աշխատանքն իրականացնելիս օգտագործվել է նաև ArcGIS Basemap WorldImagery առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարները:

Աղյուսակ 5. Օդալուսանկարների տեսակը և պատկերներով ապահովված մակերեսը

N	Անտառապետության անվանումը	Օդալուսանկարների տեսակը և լուծաչափությունը	Պատկերներով ապահովված մակերեսը, հա
1	Կարմիրի	Օրթոլուսանկար տեսանելի RGB սպեկտրում (0,15 մ/վիդեոսել) Բազմասպեկտրային օրթո պատկերներ(0,5 մ/վիդեոսել)	900
2	Գետիկի	Օրթոլուսանկար տեսանելի RGB սպեկտրում (0,15 մ/վիդեոսել) Բազմասպեկտրային օրթո պատկերներ(0,5 մ/վիդեոսել)	6900
3	Դպրաբակի	Օրթոլուսանկար տեսանելի RGB սպեկտրում (0,15 մ/վիդեոսել) Բազմասպեկտրային օրթո պատկերներ(0,5 մ/վիդեոսել)	9200

4.7. Քառակուսիների տեղաբաշխման սխեմա

Անտառտնտեսության տարածքի բաժանումը քառակուսիների կատարվել է հաշվի առնելով տեղանքի աշխարհագրական տարրերը՝ գետեր, ճանապարհներ և այլ գործոններ, ընդ որում նախորդ գույքագրման քառակուսային ցանցը հիմնականում պահպանվել է, կատարվել են որոշ փոփոխություններ: Անտառտնտեսության տարածքը բաժանվել է 85 քառակուսիների, ամենափոքր քառակուսու մակերեսը 4հա է (Կարմիրի անտառապետություն), իսկ ամենամեծը Դպրաբակի անտառապետությունում՝ 231հա, միջին մակերեսը 98,0հա: Անտառի գնահատման հատվածների ընդհանուր քանակությունը 1881 է, հատվածների միջին մակերեսը՝ 4,5 հա: Նախորդ կառավարման պլանի համեմատ՝ հատվածների ընդհանուր թիվն ավելացել է 250-ով, իսկ հատվածի միջին մակերեսը նվազել է 1 հեկտարով (աղյուսակ 6, քարտեզ 5):

Աղյուսակ 6. Անտառտնտեսության կազմակերպման հիմնական տարրերը

Անտառապետության անվանումը	Տարին	Մակերեսը, հա	Քառակուսիների քանակը	Քառակուսիների մակերեսը	Վաճառվել է	Վաճառվել է	Վաճառվել է	Վաճառվել է	Վաճառվել է	Վաճառվել է
---------------------------	-------	--------------	----------------------	------------------------	------------	------------	------------	------------	------------	------------

				Առավելագույն	Նվազագույն	Միջին		
Կարմիրի	2021	715,0	11	178	4	65	217	3,3
	2006	984,0	11	239	7	90	168	5,9
Գետիկի	2021	3825,0	39	177	6	98	923	4,1
	2006	5218,0	50	247	6	105	969	5,4
Դպրաբակի	2021	3839,0	35	231	16	110	741	5,2
	2006	2820	25	207	9	113	494	5,7
Ընդամենը	2021	8379,0	85	231	4	98	1881	4,5
	2006	9022,0	86	239	6	105	1631	5,5

4.8. Կոլեկտիվ ուսուցում

Համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգի, դաշտային գույքագրումից առաջ կազմակերպվել են անտառի գույքագրման և քարտեզագրման գործնական կամ կոլեկտիվ ուսուցումներ:

Կոլեկտիվ ուսուցումներն իրականացվել է նախօրոք ընտրված ծառուտներում, որի նպատակը գույքագրող հիմնական և տեխնիկական անձնակազմին նախապատրաստելն ու անտառի գնահատում իրականացնելն է կոնկրետ գույքագրման տարածքի պայմաններում պահանջվող ճշտությամբ, յուրաքանչյուր կատարողի մասնագիտական մակարդակի և անտառի գնահատմանը նրա մասնակցության որոշումը և ճիշտ անտառտնտեսական միջոցառումներ նախագծելու հմտություն ուսուցանելը:

Կոլեկտիվ ուսուցումներին մասնակցել են ծրագրի հիմնական և տեխնիկական անձնակազմը, նույն թվում անտառտնտեսության համապատասխան մասնագետները:

Կոլեկտիվ ուսուցումը ներառել է.

- ա) անտառգույքագրման չափումների կատարման հրահանգավորում, շրջանաձև ռելասկոպիկ և հաշվարկային հրապարակներով վարժանքներ, չափագրումների տվյալների օգտագործում՝ ինքնաստուգման համար,
- բ) մասնագետների ծանոթացում համապատասխան իրավական ակտերին,
- գ) ծանոթացում անտառաճման պայմանների և անտառային տիպերի հետ, նրանց փոխկապակցվածությունը ծառուտների տեսակային կազմի, բոնիտետային դասերի և ծառուտների գնահատման այլ ցուցանիշների հետ,
- դ) ծանոթացում ծառուտների, առանձին ծառերի վնասատուներով և հիվանդություններով վարակվածության նշանների հետ,
- ե) ծանոթացում ծառուտների և այլ հողային կատեգորիաների արբանյակային նկարների վերձանմանը, գնահատման հատվածների սահմանների ճշտման և հատվածի ընդհանուր գնահատման բնութագրի գործնական ցուցադրում,
- զ) տեղեկացում դաշտային տեխնիկական փաստաթղթերի ձևակերպման և դրանց լրացման պահանջների մասին:

Ուսուցանվել է նաև մշտական փորձահրապարակների տեղադրման և հաշվարկման մեթոդիկան, և տեղադրվել է՝ Գետիկի անտառպետության կաղնի գերակշռությամբ ծառուտում 0,5 հա մակերեսով մեկ մշտական փորձահրապարակ:

4.9. Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցում

Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցման հիմնական նպատակը շահագրգիռ խմբերին հնարավորության ընձեռումն է աջակցելու անտառկառավարման պլանավորման պրոցեսին: Անտառային պաշարների պլանավորման մեջ բազմակողմանի մասնակցային մոտեցումն անտառագիտության ռեֆորմի կարևոր նախապայմաններից է:

Տեղաբնակները կարող են օժանդակել տվյալների հավաքագրմանը, պաշարների վիճակի վերաբերյալ պատմական տվյալների և տեղային կարիքների ու պաշարների օգտագործման ավանդույթների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը:

Մասնակցային մոտեցումն անկասկած կբարձրացնի տեղաբնակների հետաքրքրությունն անտառների պահպանության և պաշարների արդյունավետ օգտագործման գործընթացներում: Մասնակցային պլանավորման մոտեցումը և դրա կիրառումը պետք է հաշվի առնի ազգային սովորույթներն ու ավանդույթները: Ռեսուրսների մասնակցային պլանավորման և կառավարման մեջ ընդհանուր պրոբլեմները որոշվում են համագործակցության միջոցով: Մասնակցային կառավարում նախ և առաջ նշանակում է համագործակցություն կազմակերպության ներսում և պլանավորողների, հասարակության ու հետաքրքրվող կողմերի միջև: Մասնակցային պլանավորման պրոցեսի արդյունավետությունը երաշխավորված է համապատասխան ուսուցման դեպքում:

Ծրագրի շրջանակներում հանդիպումներ են իրականացվել անտառտնտեսության աշխատակիցների և խոշորացված համայնքի ու բնակավայրերի ղեկավարների հետ. քննարկվել են կառավարման պլանի հիմնական դրույթները, անտառային քարտեզները համադրվել են համայնքների կադաստրային քարտեզների հետ, վերհանվել և ճշտվել են առկա անհամապատասխանությունները:



Նկար 1. Գործնական ուսուցումներ

4.10. Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի

Արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են 2076,9հա (24,8%), ամբողջությամբ անտառածածկ հողերում:

Պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 30,8%-ը (2577,3հա), այդ թվում անտառային հողերը՝ 2063,7հա, որից անտառածածկը՝ 1568,8հա է, նույն թվում անտառմշակույթները՝ 8,4հա: Անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները զբաղեցնում են 321,2հա, իսկ նոսրուտները՝ 172,9հա տարածք: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 513,5հա (ոչ անտառային հողերի 91,1%-ը):

Հատուկ նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 3724,8հա (44,4%), այդ թվում անտառային հողերը՝ 3674,4հա, որից անտառածածկ մակերեսը՝ 3234,1հա, անտառմշակույթները՝ 403,0հա, չմիակցված աղարթով անտառմշակույթները՝ 17,2հա: Անտառային բացատները և բաց տարածքները զբաղեցնում են 349,3հա, իսկ նոսրուտները՝ 73,8հա տարածք: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 50,4հա (ոչ անտառային հողերի 8,9%-ը):

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 6879,8հա է (82,0%), որից ընդհանուր 453,1 հեկտարն է միակցված սաղարթով անտառմշակույթ (անտառածածկի 6,6%-ը), անտառային բացատները և պարապուտները՝ 670,5հա, նոսրուտները՝ 246,7հա:

Ոչ անտառային հողերի մակերեսը կազմում է 563,9հա:

Անտառտնտեսության և անտառպետությունների ընդհանուր մակերեսների բաշխվածությունն ըստ անտառպաշտպանական կատեգորիաների և հողատեսքերի տրված է աղյուսակ 7-ում, պատկերված՝ քարտեզ 7-ում, իսկ անտառի կատեգորիաներն ըստ անտառպետությունների նշված է աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 7. Ճամբարակի անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ հիմնական նպատակային նշանակության կատեգորիաների

№	Հողատեսք	Կատեգորիա	Մակերես, հա
1	Ընդհանուր մակերեսը	Արտադրական	2076,9
		Պաշտպանական	2577,3
		Հատուկ նշանակության	3724,8
		Ընդամենը	8379,0
2	Անտառածածկ մակերեսը	Արտադրական	2076,9
		Պաշտպանական	1568,8
		Հատուկ նշանակության	3234,1
		Ընդամենը	6879,8
2.1	Այդ թվում անտառմշակույթներ	Արտադրական	41,7
		Պաշտպանական	8,4
		Հատուկ նշանակության	403,0
		Ընդամենը	453,1
3	Չմիակցված անտառմշակույթներ	Հատուկ նշանակության	17,2
4	Անտառային տնկարան	Պաշտպանական	0,9
5	Ոչ անտառածածկ	Պաշտպանական	494,1
		Հատուկ նշանակության	423,1
		Ընդամենը	917,2
5.1	Հրդեհված, հատված և	Պաշտպանական	-

№	Հողատեսք	Կատեգորիա	Մակերես, հա
	չվերականգնված	Հատուկ նշանակության	-
		Ընդամենը	-
5.2	Բացատներ և պարապուտ տարածքներ	Պաշտպանական	321,2
		Հատուկ նշանակության	349,3
		Ընդամենը	670,5
5.3	Նոսրուտներ	Պաշտպանական	172,9
		Հատուկ նշանակության	73,8
		Ընդամենը	246,7
6	Ոչ անտառային հողեր	Պաշտպանական	513,5
		Հատուկ նշանակության	50,4
		Ընդամենը	563,9

Աղյուսակ 8. Անտառպետությունների բաշխվածությունը ըստ հիմնական նպատակային նշանակության և անտառպետությունների

№	Անտառպետություն	Նպատակային նշանակությունը / մակերես, հա						Ընդամենը	
		Արտադրական		Պաշտպանական		Հատուկ		Ընդհանուր մակերեսը	Անտառածածկ մակերեսը
		Ընդհանուր մակերեսը	Անտառածածկ մակերեսը	Ընդհանուր մակերեսը	Անտառածածկ մակերեսը	Ընդհանուր մակերեսը	Անտառածածկ մակերեսը		
1	Կարմիրի	-	-	-	-	715,0	428,9	715,0	428,9
2	Գետիկի	1650,7	1650,7	1951,5	1039,7	222,8	200,5	3825,0	2890,9
3	Դպրաբակի	426,2	426,2	625,8	529,1	2787,0	2604,7	3839,0	3560,0
	Ընդամենը	2076,9	2076,9	2577,3	1568,8	3724,8	3234,1	8379,0	6879,8

4.11. Անտառային հողերի և փոփոխությունն ըստ հողատեսքերի

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսի 2006-ի համեմատությամբ 2021թ. նվազումը 643,0 հեկտարով բացատրվում է անտառտնտեսության շրջակա բնակավայրերի հետ սահմանների՝ անտառշինական ու համայնքների կադաստրային քարտեզագրական նյութերում առկա անհամապատասխանությունների ճշտման, իսկ անտառածածկ մակերեսի ավելացումը 342,6 հեկտարով՝ իրականացված անտառվերականգնման միջոցառումների, բնական վերականգնման հետևանքով անտառապատված տարածքների ներառմամբ, ինչպես նաև երկրատեղեկատվական համակարգով մակերեսների ճշտման հանգամանքներով (աղյուսակ 9):

2021թ դրությամբ հողատեսքերի բաշխվածությունն ըստ անտառպետությունների ներկայացված է աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 9. Անտառտնտեսության անտառային հողերի հողատեսքերի փոփոխությունը

№	Հողատեսքը	2006		2021		Տարբերությունը
		Հա	%	Հա	%	
1.	Ընդհանուր	9022,0	100,0	8379,0	100,0	-643,0
2.	Անտառային հողեր, ընդամենը	7953,5	88,2	7815,1	93,2	-138,4
2.1.	Անտառածածկ, ընդամենը	6547,2	72,6	6879,8	82,1	+332,6
2.1.1.	Այդ թվում անտառմշակույթներ	613,8		453,1		-160,7
2.2.	Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ	196,1	2,2	17,2	0,2	-178,9
2.3.	Անտառային տնկարան	-		0,9		+0,9

2.4.	Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում	1210,2	13,2	917,2	11,0	-293,0
2.4.1	Նոսրուտներ	655,9		246,7		-409,2
2.4.2	Բացատներ և պարապուտ տարածքներ	554,3		670,5		+116,2
3.	Ոչ անտառային հողեր	1068,5	11,8	563,9	6,7	-504,6

Աղյուսակ 10. Ճամբարակի անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ անտառապետությունների

№	Հողատեսքը	Անտառապետություններ			Ընդամենը
		Կարմիր	Գետիկ	Դպրաբակ	
1.	Ընդհանուր	715,0	3825,0	3839,0	8379,0
2.	Անտառային հողեր, ընդամենը	709,3	3316,4	3789,4	7815,1
2.1.	Անտառածածկ, ընդամենը	428,9	2890,9	3560,0	6879,8
2.1.1.	Այդ թվում անտառամշակույթներ	399,4	47,7	6,0	453,1
2.2.	Չմիակցված սաղարթով անտառամշակույթներ	17,2	-	-	17,2
2.3.	Անտառային տնկարան	-	0,9	-	0,9
2.4.	Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում	263,2	424,6	229,4	917,2
2.4.1	Նոսրուտներ	2,6	153,1	91,0	246,7
2.4.2	Բացատներ և պարապուտ տարածքներ	260,6	271,5	138,4	670,5
3.	Ոչ անտառային հողեր	5,7	508,6	49,6	563,9

4.12. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ անտառկազմող ծառաթփատեսակների

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են արևելյան հաճարին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 925,0հա՝ 174674մ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 13,4%-ը և ընդհանուր պաշարի 20,7%-ը, ընդ որում 2006թ. համեմատությամբ մակերեսը ավելացել է 157,4 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը նվազել՝ 8786մ³-ով: Կաղնու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 4754,0հա, ընդհանուր պաշարը 513130մ³ (անտառածածկի 69,1%-ը և պաշարի 60,8%-ը), 2006թ. համեմատությամբ զբաղեցրած մակերեսը ավելացել է 436 հեկտարով, ընդհանուր պաշարը՝ նվազել 65690մ³-ով, բոխուտները՝ 223,6հա, 27280մ³ (անտառածածկ տարածքի 3,2%-ը և պաշարի 3,7%-ը), սոճուտները՝ 337 հա, 49136մ³ պաշարով (4,9% և 5,6%) և մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 9,4%-ը և ընդհանուր պաշարի 9,2%-ը (աղյուսակ 11, քարտեզ 8):

Աղյուսակ 11. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառկազմող ծառատեսակների

№	Գերակշռող ծառատեսակը	2006		2021	
		մակերես, հա	պաշար, մ ³	մակերես, հա	պաշար, մ ³
1	Սոճի	400,0	19740	337,0	49136
2	Կաղնի	3710,9	528140	4299,8	483247
3	Կաղնի ցածրաբուն	606,4	50680	454,2	29883
4	Հաճարի	767,6	183460	925,0	174674
5	Բոխի	215,7	37220	197,1	25482
6	Բոխի ցածրաբուն	40,2	3350	26,5	1798
7	Հացի	123,0	10610	68,7	4060
8	Թխկի	26,2	3820	45,9	5483
9	Կեչի	16,1	790	40,4	1613

10	Լորենի	471,4	99380	366,3	62545
11	Ուռենի ծառ	2,5	100	4,0	176
12	Ղաժի	11,2	530	25,7	650
13	Տանձենի	95,7	5410	61,0	4454
14	Հունական ընկուզենի	11,7	950	2,1	248
15	Խնձորենի	31,8	860	11,3	306
16	Սալորենի	-	-	2,0	30
17	Զիչխան	2,0	20	1,4	25
18	Ցաքի	14,8	120	11,4	91
Ընդամենը		6547,2	945180	6879,8	843901

4.13. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունը ըստ ծովի մակերևույթից բարձրության

Անտառոտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 800-2200մ բարձրությունների վրա, ընդ որում մինչև 1200մ բարձրության վրա գտնվում է ընդամենը 45,4հա մակերես, 2078մ³ ընդհանուր պաշարով (ընդհանուր անտառածածկ տարածքի ընդամենը 0,7%-ը և պաշարի 0,2%-ը), 1201-1600մ բարձրությունների վրա՝ 2118,7հա, 231227մ³ ընդհանուր պաշարով (30,8% և 27,4%), 1601-1800մ՝ 2126,5հա, 264893մ³ ընդհանուր պաշարով (30,9% և 31,4%), 1801-2000մ՝ 1918,2հա, 254219մ³, համապատասխանաբար 27,9% և 30,1% և 2000մ-ից բարձր՝ անտառածածկի 9,7%-ը, ընդհանուր պաշարի 10,9%-ը (աղյուսակ 12):

Աղյուսակ 12. Անտառածածկ մակերեսի և ընդհանուր պաշարի բաշխվածությունն ըստ ծովի մակերևույթից բարձրության

Անտառապետություն	Անտառածածկը, հա կամ Պաշարը, մ ³	Ծովի մակերևույթից բարձրությունը, մետր					
		801-1200	1201-1400	1401-1600	1601-1800	1801-2000	2000 մետրից բարձր
Կարմիր	428,9	-	-	-	50,2	297,8	80,9
	53487	-	-	-	3882	39792	9813
Գետիկ	2890,9	-	168,6	766,9	1047,8	819,3	88,3
	328276	-	17522	93770	118249	85714	13021
Դպրաբակ	3560,0	45,4	388,8	794,4	1028,5	801,1	501,8
	462138	2078	32790	87145	142762	128713	68650
Անտառոտնտեսություն	6879,8	45,4	557,4	1561,3	2126,5	1918,2	671,0
	843901	2078	50312	180915	264893	254219	91484

4.14. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի

Անտառոտնտեսությունում անտառածածկ մակերեսի և պաշարի հետևյալ բաշխվածությունն է ըստ տարիքային խմբերի՝ երիտասարդ տարիքային խմբի ծառուտները (I և II հասակային դասեր) զբաղեցնում են 235,1հա, 18708մ³ պաշարով (անտառածածկի 3,4% և պաշարի 2,2%-ը), 2006թ. համապատասխանաբար կազմել են՝ 9,1% և 6,1%-ը: Միջին տարիքի ծառուտները, որոնք բացարձակ գերակշռում են, զբաղեցնում են 5814,8հա, 711120մ³ պաշարով (համապատասխանաբար 84,5% և 84,3%), 2006թ. համապատասխանաբար կազմել են՝ 77,1% և 84,2%-ը: Հասունացող և հասուն ծառուտները զբաղեցնում են համապատասխանաբար 450,2հա (6,5%) և

379,7հա (5,6%), 64144մ³ (7,6%) և 49929մ³ (5,9%): Անտառտնտեսության 2006թ. գնահատման արդյունքներով հասունացող և հասուն ծառուտները միասին՝ 7,8% և 10,9% (աղյուսակ 13, քարտեզ 9):

Աղյուսակ 13. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի

№	Գերակշռող ծառատեսակը	Մակերեսը, հա							Պաշարը, մ ³							Միջին տարիքը
		Անտառածածկ մակերեսը, հա	այդ թվում ըստ տարիքային խմբերի				Ընդհանուր պաշարը, մ ³	այդ թվում ըստ տարիքային խմբերի								
			երիտասարդ		միջին տարիքի	հասունացող		հասուն և գերհասուն		երիտասարդ		միջին տարիքի	հասունացող	հասուն և գերհասուն		
			1	2				ընդամենը	այդ թվում գերհասուն	1	2			ընդամենը	այդ թվում գերհասուն	
1	Սոճի	337,0	9,1	120,6	207,3			49136	246	15168	33722			44		
2	Կաղնի	4299,8	5,1	34,2	4087,5	142,3	30,7	483247	94	1235	456176	20804	4938	105		
3	Կաղնի գածրաբուն	454,2			186,9	83,0	184,3	29883			9999	5488	14396	73		
4	Հաճարենի	925,0			761,5	59,8	103,7	174675			141472	11978	21225	121		
5	Բոխի	197,1	0,7	4,7	104,0	58,1	29,6	25483	3	251	11911	8819	4499	83		
6	Բոխի գածրաբուն	26,5			23,7	2,8		1799			1663	136		58		
7	Հացի	68,7	6,0	22,1	40,6			4061	41	657	3363			49		
8	Թխկի	45,9		7,8	23,3	10,6	4,2	5483		496	2342	2128	517	102		
9	Կեչի	40,4			40,4			1613			1613			32		
10	Լորենի	366,3			269,6	74,4	22,3	62545			45185	13308	4052	85		
11	Ուռենի ծառ	4,0			4,0			176			176			53		
12	Ղաժի	25,7		3,3	17,8	4,6		650		20	366	264		37		
13	Տանձենի	61,0	8,1	2,3	31,1	14,6	4,9	4450	179	136	2614	1219	302	67		
14	Հուն, ընկուզենի	2,1			2,1			248			248			56		
15	Խնձորենի	11,3	3,2	5,9	2,2			306	32	120	154			34		
16	Սալորենի	2,0		2,0				30		30				17		
17	Չիչխան	1,4			1,4			25			25			30		
18	Ցաքի	11,4			11,4			91			91			15		
Անտառտնտեսություն 2021թ		6879,8	32,2	202,9	5814,8	450,2	379,7	843901	595	18113	711120	64144	49929	1277	98	
Անտառտնտեսություն 2006թ		6547,2	70,1	523,0	5047,0	286,2	620,9	945180	900	25770	710310	59000	149200	1150	95	
Անտառպետություններ																
Կարմիրի	2021	428,9	11,8	160,9	254,8	-	1,4	-	53487	275	16531	36656	-	25	-	43
	2006	524,4	61,8	442,7	19,9	98,2	-	-	239660	830	22530	630	-	-	-	30
Գետիկի	2021	2890,9	9,5	37,6	2416,3	198,2	229,3	328276	160	1496	276918	25402	24300	10	91	
	2006	3650,6	6,2	65,3	2796,1	172,9	610,1	563840	50	2950	384750	30560	145530	1150	94	
Դպրաբակի	2021	3560,0	10,9	4,4	3143,7	252,0	149,0	462138	160	86	397546	38742	25604	1267	111	
	2006	2372,2	2,1	15,0	2231,0	113,3	10,8	-	357350	20	290	324930	28440	3670	-	111

4.15. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ լանջի թեքության և տարիքային խմբերի

Անտառածածկ տարածքի ընդամենը 3,3%-ը (224,8հա) և պաշարի 2,8%-ը (24153մ³) գտնվում են հարթ՝ մինչև 10° թեքությունների վրա, 11-20° թեքությունների վրա՝ 1513,2հա մակերես (22%) և 173363մ³ պաշար (20,5%), 30°-ից բարձր թեքություններում տեղաբաշխված են 2045,9հա անտառներ՝ 240743մ³ ընդհանուր պաշարով (համապատասխանաբար 29,6% և 28,4%), իսկ 21-30° թեքությունների վրա՝ 3095,9հա մակերես(45,1 %) և 405642մ³ պաշար (48,3%):

Անտառոտնտեսության երիտասարդ և միջին տարիքային խմբերի ծառուտների մակերեսների 61,4%-ը (4319,4հա) գտնվում են մինչև 30° թեքությունների վրա, որոնցում համապատասխան հատվածներում նախատեսվել են խնամքի հատումները (աղյուսակ 14, քարտեզ 10):

Աղյուսակ 14. Անտառածածկ ընդհանուր մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ լանջի թեքության աստիճանի և տարիքային խմբերի

Լանջի թեքության աստիճանը	անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, տասն. մ ³	Տարիքային խումբ										
			երիտասարդ		միջին տարիքային		հասունացող		հասուն և գերհասուն		այդ թվում գերհասուն		
			անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, մ ³	անտառածածկ մակերեսը, հա	պաշարը մ ³	անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, տասն. մ ³	անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, տասն. մ ³	անտառածածկ մակերեսը, հա	պաշարը, տասն. մ ³	
մինչև 5°	30,7	2977	15,2	645	15,5	2332							
6-10°	194,1	21176	28	1406	148,5	17976	16,9	1689	0,7	106			
11-15°	540,4	54218	53,3	4261	440,9	44553	28,8	3236	17,4	2167			
16-20°	972,8	119145	58	6498	781,9	93119	83,7	12918	49,2	6614	0,3	10	
21-25°	1460,9	193292	54	4568	1249,7	162707	41,7	6402	115,5	19611			
26-30°	1635	212350	18,8	990	1455,6	187468	84	13356	76,6	10536			
31-35°	1519,4	175495	3,4	116	1292,1	149370	131,7	16872	92,2	9137	13,2	1267	
36-40°	499,2	62153	4,4	220	403,3	50478	63,4	9671	28,1	1784			
41°-ից բարձր	27,3	3095			27,3	3095							
Անտառոտնտեսություն	6879,8	843901	235,1	18704	5814,8	711098	450,2	64144	379,7	49955	15,5	1277	
Կարմիր	428,9	53486	172,7	16807	254,8	36655			1,4	25			
Գետիկ	2890,9	328277	47,1	1653	2416,3	276896	198,2	25401	229,3	24327	0,3	10	
Դպրաբակ	3560	462136	15,3	246	3143,7	397545	252	38744	149	25603	13,2	1267	

4.16. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի

Անտառների միջին բոնիտետը 3,8 է, համեմատաբար բարձր բոնիտետային դասով առանձնանում են հաճարկուտները, որոնց միջին բոնիտետը 3,1 է, սոճին 2,5, սերմնային բոխու և հացենու գերակշռությամբ ծառուտները՝ 4,0 և 3,4, բարձրարուն կաղնուտներինը՝ 3,9 (աղյուսակ 15, քարտեզ 11):

Աղյուսակ 15. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի

հհ	Գերակշռող	Բոնիտետային դասեր
----	-----------	-------------------

	ծառատեսակը	1	2	3	4	5	5ա	Ընդ, հա	Միջին բռնիտետ
1	Սոճի	44,8	123,7	121,4	42,7	4,4		337,0	2,5
2	Կաղնի բարձրաբուն	1,4		764,3	3055,7	439,6	38,8	4299,8	3,9
3	Կաղնի ցածրաբուն				43,7	362,8	47,7	454,2	5,0
4	Հաճարենի		99,1	637,4	179,4	9,1		925,0	3,1
5	Բոխի		2,1	42,4	106,2	38,3	8,1	197,1	4,0
6	Բոխի ցածրաբուն				3,8	22,7		26,5	4,9
7	Հացի		9,2	25,8	33,7			68,7	3,4
8	Թխկի	0,8		27,6	17,5			45,9	3,3
9	Կեչի				23,6	16,8		40,4	4,4
10	Լորենի			329,2	37,1			366,3	3,1
11	Ուռենի ծառ				4,0			4,0	4,0
12	Ղաժի					8,5	17,2	25,7	5,7
13	Տանձենի	1,3	2,1	20,3	37,0	0,3		61,0	3,6
14	Հունական ընկուզենի		0,9	1,2				2,1	2,6
15	Խնձորենի			1,8	3,6	5,9		11,3	4,4
16	Սալորենի			2,0				2,0	3,0
17	Չիչխան						1,4	1,4	5,5
18	Ցաքի						11,4	11,4	5,5
19	Ամբողջը	48,3	237,1	1973,4	3588,0	908,4	124,6	6879,8	3,8

4.17. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության

Անտառտնտեսության ծառուտների միջին լրիվությունը 0,54 է, ընդ որում հիմնական անտառկազմող բարձրաբուն կաղնուտներում և հաճարկուտներում՝ 0,52:

Ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 1885,1հա մակերես, կամ ընդհանուր մակերեսի 27,4%-ը: 2006թ. գույքագրման արդյունքներով կազմել 814,5հա (14,3%):

Միջին լրիվության (0,5-0,6) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 3653,6հա մակերես՝ 53,1%-ը, 2008թ. 4029,8հա (71%):

Բարձր լրիվության (0,7 և բարձր) ծառուտները կազմում են ընդհանուր անտառածածկի 19,5%-ը, 2008թ՝ 14,6% (աղյուսակ 16, քարտեզ 12):

Աղյուսակ 16. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության

Գերակշռող ծառատեսակը	Տարին	Լրիվությունը									
		0,3	0,4	0,5	0,6	0,7	0,8	0,9	1,0	Ընդ.	Միջին
Սոճի	2006	-	90,6	98,9	90,8	93,7	20,6	-	-	400,0	0,65
	2021	19,8	12,0	17,5	55,7	29,1	75,1	57,7	70,1	337,0	0,76
Կաղնի	2006	250,0	445,4	1320,7	1273,9	421,9	-	-	-	370,9	0,53
	2021	378,8	847,6	1296,3	1129,3	532,1	115,7	-	-	4299,8	0,52
Կաղնի ցածրաբուն	2006	50,8	130,6	302,0	102,3	10,4	10,3	-	-	606,4	0,49
	2021	50,8	65,2	145,7	98,6	88,6	5,3			454,2	0,53
Հաճարենի	2006	21,4	116,6	244,4	280,4	104,8	-	-	-	767,6	0,54
	2021	94,0	219,0	205,2	248,6	118,2	40,0			925,0	0,52
Բոխի	2006	1,3	39,0	16,7	57,7	51,3	26,2	-	23,3	215,5	0,65
	2021	8,6	30,9	38,0	56,2	57,0	6,4	-	-	197,1	0,57
Բոխի ցածրաբուն	2006	-	-	34,5	5,7	-	-	-	-	40,2	0,51
	2021	-	2,2	13,2	-	6,2	4,9	-	-	26,5	0,59

Գերակշռող ծառատեսակը	Տարին	Լրիվությունը									
		0,3	0,4	0,5	0,6	0,7	0,8	0,9	1,0	Ընդ.	Միջին
Հացի	2006	8,2	16,8	8,9	43,3	46,8	-	-	-	124,0	0,58
	2021	6,5	5,8	19,8	12,4	12,6	6,3	3,0	2,3	68,7	0,59
Թխկի	2006	-	1,5	15,1	8,8	0,8	-	-	-	26,2	0,53
	2021	14,1	1,8	8,7	19,6	1,7	-	-	-	45,9	0,49
Կեչի	2006	-	-	11,4	4,7	-	-	-	-	16,1	0,53
	2021	3,7	3,6	9,2	23,9	-	-	-	-	40,4	0,53
Լորի	2006	25,2	20,0	52,3	204,9	159,9	9,1	-	-	471,4	0,60
	2021	26,0	28,5	71,4	152,7	57,4	30,3	-	-	366,3	0,58
Ուռենի ծառ	2006	-	2,5	-	-	-	-	-	-	2,5	0,40
	2021	1,1	-	2,9	-	-	-	-	-	4,0	0,45
Ղաժի	2006	-	-	3,5	7,7	-	-	-	-	11,2	0,57
	2021	11,4	5,5	8,8	-	-	-	-	-	25,7	0,39
Տանձենի	2006	17,1	5,8	38,8	10,7	14,3	3,9	5,1	-	95,7	0,53
	2021	19,9	13,5	6,1	5,1	0,3	4,0	8,5	3,6	61,0	0,53
Հունական ընկուզենի	2006	1,0	-	1,4	9,3	-	-	-	-	11,7	0,56
	2021	-	-	-	-	0,9	1,2	-	-	2,1	0,76
Խնձորենի	2006	-	10,7	18,3	2,4	-	-	0,4	-	31,8	0,48
	2021	1,8	1,6	1,2	4,1	0,4	-	-	2,2	11,3	0,59
Սալորենի	2006	-	-	-	2,4	-	-	-	-	2,4	0,60
	2021	-	-	2,0	-	-	-	-	-	2,0	0,50
Չիչխան	2006	-	-	-	2,0	-	-	-	-	2,0	0,60
	2021	-	-	-	1,4	-	-	-	-	1,4	0,60
Ցաքի	2006	-	12,4	-	-	-	-	-	-	12,4	0,40
	2021	-	11,4	-	-	-	-	-	-	11,4	0,40
Անտառոտնտեսություն	2006	357,0	891,9	2166,9	2105,2	903,9	75,5	5,5	23,3	6547,2	0,54
	2021	636,5	1248,6	1846,0	1807,6	904,5	289,2	69,2	78,2	6879,8	0,54
Անտառպետություններ											
Կարմիր	2021	41,9	23,1	40,6	60,6	34,3	85,0	69,2	74,2	428,9	0,72
Գետիկ	2021	330,6	541,3	621,3	703,0	529,7	160,6	-	4,0	2890,9	0,54
Դպրաբակ	2021	264,0	684,2	1184,1	1043,6	340,5	43,6	-	-	3560,0	0,52

4.18. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ հասակային դասերի

Անտառածածկ մակերեսի ընդամենը 3,4%-ը (235,1հա) 1-ին և 2-րդ հասակային դասի ծառուտներ են, ընդհանուր պաշարը 18638խտ.մ³ (2,2%), 2006թ. համեմատությամբ նվազել է 358,2 հեկտարով (5,7%), ընդհանուր պաշարը 8032խտ.մ³-ով, ինչը վկայում է, որ ստուգիչ շրջանում անտառմշակույթներ շատ քիչ մակերեսով, ընդամենը 49 հեկտար են հիմնվել, միևնույն ժամանակ բնական վերականգնում գրեթե չի կատարվել: 8 և բարձր հասակային դասերի ընդհանուր մակերեսը 2021թ 1173,4հա (17,1%), 180890խտ.մ³ (21,4%), 2006թ. գույքագրմամբ՝ 1810,1հա (27,6%), 368040խտ.մ³ (38,9%), կամ նշված հասակային դասերի ընդհանուր մակերեսը նվազել է 636,7 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 187150խտ.մ³-ով: Մակերեսներն ու պաշարային ցուցանիշները բացարձակ գերակշռությամբ տեղաբաշխված են 4-7-րդ դասերում, 2021թ. համապատասխանաբար՝ 5014,5հա (72,9%) և 597691խտ.մ³ (70,8%): 2006թ. 4009,4հա (61,2%) 537280խտ.մ³ (61,2%) (աղյուսակ 17, քարտեզ 13):

Աղյուսակ 17. Անտառածածկ մակերեսի և պաշարի փոփոխության դինամիկան ըստ գերակշռող ծառատեսակների ու հասակային դասերի

Գերակշռող ծառատեսակը	Գույքագրման տարին	Հասակային դասեր									Ընդամենը
		Համարիչ- մակերեսը (հա), Հայտարար- պաշարը (մ ³)									
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX և բարձր	
Սոճի	2021	9,1	120,6	201,0			6,3				337,0
		246	15167	32713			1010				49136
	2006	51,4	343,6	0,7	0,7	3,2	0,7				400,0
		600	18190	70	90	640	150				19740
Կաղնի բարձրաբուն	2021	5,1	34,2	116,0	958,4	1386,3	802,3	565,8	251,5	180,2	4299,8
		94	1168	6313	85898	150099	99923	76290	35388	28074	483247
	2006	5,3	8,9	59,2	1230,6	786,4	526,4	507,3	350,8	236,0	3720,9
		50	270	3990	141810	100630	75790	93970	65400	46380	529990
Կաղնի ցածրաբուն	2021				2,5	12,0	85,1	156,7	139,9	58,0	454,2
					75	452	4283	9396	10193	5484	29883
	2006				12,5	11,1	5,2	280,5	288,3	8,8	606,4
					400	360	410	21240	27210	1060	50680
Հաճարենի	2021			6,0	95,6	191,4	217,3	189,0	172,5	53,2	925,0
				370	14997	36979	39362	36923	34921	11123	174675
	2006			5,3	42,1	45,0	60,3	97,9	129,7	387,3	767,6
				420	7230	7990	9730	22500	27840	107750	183460
Բոխի բարձրաբուն	2021	0,7	4,7	26,6	67,3	81,4	16,6				197,1
		3	251	1353	7989	13682	2205				25483
	2006			25,6	96,1	79,5	14,5				215,7
				5860	13050	15220	3050				37180
Բոխի ցածրաբուն	2021					3,8	22,7				26,5
						153	1646				1799
	2006					3,1		37,1			40,2
						140		3210			3350
Հացի	2021	6,0	22,1	21,7	16,5	2,4					68,7
		41	656	1525	1500	339					4061
	2006		63,5	30,1	39,4						123,0
			3130	3110	4500						10740
Թխկի	2021		7,8	4,3	5,9	1,7	5,3	16,7	4,2		45,9
			496	135	345	229	895	2866	517		5483
	2006	0,4	6,3	4,6	1,6			5,6		7,7	26,2
		-	260	370	130			1290		1770	3820
Կեչի	2021			30,8	8,9		0,7				40,4
				1335	263		15				1613
	2006			5,1			11,0				16,1
				80			710				790
Լորենի	2021					8,4	12,1	31,9	120,1	193,8	366,3
						974	1886	4495	18626	36564	62545
	2006							69,9	376,2	25,3	471,4
								8750	84970	5660	99380
Ուռենի ծառ	2021					2,9	1,1				4,0
						136	40				176
	2006				4,5						4,5
					100						100

Գերակշռող ծառատեսակը	Գույքագրման տարին	Հասակային դասեր									
		Համարիչ- մակերեսը (հա), Հայտարար- պաշարը (մ ³)									Ընդամենը
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX և բարձր	
Ղաժի	2021		3,3	8,1	5,3	4,4	4,6				25,7
			20	77	148	141	264				650
	2006				1,1	10,1					11,2
					20	510					530
Տանձենի	2021	8,1	2,3	26,8		8,7	15,1				61,0
		178	136	2368		463	1305				4450
	2006	1,1	67,6	1,0	8,2		17,8				95,7
		10	3190	30	490		1690				5410
Հունական ընկուզենի	2021			2,1							2,1
				248							248
	2006		1,4	10,3							11,7
		70	880							950	
Խնձորենի	2021	3,2	5,9	2,2							11,3
		32	120	154							306
	2006	11,9	19,3	0,6							31,8
		240	600	20							860
Սալորենի	2021		2,0								2,0
			30								30
	2006		12,4								12,4
			60								600
Չիչխան	2021						1,4				1,4
							25				25
	2006				2,0						2,0
					20						20
Յաքի	2021			11,4							11,4
				91							91
	2006			12,4							12,4
				60							60
Ամբողջը	2021	32,2	202,9	457,0	1160,4	1703,4	1190,6	960,1	688,2	485,2	6879,8
		594	18044	46672	111215	203647	152859	129970	99645	81245	843901
	2006	70,1	523,0	144,6	1426,8	948,4	635,9	998,3	1145,0	665,1	6547,2
		900	25770	14890	167600	127190	91530	150960	205420	162620	945180
Կարմիրի ա-պ 2021		11,8	160,7	248,2	2,7	2,9	2,6				428,9
		275	16464	36339	105	142	162				53487
Գետիկ ա-պ 2021		9,5	37,6	37,8	724,2	936,7	367,7	241,6	301,1	234,7	2890,9
		160	1494	2265	69600	103812	46220	25677	38589	40459	328276
Դպրաբակ ա-պ 2021		10,9	4,4	171,0	433,5	763,8	820,3	718,5	387,1	250,5	3560,0
		159	86	8078	41510	99693	106477	104293	61056	40786	462138

4.19. Անտառի տիպը

Անտառչինության ժամանակ անտառի տիպի բնութագրման համար հիմք են ընդունվել Լ.Բ. Մախատաձեի և Ն.Դ. Պոպովի, նաև Յարոշենկոյի կողմից Կովկասի և Հայաստանի համար մշակված անտառտիպոլոգիական սխեմաները:

Համաձայն վերը նշված սխեմաների՝ անտառտնտեսության անտառները տեղաբաշխված են կենտրոնական-արևմտաանդրկովկասյան մարզում, որի բուսականությունն առանձնանում է հարուստ կենսաբազմազանությամբ, լավ զարգացած անտառներով՝ արևելյան կաղնու և հաճարի ծառատների գերակշռությամբ:

Տարածաշրջանի կլիման նպաստում է անտառտնտեսության տարածքում անտառի թարմ (չափավոր խոնավ) տիպերի գերակշռությանը (տարախոտային), որը զբաղեցնում է ընդհանուր անտառածածկի 35,2%-ը (2427,3 հա), շուղախոտային տիպը՝ 27,9% (աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառի տիպերի

№	Անտառի տիպերի խմբեր	Գերակշռող ծառատեսակները								
		Սոճի	Կաղնի	Հաճախի	Բոխի	Հացի	Թխի	Լորենի	Այլ տեսակներ	Ընդամենը
1	Պտերային			40,6	10,5					51,1
2	Գետնաստղային		93,0	218,7				2,3		314,0
3	Մեռյալ ծածկույթ	117,6								117,6
4	Ռաշտավլուկային		701,8	13,4	19,8				29,3	764,3
5	Տարախոտային	11,4	1562,4	432,4	53,6	32,8	16,0	296,7	22,0	2427,3
6	Շուղախոտային	169,8	1383,9	179,2	57,1	34,5	4,6	67,3	23,5	1919,9
7	Բոշխային	38,2	840,0		82,6				42,9	1003,7
8	Մերձալպյան		172,9	40,7		1,4	25,3		41,6	281,9
Ընդամենը		337,0	4754,0	925,0	223,6	68,7	45,9	366,3	159,3	6879,8

4.20. Անտառածածկ պայմանների տիպ

Անտառտնտեսությունների սահմաններում անտառածածկ պայմանների տիպը բնութագրվել է համաձայն պրոֆ. Ե. Վ. Ալեքսեևի և Պ. Ս. Պոգրեբնյակի կողմից մշակված էդաֆիկ ցանցի, ըստ որի անտառածածկ պայմանները հիմնականում որոշվում են երկու էդաֆիկ գործոններով՝ հողերի բերրիությամբ և խոնավացման պայմաններով և այդ գործոնները դիտվում են իրարից անկախ:

Հողերի բերրիությունը առաջացնում է հետևյալ տիպերի հաջորդականությունը.

- A- բնութագրում է աղքատ աճման տարածքով,
- B- համեմատաբար աղքատ աճման տարածքով,
- C- համեմատաբար բերրի աճման տարածքով,
- D- բերրի աճման տարածքով:

Խոնավապահովվածությունից ելնելով անտառի տիպերը բաժանվում են

0-չափազանց չոր,

1- չոր,

2- թարմ (չափավոր խոնավ),

3- խոնավ,

4- թաց,

5- ճահիճ:

Անտառզնահատման տվյալների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ճամբարակի անտառտնտեսությունում գերակշռում են համեմատաբար բերրի աճման պայմաններով չափավոր խոնավ տիպը (C-2) 2937,1 հա, կամ ընդհանուր անտառածածկի 42,7%-ը, իսկ ընդհանրապես (C- D)– 62,8%: Համեմատաբար աղքատ աճման պայմաններով տարածքները՝ (A,B) 2558,9 հա, 37,2% (աղյուսակ 19):

Աղյուսակ 19. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառաճման պայմանների տիպերի

Անտառաճման պայմանների տիպեր	Գերակշռող ծառատեսակների մակերեսը, հա								
	Սոճի	Կաղնի	Հաճարի	Բոխի	Հացի	Թխկի	Լորենի	Այլ տեսակներ	Ընդամենը, հա
A1		4,7							4,7
B1	0,3	690,2		29,5				18,0	738,0
B2	90,8	1267,7	17,4	147,3	25,1	4,6	3,5	49,3	1605,7
B3		138,8	15,7		1,4	10,7		43,9	210,5
C1	30,0	804,7	150,6				70,0		1055,3
C2	131,2	1748,8	656,5	46,8	24,1	3,8	280,3	45,6	2937,1
C3	84,7	93,7	42,8		18,1	26,8	12,5	2,5	281,1
C4			8,6						8,6
D2		5,4	25,1						30,5
D3			8,3						8,3
Ընդամենը	337,0	4754,0	925,0	223,6	68,7	45,9	366,3	159,3	6879,8

Կարելի է եզրահանգել, որ անտառտնտեսություններում անտառաճման պայմանները բարենպաստ են թարմ չափավոր խոնավությամբ համեմատաբար բերրի հողերում աճող անտառային տեսակների համար, որը և հաշվի է առնվել անտառվերականգնման համալիր միջոցառումների նախատեսման ժամանակ:

4.21. Հիմնական անտառկազմող ծառատեսակների գնահատման միջին ցուցանիշները

Անտառտնտեսությունում անտառների միջին տարբը 98 է, միջին բոնիտետային դասը՝ 3,8, ծառատների միջին լրիվությունը՝ 0,54 է, 1 հեկտարի միջին պաշարը՝ 123մ³, միջին տարեկան աճը՝ 1,32մ³:

Ծառուտի միջին կազմը՝ 4,8կաղնի, 1,7հաճարի, 1,5բոխի, 0,5թխկի, 0,6սոճի, 0,5լորի, 0,3հացի, 0,1տանձենի:

Գնահատման նշված ցուցանիշները 2006թ. հետևյալն է՝ միջին տարբը 95, միջին բոնիտետային դասը 3,7, ծառատների միջին լրիվությունը 0,54, 1 հեկտարի միջին պաշարը՝ 144մ³, միջին տարեկան աճը՝ 1,52մ³:

Միջին կազմը՝ 5,1կաղնի, 1,5բոխի, 1հաճարի, 0,6բոխի, 0,6սոճի, 0,5թխկի, 0,5լորի, 0,1տանձի, 0,1ղաժի:

Անտառապետություններում գնահատման միջին ցուցանիշները 2021թ. հետևյալն է՝ Կարմիրի անտառապետությունում՝ միջին տարիքը՝ 43, միջին բոնիտետային դասը՝ 2,7, միջին լրիվությունը՝ 0,72, 1 հեկտարի միջին պաշարը՝ 125մ³, միջին տարեկան աճը՝ 2,88մ³: Միջին կազմը՝ 8,7սոճի, 0,6տանձի, 0,3հացի, 0,2կաղնի, 0,1թխկի, 0,1խնձորի, 0,1ուռի:

Գետիկի անտառապետությունում համապատասխանաբար՝ 91, 3,9, 0,54, 114մ³, 1,26մ³: Միջին կազմը՝ 5,5կաղնի, 1,6բոխի, 0,7հաճարի, 0,4թխկի, 0,4հացի, 1,3լորի, 0,1տանձենի:

Դպրաբակի անտառապետությունում համապատասխանաբար՝ 111, 3,8, 0,52, 130մ³, 1,18մ³: Միջին կազմը՝ 4,8կաղնի, 2,7հաճարի, 1,4բոխի, 0,6թխկի, 0,3հացի, 0,1տանձենի, 0,1կեչի (աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Տեղեկագիր անտառզնահատման միջին ցուցանիշների՝ ըստ գերակշռող ծառատեսակների

№	Գերակշռող ծառատեսակը	Տարիներ	Գնահատման միջին ցուցանիշներ					Ծառուտի միջին կազմը
			Տարիքը	Բունիտետի դասը	Լրիվությունը	1 հա անտառածածկ մակերեսի միջին պաշարը, մ ³	Պաշարի 1 հա անտառածածկի միջին անը	
1	Սոճի	2021	44	2,5	0,76	146	3,34	9,7սոճի0,2տանձենի0,1հացի
		2006	31	3,8	0,57	49	1,65	9,5սոճի0,2տանձենի0,1կ0,1հացի0,1թխկի
2	Կաղնի բարձրաբուն	2021	105	3,9	0,52	112	1,09	6,9կաղնի1,5բոխի0,5թխկի0,4հաճարի0,4հացի0,2լորենի0,1տանձենի
		2006	103	3,8	0,53	112	1,09	7,2կաղնի1,4բոխի0,5հացի0,4թխկի0,3հաճարի0,1տանձենի0,1լորենի
3	Կաղնի ցածրաբուն	2021	73	5,0	0,53	66	0,89	7,7կաղնիցբ1,4բոխի0,5հացի0,2թխկի0,1հաճարի0,1ղաժի0,1կեչի
		2006	71	4,7	0,49	84	1,25	6,7կաղնի ցբ. 1,4բոխի0,9հացի0,4թխկի0,4ղաժի0,1լորենի0,1կեչի
4	Հաճարի	2021	121	3,1	0,52	189	1,63	7,4հաճարի1,2կաղնի0,9բոխի0,5թխկի
		2006	147	3,2	0,54	239	1,62	7,0հաճարի1,6բոխի0,7կաղնի0,6թխկի0,1հացի
5	Բոխի բարձրաբուն	2021	83	4,0	0,57	129	1,53	6,1բոխի2,3կաղնի0,5հաճարի0,5հացի0,4թխկի0,1լորենի0,1տանձենի
		2006	80	3,5	0,65	173	2,16	6,1բոխի2,6կաղնի0,6թխկի0,1հացի0,1լորենի 0,1հաճարի
6	Բոխի ցածրաբուն	2021	58	4,9	0,59	68	1,16	6,7բոխի. ցբ2,5կաղնի0,8հացի
		2006	63	4,8	0,51	83	1,32	6,2բոխի. ցբ2,5կաղնի0,7հացի0,5թխկի0,1ղաժի
7	Հացի	2021	49	3,4	0,59	59	1,13	7,5հացի1,1բոխի0,7կաղնի0,3տանձի0,1թխկի0,1խնձորենի0,1լորի0,1սոճի
		2006	45	3,3	0,58	87	1,93	8,3հացի0,8կաղնի0,5բոխի0,2թխկի0,2տանձենի
8	Թխկի	2021	102	3,3	0,49	119	1,19	6,6թխկի1,6կաղնի1,2հաճարի0,3տանձի0,2բոխի0,1սոճի
		2006	100	3,5	0,53	146	1,46	5,2թխկի1,7հաճարի1,1կաղնի0,8բոխի0,4տանձենի0,2սոճի0,2հացի0,2լորենի0,2կեչի
9	Ղաժի	2021	37	5,7	0,39	25	0,59	7,3ղաժի1,2կաղնի0,8բոխի0,7հացի
		2006	44	5,3	0,57	47	1,07	6,8ղաժի2,0հացի1,2կաղնի
10	Լորի	2021	85	3,1	0,58	171	2,01	5,7լորենի2,4կաղնի1,1բոխի0,4թխկի0,4հացի
		2006	77	3,0	0,60	211	2,74	5,9լորենի2,6կաղնի1,3բոխի0,1թխկի0,1հաց
11	Կեչի	2021	32	4,4	0,53	40	1,28	7,7կեչի1,5կաղնի0,4թխ 0,3հացի0,1արոսենի
		2006	47	5,0	0,53	49	1,04	8,8կեչի0,6կաղնի0,6թխկի
12	Ուղի ծառանման	2021	53	4,0	0,45	44	0,85	10ուղի
		2006	44	4,4	0,40	40	0,91	10ուղի

№	Գերակշռող ծառատեսակը	Տարիներ	Գնահատման միջին ցուցանիշներ					Ծառուտի միջին կազմը
			Տարիքը	Բունիտների դասը	Լրիվությունը	1 հա անտառածածկ մակերեսի միջին պաշարը, մ ³	Պաշարի 1 հա անտառածածկի միջին արժեքը	
13	Ընկուզենի	2021	56	2,6	0,76	118	2,12	10ընկուզենի
		2006	43	3,0	0,56	81	1,88	9,8ընկուզենի0,2տանձենի
14	Տանձենի	2021	67	3,6	0,53	73	1,27	7տանձենի1,6կաղնի0,5թխկի0,4սոճի0,2հաճարի0,2հացի0,1բոխի
		2006	51	4,0	0,53	57	1,12	7,2տանձենի1,7կաղնի0,3հացի0,4թխկի0,3սոճի0,1բոխի
15	Խնձորենի	2021	34	4,4	0,59	27	0,73	8,3խնձորենի1,2տանձենի0,5թխի
		2006	22	3,1	0,48	27	1,23	8,1խնձորենի1,4տանձենի0,6թխի
16	Սալորենի	2021	17	3,8	0,50	15	0,88	10սալորենի
		2006	25	3,0	0,60	25	1,0	10սալորենի
17	Չիչխան	2021	30	5,5	0,6	18	0,6	5չիչխան, 2ակացիա դեղին, 3հացի
		2006	20	5,5	0,60	10	0,5	4չիչխան, 4ակացիա դեղին, 2հացի
18	Ցաքի	2021	15	5,5	0,40	8	0,53	10ցաքի
		2006	10	5,5	0,40	5	0,50	10ցաքի
Անտառտնտեսություն		2021	98	3,8	0,54	123	1,32	4,8կաղնի, 1,7հաճարի, 1,5բոխի, 0,6սոճի, 0,5թխկի, 0,5լորի, 0,3հացի, 0,1տանձենի
		2006	95	3,7	0,54	144	1,52	5,1կաղնի, 1,5բոխի, 1,0հաճարի, 0,6բոխի, 0,6սոճի, 0,5թխկի, 0,5լորի, 0,1տանձի, 0,1ղաժի
Անտառապետություններ								
Կարմիրի անտառապետություն		2021	43	2,7	0,72	125	2,88	8,7սոճի0,6տանձի0,3հացի0,2կաղնի,0,1թխկի0,1խնձորի0,1ուռի
		2006	30	3,5	0,56	46	1,53	8,1սոճի1հացի0,5կաղնի0,2թխկի0,2տանձենի
Գետիկի անտառապետություն		2021	91	3,9	0,54	114	1,26	5.5կաղնի1.6բոխի0.7հաճարի0.4թխկի0.4հացի1.3լորի0.1տանձենի
		2006	94	3,7	0,54	154	1,64	5,0կաղնի1,6բոխի1,3հաճարի0,9լորի0,6հացի0,5թխկի0,1տանձենի
Դպրաբակի անտառապետություն		2021	111	3,8	0,52	130	1,18	4.8կաղնի2.7հաճարի1.4բոխի0.6թխկի0.3հացի0.1տանձենի0.1կեչի
		2006	111	3,8	0,53	151	1,36	6,3կաղնի1,7բոխի0,8հաճարի0,5հացի0,5թխկի0,1կեչի0,1ղաժի

4.22. Անտառի ներկա իրավիճակի վերլուծություն

Անտառի վիճակի պատկերման նպատակով նախորդ անտառշինությունից հետո վեր է լուծվել անտառածածկ մակերեսի և պաշարի փոփոխությունները գերակշռող ծառատեսակների և հասակային դասերի սահմաններում, անտառզնահատման ցուցանիշների փոփոխությունները, ինչպես նաև անտառզնահատման և անտառտնտեսության կառավարման վերաբերյալ առկա համապատասխան նյութերը:

Անտառտնտեսության 2006թ. կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը եղել է 95, իսկ 2021թ. 98, միջին լրիվությունը մնացել է նույն մակարդակում՝ 0,54, անտառածածկ մակերեսի 1 հեկտարի միջին պաշարը նվազել է 21խտ.մ³-ով, իսկ 1հեկտարի միջին աճը 0,20խտ.մ³-ով: Նշված ժամանակաշրջանում ընդհանուր անտառածածկ մակերեսը ավելացել է 332,6 հեկտարով, սակայն ընդհանուր պաշարը նվազել է 101279 խտ.մ³-ով: Հասակային դասերի սահմաններում հետևյալ փոփոխություններն են կատարվել՝ 1–2 դասերի ընդհանուր մակերեսը 2006թ. համեմատությամբ 2021թ. նվազել է 358,2 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 8032խտ.մ³-ով, 5–6–րդ դասերի ընդհանուր անտառածածկը ավելացել է 1309,7 հեկտարով, ընդհանուր պաշարը՝ 208140մ³-ով, իսկ 7 և բարձր հասակային դասերի ընդհանուր մակերեսը նվազել է 674,9 հեկտարով, ընդհանուր պաշարը՝ 208140խտ.մ³-ով, ինչից կարելի եզրահանգել, հիմնականում հատվել են 120 տարեկան և բարձր տարիքի, հատկապես բարձրաբուն արժեքավոր կաղնի և լորենի ծառերը:

Վերը նշված ժամանակաշրջանում որոշակի փոփոխությունների է ենթարկվել ծառուտի միջին կազմը՝ 2006թ՝ 5,1կաղնի, 1,5բոխի, 1,0հաճարի, 0,6բոխի, 0,6սոճի, 0,5թխկի, 0,5լորի, 0,1տանձի, 0,1ղաժի: 2021թ. ծառուտի կազմը՝ 4,8կաղնի, 2,7 հաճարի, 1,4բոխի, 0,6թխկի, 0,3հացի, 0,1տանձենի, 0,1կեչի:

Անտառտնտեսությունում հասուն և գերհասուն ծառուտները զբաղեցնում են 397,5հա մակերես (11%), ընդհանուր պաշարը՝ 49955խտ.մ³ (5,9%) ընդ որում հիմնական անտառկազմող տեսակներից հաճարին 107հա (21273խտ.մ³), խոշորառէջ կաղնին 215հա (19389խտ.մ³), կովկասյան բոխին՝ 29,1հա (4500մ³), թխկին՝ 4,2հա (516մ³), լորենին՝ 22,3հա (4051մ³) և անտառային տանձենին՝ 4,9հա (309մ³):

Հասուն գերհասուն անտառները Գետիկի անտառապետությունում կազմում են տարածքի 7,9%-ը և պաշարի 7,4%-ը, իսկ Դպրաբակի անտառապետությունում, համապատասխանաբար՝ 16,7%-ը և 5,5%-ը:

Նշված տեսակների հասուն տարիքի անտառների մոտ թեև մոտ 90%-ում առկա է որոշակի քանակության մատղաշ, սակայն բավարար քանակության և հուսալի մատղաշով ապահովված է ընդամենը 24հա (6,0%), այն էլ հիմնականում բոխի տեսակով: Դրանով է նաև պայմանավորված 1-ին հասակային դասի ծառուտների շատ փոքր մակերեսները՝ ընդհանուր անտառածածկի ընդամենը 0,47% (32,2հա):

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ճամբարակի անտառտնտեսության 2021-2030 թթ-երի անտառկառավարման պլանի նախագծով և դրանով նախատեսված միջոցառումների իրականացմամբ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններ չեն ակնկալվում: Այնուամենայնիվ, անտառկառավարման պլանների հետագա իրականացման գործընթացներում կարող են լինել որոշակի ռիսկեր (բնակլիմայական, տեխնիկական կամ անձնակազմի կարողություններով պայմանավորված կամ այլ), որոնց գնահատումը և համապատասխան միջոցառումները կներառվեն հետագա ռազմավարական գնահատման հաշվետվությունում: Այս փուլում սույն փաստաթղթի 5-րդ գլխում տրված են հիմնականում շրջակա միջավայրի բաղադրիչների և անտառի պահպանության միջոցառումների նկարագրությունը, որոնց համար Ճամբարակի անտառտնտեսության 2021-2030 թթ-երի անտառկառավարման պլանի իրականացմամբ ակնկալվում են գերազանցապես դրական ազդեցություններ:

5.1. Ֆլորա Անոթավոր բույսեր

«Ճամբարակի» անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերին 56 ընտանիքի և 122 ցեղին պատկանող 356 տեսակ:

«Ճամբարակի» անտառտնտեսության տարածքում աճող բույսերից 4 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (աղյուսակ 22, քարտեզ 15): Այս տվյալները անհրաժեշտ են Ճամբարակի անտառտնտեսության տարածքում բնապահպանական բարձրարժեք անտառների առանձնացման համար:

Աղյուսակ 21. Ճամբարակի անտառտնտեսության տարածքում աճող ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ բուսատեսակները

№	Տեսակի լատիներեն անվանումը	Տեսակի հայերեն անվանումը	Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի
1.	<i>Echinops tournefortii</i>	Ոգնագլխիկ Տուրնեֆորի	EN
2.	<i>Polystichum braunii</i>	Բանպոտ Բրաունի	EN
3.	<i>Lycopodium selago</i>	Գետնամուշկ	CR
4.	<i>Lilium armenum</i>	Շուշան հայկական	NT

«Ճամբարակի» անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (72 տեսակ), մեղրատու (116), դեղատու (128), կերային (100) նշանակության տեսակները:

Հիմնական վտանգներ: Հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները:

Դեռևս անբավարար են ուսումնասիրված օգտակար տեսակների պաշարները, որոնց մասին առայժմ գրառումները կարելի է սահմանափակել «առատ» կամ «հաճախ հանդիպող» գնահատականներով:

Բուսական էկոհամակարգերի համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը, օրինակ՝ *Ailanthus altissima*, *Robinia pseudacacia*, *Silybum marianum*, *Astragalus galegiformis*, *Ambrosia artemisiifolia* և այլն:

5.2. Ֆաունա

5.2.1. Անողնաշար կենդանիներ

Ընդհանուր առմամբ, Ճամբարակի անտառտնտեսության տարածքի անողնաշար կենդանիների ֆաունան դեռևս լավ ուսումնասիրված չէ: Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակներից այստեղից հայտնի են միայն 3-ը, այդ թվում Հայաստանի էնդեմիկներ կիսափայլ երկարաբեղիկը (*Dorcadion semilucens*) (EN), որը մեր երկրի այլ ԲՀՊՏ-ներում չի պահպանվում, Հայկական ծաղկեփոշեկերը (*Isomira armena*) (EN), ինչպես նաև Բերնի կոնվենցիայի երկրորդ հավելվածում գրանցված Մնեմոզինան կամ սև ապոլոնը (*Parnassius mnemosyne rjabovi*) (VU):

Տարածքից հայտնի են մի շարք նեղ տարածվածություն ունեցող Կովկասյան տարածաշրջանի և Անդրկովկասի էնդեմիկներ՝ գնայուկ բզեզներ Կալլեյի (*Carabus calleyi*), թզուկ (*Carabus pumilio*), փոփոխական (*Carabus varians*) և մաղաթև (*Carabus cribratus*) ցայտագնայուկներ, ոսկեպղնձափայլ գնայուկը (*Zabrus aurychalceus*), ինչպես նաև հազնված երկարաբեղիկը (*Dorcadion indutum*):

Հիմնական վրանգները: Հիմնական վտանգ կարող է հանդիսանալ ապօրինի անտառհատումը, որը հանգեցնում է տարածքների մասնատմանը և դեգրադացմանը:

Պահպանություն: Սանիտարական/խնամքի հատումներ իրականացնելիս տարածքներում անհրաժեշտ է պահպանել անողնաշար կենդանիների ապրելավայր հանդիսացող առանձին ցցաչոր փշակավոր ծառեր:

Վնասատուների հնարավոր բռնկումների դեպքում ցանկալի է խուսափել ավիացիոն պայքարի ձևերից և կիրառել կենսաբանական պայքարի ձևերը: Ավիացիոն պայքարի անխուսափելիության պարագայում անհրաժեշտ է հնարավորինս տեղայնացնել պայքարը և չընդլայնել գործողությունները բռնկումից դուրս տարածքներում:

5.2.2. Ողնաշարավոր կենդանիներ

Ձկներ

Նկարագրություն: Ճամբարակի անտառտնտեսության տարածքով անցնող Գետիկ գետում և նրա աջակողմյան՝ Մշակաց, Թևգետ, ձախակողմյան՝ Կաղամբաջուր, Քարագետ, Աղաքար, Գեղաձոր, Խորաձոր, Կարմրաջուր, Բարեբեր վտակներում հանդիպում են 9 ձկնատեսակներ:

Գետիկ գետում հանդիպում են 4 հիմնական ձկնատեսակ՝ կարմրախայտ (*Salmo trutta*), Կուրի բեղաձուկը (*Barbus lacerta cyri*), արևելյան տառեխիկը (*Alburnoides bipunctatus*) և կողակ (*Capoeta sp.*): Ընդ որում, կարմրախայտը, ինչպես մյուս

գետերում, հանդիպում է այդ գետի վերին ու միջին հոսանքներում, Կուրի բեղաձուկը և արևելյան տառեխիկը՝ հիմնականում միջին և ստորին հոսանքում, կողակը՝ ստորին և, երբեմն, միջին հոսանքում: Կուրի բեղաձկան տարածման շրջանում հանդիպում է նաև արևելյան տառեխիկը: Գետիկի ստորին հոսանքում հայտնաբերվել է նաև Կուրի լերկաձուկը (*Oxynemacheilus brandti*): Հնարավոր են նաև Աղստևում բնակվող ձկների մեծ մասի բնակությունը Գետիկի ստորին հոսանքում:

- Կարմրախայտ (*Salmo trutta fario* L.)՝ հազվադեպ տեսակ է, քանակը շարունակում է նվազել:
- Արևելյան տառեխիկ (*Alburnoides bipunctatus Filippi*), տեղաբնակ տեսակ է, առավել տարածված ու բազմաքանակ ձկնատեսակ:
- Կովկասյան թեփուղ (*Leuciscus cephalus orientalis Nordmann*), տեղաբնակ տեսակ է, սիրողական ձկնորսության օբյեկտ:
- Արծաթափայլ կարաս (*Carassius auratus gibelio* (Bloch), կլիմայավարժված տեսակ է, սիրողական ձկնորսության օբյեկտ:
- Կուրի սպիտակաձուկ (*Alburnus filippii Kessler*)՝ տեղաբնակ տեսակ է, ձկնորսական նշանակություն չունի:
- Կուրի բեղաձուկ (*Barbus lacerta cyri Filippi*), տեղաբնակ տեսակ է, սիրողական ձկնորսության օբյեկտ:
- Կուրի կողակ (*Capoeta capoeta capoeta* Gueldenstaedt), տեղաբնակ տեսակ է, սիրողական ձկնորսության օբյեկտ:
- Կուրի լերկաձուկը (*Oxynemacheilus brandti*) տեղաբնակ տեսակ է, ձկնորսական նշանակություն չունի:
- Կովկասյան լերկաձուկ (*Barbatula brandli* (Kessler))՝ Հազվադեպ հանդիպող տեսակ

Հիմնական վտանգներ

Անտառտնտեսության ձկնաշխարհի վրա բացասական ազդեցություն ունեցող հիմնական գործոններից են գետերի աղտոտումը կենցաղային և արդյունաբերական թափոններով, առանց ձկնանցումների և ձկնապաշտպան կառույցների ջրային ռեսուրսների օգտագործումը (ՓՀԷԿ), ինչպես նաև օտարածին (ինվազիվ) տեսակների ճնշումը տեղական (աբորիգեն) ձկնատեսակների վրա:

Վերջին տարիներին ձկնային տնտեսություններում բուծվող այլ ձկնատեսակների ի հայտ գալը անտառտնտեսության տարածքում գտնվող ջրակալների իխտիոֆաունայի վրա լուրջ բացասական ազդեցություն կարող է թողնել:

Ինչպես Հանրապետության այլ վայրերում ՀՀ գեղարքունիքի մարզում և մասնավորապես անտառտնտեսության տարածքում գոյություն ունեցող գետերում ձկնաշխարհի վրա էական բացասական ազդեցություն է թողնում ապօրինի ձկնորսությունը: Կան փոքրիկ լեռնային գետակներ, որտեղ հավանաբար չթույլատրված միջոցներով ձկնորսության հետևանքով ընդհանրապես վերացել է կարմրախայտը:

Առաջարկվող միջոցառումները

Անհրաժեշտ է խիստ վերահսկողություն սահմանել անտառտնտեսության տարածքում գտնվող բնակելի տների, առողջարանների և զբոսաշրջության նպատակով ստեղծված ենթակառուցվածքների գործունեության վրա, կանխարգելել

դրանց կողմից գետերի և այլ մակերևույթային ջրահոսքերի աղտոտումը կյուղաջրերով և կենցաղային թափոններով:

Անհրաժեշտ է ուսունմասիրել և հսկողության տակ պահել գետերի բնականոն հոսքը խոչընդոտող կառույցները, իսկ անհրաժեշտության դեպքում դրանք ապամոնտաժել կամ կառուցել ձկնանցումների համար անհրաժեշտ շինություններ, որոնք կապահովեն ձկների անարգել տեղաշարժվելը, ձկնկիթ դնելն ու բեղմնավորվելը:

Անհրաժեշտ է ուսունմասիրել և հսկողության տակ պահել անտառտնտեսության տարածքում և պահպանման գոտում գործող ձկնային տնտեսությունները: Իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ ինվազիվ (օտարածին) տեսակների մուտքը գետային ցանց բացառելու նպատակով:

Անհրաժեշտ է ուժեղացնել հսկողությունը չթույլատրված միջոցներով (ցանցեր, էլեկտրական հոսանքով բռնիչներ, պայթուցիկ նյութեր, քլոր և այլն) ապօրինի ձկնորսությունը կանխարգելելու նպատակով:

Որոշ գետերում կարելի է կազմակերպել կարմրախայտի (*Salmo trutta*) վերաբնակեցման (ռեինտրոդուկցիա) աշխատանքներ, որի դրական փորձի օրինակներ արդեն իսկ կան մարզի մի քանի գետերում:

5.2.3. Երկկենցաղներ և սողուններ

Նկարագրություն: Անտառտնտեսության տարածքում գրանցվել է երկկենցաղների 4 (այդ թվում գորտերի 2, ծառագորտերի՝ 1, դողոշների՝ 1 տեսակ), և սողունների 19 տեսակ (որոնց թվում մողեսների 12 և օձերի 7 տեսակ):

Հայտնաբերված երկկենցաղներից որևէ տեսակ գրանցված չէ Հայաստանի Կարմիր գրքում, դրանք բոլորն ընդգրկված են ԲՊՄՄ դասակարգիչների կիրառմամբ գնահատվել են «Քիչ մտահոգող տեսակ» (LC) կարգավիճակով: Ճամբարակի անտառտնտեսությունում այդ տեսակների գոյությանը սպառնող վտանգներ չեն հայտնաբերվել:

Սողուններից ՀՀ Կարմիր գրքում գրանցված են մողեսների 3 և օձերի՝ 2 տեսակ: Բոլոր 19 տեսակները գնահատված են ԲՊՄՄ դասակարգիչների կիրառմամբ, որոնցից 5 ունեն այս կամ այն վտանգման կարգավիճակ: Պահպանության կարիք ունեն հետևյալ վտանգված տեսակները՝ Ռոստոմբեկովի մողես (*Darevksia rostombekowi* (Darevsky, 1957) -EN B2ab(ii,iii), մարգագետնային մողես (*Darevskia praticola* (Eversmann, 1834) - VU B1ab(iii)+2a, սպիտակափոր մողես - (*Darevskia unisexualis*) (VU B1a), անդրկովկասյան սահնօձ - (*Zamenis hohenackeri*, Strauch, 1873) - VU B1ab (iii) հայկական լեռնատափաստանային իժ - (*Vipera (Pelias) eriwanensis*) (VU B1ab(iii,v):

Դիտարկված տեսակների զգալի մասի ապրելավայրերը տեղակայված են ենթակառուցվածքի օբյեկտների (ճանապարհների) տարածքներում: Անտառային գոտում սողունները սակավաթիվ են, դրանք առավել հաճախ հանդիպում են համեմատաբար չոր քարերով պատված տարածքներում և ժայռային մերկացումների հատվածներում:

Հիմնական վտանգներ: Սողունների բազմազանության վրա ազդող հիմնական վտանգներն են.

- Մարդու գործունեության արդյունքում (հատումներ) կենսամիջավայրերի փոփոխություն և բնական ապրելավայրերի (բիոտոպների) ոչնչացում:
- Կենսամիջավայրի աղտոտում օրգանական և անօրգանական թափոններով:

- Անօրինական որսը՝ սիրող կոլեկցիոներների կողմից:

Պահպանություն: Անհրաժեշտ է իրականացնել հանրային իրազեկման քարոզարշավներ, մշակել և հրատարակել բնապահպանական բրոշյուրներ և տարածել համայնքներում, ներկայացնել այդ տեսակների կարևորությունը և նշանակությունը էկոտուրիզմի հետ կապված գործողությունների ընթացքում և այլն:

5.2.4. Թռչուններ

Նկարագրություն: Անտառտնտեսության սաղարթավոր անտառների, լեռնային մարգագետինների, ինչպես նաև կտրտված ռելիեֆի և հարուստ ժայռաբեկորների առկայությունը նպաստավոր են թռչունների ապրելամիջավայրի և բազմազանության համար:

Ընդհանուր առմամբ, տարածաշրջանում հանդիպում են թռչունների մոտ 260 տեսակ, որոնց մոտ 50%-ը բնադրում են այդ տարածքներում, իսկ մնացածը հանդիպում են միայն չուի ժամանակ և ձմեռում են: Մոտ 60 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում, դրանք բոլորը գնահատված են ԲՊՄՄ դասակարգիչների կիրառմամբ: Անտառտնտեսության տարածքում տվյալները հավաքվել են գրական աղբյուրներից և դաշտային դիտարկումների արդյունքում: Ստացված տվյալների համաձայն անտառտնտեսության թռչնաշխարհը ներկայացված է մոտ 120 տեսակով, որոնց մեծամասնությունն անտառային թռչուններ են՝ կեռնեխներ, երաշտահավեր, փայտփորեր և այլն, սակայն ժայռային գոյացություններում և քարացրոններում հանդիպում են նաև ժայռային թռչնատեսակներ, օրինակ՝ գիշանգղը և սապսանը, իսկ բաց տարածքներում՝ մարգագետնային և տափաստանային տեսակներ: Գետիկ գետի գետահովտում երբեմն հանդիպում են տարբեր կտցարներ, որորներ, բադեր, տառեղներ և այլն:

Անտառտնտեսության թռչնաֆաունայի 14 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում՝ վտանգվածության տարբեր կարգավիճակով, այդ թվում՝ գառնանգղ (մորուքավոր անգղ) - *Gypaetus barbatus*, Linnaeus, 1758 - VU D1, գիշանգղ *Neophron percnopterus* Linnaeus, 1758 - EN A2bcde+3bcde+4bcde, սպիտակագլուխ անգղ - *Gyps fulvus* (Hablizl, 1783) - VU D1, փոքր ենթարծիվ - *Aquila pomarina* C.L. Brehm, 1831 - VU D1, տափաստանային արծիվ - *Aquila nipalensis*, Hodgson, 1833 - VU C2a(i), քարարծիվ - *Aquila chrysaetos*, Linnaeus, 1758 - VU D1, գաճաճ արծիվ - *Hieraetus pennatus*, J.F. Gmelin, 1788 - VU D1, ցախաքլորավորս, - *Accipiter gentilis* (Linnaeus, 1758) - VU B1ab(iii)+2ab(iii); D1, գեղանի կռունկ - *Anthropoides virgo*, Linnaeus, 1758 - VU B1ab(iii)+2ab(iii), սապսան - *Falco peregrinus*, Tunstall, 1771 - VU D1, մարգահավ - *Crex crex* (Linnaeus, 1758) - VUB1ab(iii)+2ab(iii), սև փայտփոր - *Dryocopus martius*, Linnaeus, 1758 - VU D1, կիսասպիտակավիզ ճանճորս- *Ficedula semitorquata* (Homeyer, 1885) - DD:

Հիմնական վտանգներ: Թռչունների բնադրավայրերի ոչնչացումն առաջին հերթին պայմանավորված է ինտենսիվ անտառահատումներով: Հասուն ծառերի հատումը խոչընդոտում է մեծ գիշատիչ թռչունների բնադրմանը: Նմանապես, մահացած փչակավոր ծառերի հատումը բացասաբար է ազդում փչակներում բազմացող հազվագյուտ տեսակների վրա: Գարնանային ու ամառային անտառահատումը խոչընդոտում է գիշատիչ և այլ մեծ տեսակի թռչունների բազմացմանը, որոնք առավել զգայուն են անհանգստության հանդեպ:

Վտանգ է ներկայացնում նաև որսագողությունն ու թռչունների հատուկ տեսակների, հատկապես հավազգիների (մոխրագույն կաքավ, լոր) ու խոշոր գիշատիչ թռչունների (մասնավորապես անգղներ) ուղղակի հետապնդումը և որսը ապօրինի առևտրի նպատակով:

Պահպանություն: Պահպանության կարիք ունեն ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակները: Դեգրադացված անտառների վերականգնումը թռչնաֆաունայի վիճակի բարելավման կարևոր միջոցառումներից է:

5.2.5. Կաթնասուններ

Նկարագրություն: Ճամբարակի տարածաշրջանում բնակվող կաթնասունները բնորոշ են Հայաստանի լայնատերև անտառներին: Բացի դրանից, որոշ տեսակներ կապված են անտառից վերև գտնվող լեռնային մարգագետինների և տարբեր բարձրություններում նեղ տարածում ունեցող քարքարոտ տեղամասերի հետ:

Հիմք ընդունելով գրականության տվյալները, բնակչության բանավոր հաղորդած տվյալները և անտառտնտեսությունների աշխատողների տվյալները, ինչպես նաև անհատական դիտարկումները (ոտնահետքերի կամ կենսակերպի հետքերի դիտարկումները) անտառտնտեսության տարածքում հայտնաբերվել է 43 տեսակի կաթնասուններ:

Գիշատիչներից տարածքում առավել հանդիպում են աղվեսը և շնագայլը: Սմբակավորներից լայնատերև անտառային վայրերում հանդիպում է այծյամը: Աքիսանմաններից հաճախ են հանդիպում գորշուկը, աքիսը և կզաքիսը:

Հայաստանում բնակվող ձեռնաթևավորների 30 տեսակներից 9 տեսակը հայտնաբերվել է ուսումնասիրվող տարածքում, որոնցից 2-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում:

Կրծողների ֆաունայում գերակշռում են 2 տեսակի անտառային մկներ, որոնցից հաճախ բռնվել է *Apodemus ponticus (flavicollis)*: Վերջինս նշվում է ինչպես բաց, այնպես էլ անտառային տարածքների համար: Դաղստանյան դաշտամուկը բռնվել է անտառի և մարգագետնի սահմանին, ավելի հազվագյուտ են թփուտային դաշտամուկը և սովորական դաշտամուկը: Լայնատերև անտառային հատվածում հաճախ են սովորական պարսկական սկյուռը, մեծ քնամուկը, ավելի քիչ է հանդիպում անտառային քնամուկը:

Միջատակերներից հարկ է առանձնացնել Շելկովնիկովի կուտորան, որը բնակվում է գետակների ափերին, սպիտակափոր ոգնին և փոքր խլուրդը:

Անտառտնտեսությունում հանդիպող կաթնասուններից 7 տեսակը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում՝ վտանգվածության տարբեր կարգավիճակով: Դրանք են՝ Շելկովնիկովի կուտորան - *Neomys schelkovnikovi* Sat., 1913 - EN B1a+2a, ասիական լայնականջ չղջիկը - *Barbastella leucomelas* (Cretzschmar, 1826) - VU B1ab(iii), գորշ ականջեղը - *Plecotus auritus* L., 1758 - VU B1a, ջրասամույրը - *Lutra lutra* (Linnaeus, 1758) - EN D, գորշ արջը - *Ursus arctos* Linnaeus, 1758 VU B1 b(iii), անտառակատուն - *Felis silvestris* Schreber, 1777 VU B1ab(iii):

Հիմնական վտանգներ: Անկանոն ինտենսիվ անտառհատումները շարունակում են մնալ տեսակների ապրելավայրերի քայքայման և դրանց վիճակի վատացման հիմնական պատճառը: Վտանգ է ներկայացնում նաև ապօրինի որսը:

Պահպանություն: Պահպանության կարիք ունեն Կարմիր գրքում գրանցված տեսակները:

Վտանգված տեսակներից պետք է հատուկ ուշադրություն դարձնել ջրասամույրի (*Lutra lutra*) պահպանությանը: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել տեսակի ապրելավայրերի դաշտային ուսունասիրություն և մոնիթորինգ:

Դեգրադացված անտառների վերականգնումը տեսակների վիճակի բարելավման կարևոր միջոցառումներից է:

5.3. «Գետիկի» պետական արգելավայր

Ընդանուր տեղեկություններ

«Գետիկի» պետական արգելավայրը ստեղծվել է ՀՍՍՀ ՄՍ 1971 թ. ապրիլի 19 թիվ 212 հրահանգով, գտնվում է Աղստև գետի աջափնյա վտակ՝ Գետիկ գետի ավազանում, Միփորի լեռների հարավային լանջերին, 1500-2700մ բարձրության, 5728հա տարածքի վրա՝ վայրի կենդանիների պահպանության նպատակով: Արգելավայրի կայուն կառավարումն ու միջոցառումներ իրականացնելու համար հիմք է ընդունվել ԱԺ կողմից ընդունված 2006թ. նոյեմբերի 27-ին ընդունված ԲՀՊՏ-ների մասին օրենքը:

Արգելավայրի ստեղծման վերաբերյալ արխիվային քարտեզագրական նյութերի և ստեղծման նպատակին համապատասխան տարածքային սահմանների ուսումնասիրությունից պարզվեց, որ արգելավայրի ընդհանուր մակերեսը կազմում է 4277,8հա, որից ընդամենը 222,8 հեկտարն է մտնում Ճամբարակի անտառտնտեսության ներկայիս ճշտված սահմանների մեջ, որից 200,5հա-ն է անտառածածկ: Նշված տարածքն ամբողջությամբ դասվել է բնապահպանական բարձրարժեք անտառների 1.1 ենթատիպի դասին:

Արգելավայրի անտառածածկի միջին կազմը հետևյալն է՝ 7,8կաղնի, 1,3բոխի, 0,3հաճարի, 0,3թխկի, 0,2հացի, 0,1կեչի: Միջին տարիքը 81 է, միջին լրիվությունը՝ 0,53, բունիտետը՝ 4,8, 1 հա անտառածածկ մակերեսի միջին պաշարը՝ 80մ³, իսկ 1 հա անտառածածկի միջին աճը՝ 1մ³:

Արգելավայրի անտառգնահատման մեծություններն ավելի մանրամասնորեն ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

Աղյուսակ 22. Գետիկի արգելավայրի հողատեսքերը

№	Գործառնական նշանակությունը	Սեփականության ձևը	Մակերեսը, հա
1.	Անտառային հողեր	պետական	222,8
1.1.	Անտառածածկ	պետական	200,5
2.	Վարելահող	պետական	32,2
3.	Խոտհարք	պետական	69,8
4.	Արոտավայր	պետական	3685,8
5.	Այլ գյուղատնտեսական հողեր	պետական	252,3
6.	Գյուղատնտեսական արտադրական	պետական	4,4
7.	Դաշտային ճանապարհ	պետական	8,8
8.	Ջրանցքներ	պետական	0,02
9.	Գերեզմանոց	պետական	1,7
Ընդամենը			4277.8

Աղյուսակ 23. Արգելավայրի անտառածածկի բաշխվածությունն ըստ լրիվության

№	Գերակշռող ծառատեսակը	Տարին	Լրիվությունը								Ընդ.	Միջին
			0,3	0,4	0,5	0,6	0,7	0,8	0,9	1,0		
1.	Կաղնի	2021	19,8	15,5	16,0	21,6	8,3	6,5			87,7	0,50

2.	Կաղնի ցածրաբուն	2021	23,4	5,9	18,2	6,8	46,8				101,1	0,55
3.	Հաճարենի	2021		4,1							4,1	0,40
4.	Բոխի ցածրաբուն	2021					6,2				6,2	0,70
5.	Հացի	2021			1,4						1,4	0,50
Ընդամենը		2021	43,2	25,5	35,6	28,4	61,3	6,5			200,5	0,53

Աղյուսակ 24. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի

№	Գերակշռող ծառատեսակը	Բոնիտետային դասեր							Միջին բոնիտետ
		1	2	3	4	5	5ա	Ընդ. հա	
1.	Կաղնի				56.0	26.1	5.6	87.7	4.4
2.	Կաղնի ցածրաբուն				4.1	88.5	8.5	101.1	5.0
3.	Հաճարենի					4.1		4.1	5.0
4.	Բոխի ցածրաբուն					6.2		6.2	5.0
5.	Հացի				1.4			1.4	4.0
Ընդամենը					61.5	124.9	14.1	200.5	4.7

Աղյուսակ 25. Տեղեկագիր անտառզնահատման միջին ցուցանիշների՝ ըստ գերակշռող ծառատեսակների

№	Գերակշռող ծառատեսակը	Տարիներ	Գնահատման միջին ցուցանիշներ					Ծառուտի միջին կազմը
			Մտրիքը	Բոնիտետի դասը	Միջին բոնիտետը	1 հա անտառածածկ մակերեսի միջին արտադր. մ ³	Պաշարի 1 հա անտառածածկի միջին անոթ	
1.	Կաղնի	2021	89	4.4	0.50	90	1.01	8.1Կ 1.2Բ 0.5Հ 0.2Թխ 0.1Հց
2.	Կաղնի ցածրաբուն	2021	75	5.0	0.55	73	0.97	7.9Կց 1.0Բց 0.4Թխ 0.2Բ 0.2Հց 0.3Կչ
3.	Հաճարենի	2021	80	5.0	0.40	52	0.65	7.0Հ 2.0Թխ 1.0Կց
4.	Բոխի ցածրաբուն	2021	60	5.0	0.70	70	1.17	6.0Բց 4.0Կց
5.	Հացի	2021	60	4.0	0.50	43	0.72	8.0Հց 1.0Կ 1.0Թխ
Ընդամենը		2021	81	4.8	0.53	80	0.99	4.0Կ 3.8Կց 0.7Բ 0.6Բց 0.3Հ 0.3Թխ 0.2Հց 0.1Կչ

Արգելավայրի ճշտված սահմաններով գործունեության հիմնական նպատակը արգելավայրի տարածքի էտալոնային, գիտական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող բնական համակարգերի և դրանց բաղադրիչների, այդ թվում այծյամի, գորշ արջի, վայրի խոզի, կովկասյան մարեհավի և հազվագյուտ այլ կենդանատեսակների պահպանության, բնական վերարտադրության և օգտագործման ապահովումն է:

Արգելավայրի տարածքում հանդիպում են 4 երկկենցաղների, 11 սողունների (որոնցից 2-ը ՀՀ Կարմիր գրքում), 130 թռչունների (որոնցից 4-ը ՀՀ Կարմիր գրքում), 7 կաթնասունների տեսակներ:

Արգելավայրի բուսականության հիմնական տիպերը կաղնու անտառները (*Quercus macranthera*) և ենթալպյան մարգագետիններն են, շատ փոքր տարածքներ ծածկված են հաճարենու ծառուտներով: Անտառային բուսականության վերին սահմանին

հանդիպում են ծոված բներով կեչու ծառուտներ՝ կեչի ելունդավոր (*Betula pendula*) և կեչի Լիտվինովի (*B. litwinowii*) տեսակները, որոնց ուղեկցում են բարձրլեռնյակովկասյան թխկին (*Acer trautvetteri*), սովորական արոսենին (*Sorbus aucuparia*), ուռենի այծուռենի (*Salix caprea*) տեսակները: Անտառում հանդիպում են կենի հատապտուղային (*Taxus baccata*) տեսակի առանձնյակներ: Ենթալայան մարգագետիններն օգտագործվում են որպես արոտավայր, այդ մարգագետիններում գերակշռում են ողնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), սիզախոտ սիզախոտանման (*Phleum phleoides*) և որոշ այլ խոտաբույսեր: Ինչպես միշտ անտառներում աճում են տարբեր խոլորձներ՝ եղբորոսին կարմիր (*Cephalanthera rubra*), խոլորձ կապիկի (*Orchis simia*), թիթռնկախոլորձ կանաչածաղիկ (*Platanthera chlorantha*), թռչնաբուն իսկական (*Neottia nidus-avis*) և այլն:

Արգելավայրի ֆլորան ներկայացված է 382 անոթավոր բույսերի տեսակներով: Հայաստանի Կարմիր գրքում ընգրկված է միայն կենի հատապտուղային (*Taxus baccata* (VU) տեսակը:

Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակներից այստեղից հայտնի են միայն 3-ը, այդ թվում Հայաստանի էնդեմիկներ կիսափայլ երկարաբեղիկը (*Dorcadion semilucens*) (EN), որը մեր երկրի այլ ԲՀՊՏ-ներում չի պահպանվում, Հայկական ծաղկեփոշեկերը (*Isomira armena*) (EN), ինչպես նաև Բերնի կոնվենցիայի երկրորդ հավելվածում գրանցված Մնեմոզինյան կամ սև ապոլոնը (*Parnassius mnemosyne rjabovi*) (VU):

Տարածքից հայտնի են մի շարք նեղ տարածվածություն ունեցող Կովկասյան տարածաշրջանի և Անդրկովկասի էնդեմիկներ՝ գնայուկ բզեզներ Կալլեյի (*Carabus calleyi*), թզուկ (*Carabus pumilio*), փոփոխական (*Carabus varians*) և մաղաթև (*Carabus cribratus*) ցայտագնայուկներ, ոսկեաղնձափայլ գնայուկը (*Zabrus aurychalceus*), ինչպես նաև հազնված երկարաբեղիկը (*Dorcadion indutum*):

Արգելավայրում հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ՝ կանաչ դողոշը (*Bufo viridis*), սովորական ծառագորտը (*Hyla arborea schelkownikowi*), լճագորտը (*Pelophylax ridibundus*) և փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*):

Սողուններից հանդիպում են անտառային էկոհամակարգերին և ենթալայան մարգագետիններին բնորոշ 11 տեսակներ, որոնցից կարելի է նշել ՀՀ Կարմիր գրքում գրանցված մարգագետնային մողեսին (*Darevskia praticola*) (VU), և Ռոստոմբեկովի մողեսին (*Darevskia rostombekovi*) (EN): Հնարավոր է նաև Սպիտակափոր մողեսի, - *Darevskia unisexualis* (VU) հանդիպման հավանականությունը: Քարացրոններով ծածկված լեռնալանջերին հանդիպում է նաև հայկական լեռնատափաստանային իժը - *Vipera (Pelias) eriwanensis*:

Արգելավայրի տարածքում տարվա տարբեր սեզոններին նշվել են 130 տեսակի թռչուններ: Դրանցից առավել հետաքրքիրներից են այդտեղ բնադրվող ՀՀ Կարմիր գրքում գրանցված գառնանգղը (մորուքավոր անգղ) - *Gypaetus barbatus* (VU), սպիտակագլուխ անգղ - *Gyps fulvus* (VU), օձակեր արծիվը (*Circus gallicus*) (VU), ցախաքլորավորսը, - *Accipiter gentilis* (VU), փոքր ենթարծիվը - (*Aquila pomarina*) (VU), տափաստանային արծիվը - (*Aquila nipalensis*) (VU), գաճաճ արծիվ - (*Hieraetus pennatus*) (VU), սապսան - *Falco peregrinus*, (VU), սև փայտփորը (*Dryocopus martius*) (VU), փոքր ենթարծիվը (*Aquila pomarina*) (VU), վայրի հնդկահավը (Ուլար), - *Tetraogallus caspius* (VU), ինչպես նաև այստեղ հանդիպող Բնության Պահպանության

Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակում գրանցված գիշանգը (Neophron percnopterus) (EN) և կիսասպիտակավիզ ճանճորսը (Ficedula semitorquata) (DD):

Կաթնասուններից հանդիպում են գորշ արջը (Ursus arctos syriacus), լուսանը (Felis lynx), անտառային կատուն (Felis silvestris caucasica), այծյամը (Capreolus capreolus), վայրի խոզը (Sus scrofa), գայլը (Canis lupus), աղվեսը (Vulpes vulpes), գորշուկը (Meles meles), եվրոպական նապաստակը (Lepus europaeus):

5.4. Անտառային տնտեսության վարման հիմնական սկզբունքները

Անտառային էկոհամակարգերի զարգացման բնականոն հաշվեկշիռն ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով անտառկազմող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկությունները, ներկա անտառշինությունը իրականացվել է հիմք ընդունելով հատման հասակների հետևյալ դասակարգումն՝ ըստ 2005թ. ընդունված անտառային օրենսգրքի (աղյուսակ 27):

Աղյուսակ 26. Անտառի պաշտպանական կատեգորիաները և ըստ գերակշռող ծառատեսակների հատման տարիքները

Ծառատեսակի անվանումը	Հասակային դասի տևողությունը	Անտառի կատեգորիան ըստ նշանակության		
		Արտադրական	Պաշտպանական	Հատուկ
1. Սոճի	20	121	141	161
2. Կաղնի սերմնային	20	161	181	201
3. Հաճարի	20	141	161	181
4. Հացի, թեղի, թխկի	20	121	141	161
5. Ընկուզենի հունական	20	141	161	181
6. Կաղնի շիվային	10	61	71	81
7. Բոխի սերմնային	20	81	101	121
8. Լորենի	10	91	101	111
9. Կեչի	10	61	71	81
10. Կաղամախի, ուռենի, բարդի	10	41	51	71
11. Բոխի շիվային և այլ ցածրաբուն տեսակներ	10	61	71	81
12. Ղաժի	10	41	51	61
15. Տանձենի, Խնձորենի	20	101	121	141

5.5. Անտառաշահագործման և փայտամշակման բնութագիրը

Անտառտնտեսությունում հատուկ անտառպատրաստման արտադրություն և անտառհումքային բազաներ չկան:

Բնափայտի պատրաստումը կատարվում է՝

- հատման նշանակված կանգուն ծառերի հատում բենզաստղոցով,
- շինափայտի, վերամշակման ենթակա փայտի և վառելափայտի առանձնացում և կուտակում անտառում,
- անտառից տեղափոխում մեքենայի բարձման հարթակ տրակտորով կամ հատուկ տեխնիկայով,
- բարձումը և բեռնաթափումը կատարվում է ձեռքով:

Անտառտնտեսությունում անտառանյութի մթերումը կատարվում է պայմանագրային և ինքնապատրաստման եղանակով՝ գնորդների կողմից:

5.6. Բնափայտային անտառօգտագործում

Անտառտնտեսությունում բնափայտը մթերվում է անտառվերականգնման հատումներից (արտադրական նշանակության անտառներում), անտառի խնամքի և սանիտարական հատումներից և մասամբ այլ հատումներից:

2009-2019 թվականներին անտառտնտեսության կողմից պլանային հատումներից պատրաստվել և մթերվել է ընդհանուր հաշվով 15739,6մ³ անտառանյութ, այդ թվում 691,2մ³ շինափայտ:

5.6.1. Անտառվերականգնման հատումներ

Համաձայն անտառվերականգնման հատումների իրականացման կարգի, անտառվերականգնման հատումներ նշանակվում են բացառապես արտադրական նշանակության հասուն և գերհասուն անտառներում, որի նպատակն է անտառային պաշարների կայուն և արդյունավետ օգտագործման, անտառի ջրապահպան, ջրակարգավորիչ և պաշտպանական հատկանիշների ամրապնդման, անտառվերականգնման, տնտեսապես արժեքավոր ծառատեսակների վերարտադրության, անտառի արտադրողականության բարձրացման, բնական միջավայրի բարելավման ու պահպանման բարելավումը, ինչպես նաև հասուն և գերհասուն տարիքի ծառերի փոխարինումը երիտասարդ, բարձրարժեք ծառատեսակներով:

Անտառտնտեսության արտադրական նշանակության հասուն և գերհասուն տարիքային խմբի ծառուտների ընդհանուր մակերեսը կազմում է 238 հա, ընդհանուր պաշարը՝ 36043խտ.մ³, նույն թվում՝ կաղնին՝ 89,4հա, 8248մ³, հաճարին՝ 98,5հա, 19956մ³, բոխին՝ 25,5հա, 4028մ³, լորենին՝ 19,8հա, 3539մ³, տանձենին՝ 4,8հա, 302մ³: Նշված բոլոր տեսակների մոտ բացակայում են 0,7 լրիվության կամ 0,7-ից ցածր, սակայն 8000 և բարձր մատղաշի առկայությամբ ծառուտները:

Հիմք ընդունելով Հայաստանի անտառներում անտառվերականգնման հատումների իրականացման կարգը (ՀՀ կառավարության 07 սեպտեմբերի 2006թ. N:1412-Ն որոշում), հաշվի առնելով վերը նշվածը, անտառվերականգնման հատումներ չեն նախատեսվել:

5.6.2. Խնամքի հատումներ

Համաձայն անտառակառավարման պլանների մշակման հրահանգի՝ խնամքի հատումները նշանակվում են այն բոլոր ծառուտների համար, որտեղ, անտառագիտական հասկացողությամբ, խնամք է պահանջվում, ընդ որում խնամքի հատումները չեն նախատեսվում անտառվերականգնման հատումից մեկ հասակային դաս առաջ:

Ծառուտի տարիքից, լրիվությունից և ընդհանուր վիճակից կախված՝ նախագծվել են խնամքի հատումներ՝ հատման կրկնման հետևյալ հաճախականությամբ.

1. լուսավորման - մաքրման – հատման կրկնման հաճախականությունը 5 տարի,
2. նոսրացման – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի,
3. անցումային – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի:

2021-2030 թվականների համար խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 541,4հա անտառաձածկ հատվածներում ընդհանուր պաշարը 108170մ³, հատման

նախատեսած ընդհանուր պաշարը 16940մ³, այդ թվում իրացման ենթակա բնափայտը 14387մ³, որից շինափայտի պաշարը 5825մ³, վառելափայտը 8562մ³:

Նոսրացման հատումներ նախատեսվել են ընդհանուր 70,4 հեկտարի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 12060մ³, հատման նախատեսած պաշարը 2595խտմ³, այդ թվում իրացման ենթակա պաշարը 2207մ³, որից շինափայտի պաշարը 1034մ³, իսկ վառելափայտը 1173մ³:

Անցումային հատումներ նախատեսվել են ընդհանուր 471,0 հեկտարի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 96110մ³, հատման նախատեսած պաշարը 14345խտ մ³, այդ թվում իրացման ենթակա պաշարը 12180մ³, որից շինափայտի պաշարը 4791մ³, իսկ վառելափայտը 7389մ³ (աղյուսակ 28):

Աղյուսակ 27. Ամփոփագիր խնամքի հատումների հաշվարկային ծավալների

Անտառապետություն	Քարտկուսու №	Հատվածի №	Մակերեսը, հա	Կողմնադրություն, լանջի թեքությունը °	Ծովի մակերևույթից բարձրությունը, մ	Ծառատի կազմը	Քոնիստերը	Լրիվությունը	Տարիքը	Հատվածի պաշարը, մ ³	Հատման համար նախատեսված պաշարը, մ ³	Իրացվող		
												Ընդամենը	որից	
													Շինափայտ	Վառելափայտ
Նոսրացման հատում														
Կարմիրի	1	1	0,7	Հս 25	1730	5ս5տձ	3	1,0	40	110	25	21	6	15
	1	2	2,7	Հս 20	1720	9ս1տձ	2	0,7	40	430	43	40	20	20
	1	5	2,0	Հս-Ամ 30	1865	10ս	2	1,0	40	440	110	94	47	47
	1	7	1,8	Հս-Ալ 20	1780	10ս	2	0,8	30	220	44	37	15	22
	1	17	2,2	Հս-Ալ 25	1855	8ս2տձ	2	0,8	30	270	54	46	18	28
	2	6	9,1	Հս-Ալ 15	1980	10ս+կ	2	0,9	30	1280	320	270	110	160
	3	21	1,4	Հս-Ալ 5	1870	10կ	1	0,8	40	200	30	25	8	17
	4	6	5,4	Ամ 15	1900	10ս	2	0,8	35	680	100	85	43	42
	5	8	7,2	Ամ 15	2000	10ս	2	0,8	35	990	148	125	63	62
	5	14	8,4	Հվ-Ամ 20	2000	10ս	1	0,9	35	1710	340	290	145	145
	8	8	4,3	Ամ 20	2160	10ս	3	1,0	35	670	134	114	67	67
	8	9	2,8	Ալ 20	2150	6հգ2ս2տձ	2	0,8	30	170	26	22	9	13
	8	22	6,4	Հվ-Ամ 25	2100	10ս	2	1,0	40	1340	335	285	143	142
	8	23	5,5	Հվ-Ամ 25	2000	10ս	1	1,0	30	1250	312	265	106	159
	8	24	7,1	Հվ-Ամ 20	2075	10ս	2	1,0	40	1770	442	376	188	188
8	26	3,4	Հվ-Ամ 20	2100	10ս+տձ	3	1,0	35	530	132	112	56	56	
Ընդամենը			70,4							12060	2595	2207	1044	1183
Ամբողջը նոսրացման			70,4							12060	2595	2207	1034	1173
Անցումային հատում														
Կարմիրի	1	11	0,9	Հս-Ամ 25	1850	10կ+ս+տձ	4	0,8	45	70	11	9	4	5
	2	3	6,5	Հս-Ամ 25	2000	10ս	3	1,0	50	1360	340	290	145	145
	3	3	1,3	Հս-Ալ 10	1820	10տձ	1	0,9	45	250	50	42	10	32
	3	4	16,6	Հս-Ամ 20	1890	10ս	3	0,8	50	2770	415	352	211	141
	3	8	7,3	Հս 5	1840	7ս3տձ+հգ	1	1,0	45	1750	437	371	170	201
	3	9	3,0	Հս-Ալ 15	1770	10հգ+տձ	3	0,9	45	320	64	55	20	35
	3	10	5,5	Հս-Ալ 25	1915	10ս	2	1,0	45	1370	343	292	146	146
	3	11	7,4	Հս 25	1960	10ս	3	0,8	45	1120	224	190	114	76
	3	20	4,7	Հս-Ալ 15	1780	10տձ+հգ	3	0,9	50	550	138	117	47	70
	3	27	0,5	Հս-Ալ 20	1760	10ս	2	0,9	50	110	22	19	10	9
	4	3	1,8	Հս 20	1890	8տձ2ս	4	1,0	50	240	60	51	20	31
	4	7	4,0	Հվ-Ամ 10	1830	10ս	1	0,8	50	880	132	112	67	45
	4	11	3,4	Ամ 20	1870	10ս	2	0,8	45	620	93	79	47	32
	4	16	3,3	Հս-Ամ 25	1830	10ս	3	0,9	50	620	124	105	60	45
	4	17	5,7	Հվ-Ալ 10	1830	10ս	1	1,0	50	1570	470	400	200	200
	4	18	3,5	Հս-Ամ 10	1850	10ս	2	0,8	50	670	100	85	51	34
	5	9	12,0	Հվ-Ամ 10	1960	10ս	2	0,8	50	2140	320	270	162	108

Անտառավայրություն	Քարավայրու №	Հատվածի №	Մակերեսը, հա	Կողմնադրությունը, լանջի թեքությունը, °	Ծովի մակերևույթից բարձրությունը, մ	Ծառատի կազմը	Քնիտները	Լրիվությունը	Տարիքը	Հատվածի պաշարը, մ³	Հատման համար նախատեսված պաշարը, մ³	Իրացվող		
												Ընդամենը	որից	
													Շինարարական	Վառելարարական
	5	11	4,8	Հվ-Ամ 10	1920	10ս	3	0,9	50	890	222	190	105	85
	5	16	9,1	Ամ 20	1960	10ս	2	1,0	50	2400	720	610	335	275
	5	17	11,6	Հվ-Ամ 25	1870	10ս	2	0,9	50	2560	640	544	300	244
	5	21	1,2	Հվ-Ալ 10	1910	10ս	2	0,8	50	210	31	26	16	10
	6	3	0,8	Հս-Ալ 20	1960	8ս2խձ	4	0,7	50	80	8	6	4	2
	6	4	1,0	Հս-Ալ 15	1940	5տձ3ս2հց	3	0,8	50	130	20	17	10	7
	6	5	2,1	Հս-Ալ 10	1910	5ս3տձ2հց	2	1,0	50	480	144	122	61	61
	6	7	1,9	Հս-Ալ 15	1900	7ս3տձ	3	1,0	50	400	120	100	50	50
	6	11	0,6	Հս-Ալ 15	1930	10տձ	3	0,9	50	70	18	15	8	7
	6	12	2,9	Հս 15	1960	8հց2տձ	4	0,8	50	160	24	20	12	8
	8	5	2,6	Ամ 25	2150	10ս	2	1,0	50	760	228	194	97	97
	8	16	3,4	Ամ 25	2150	10	4	0,9	50	480	120	100	55	45
	8	17	1,8	Հվ-Ամ 20	2150	8ս2տձ	3	0,8	45	250	38	32	16	16
	8	18	3,3	Ամ 25	2150	10ս	3	0,9	50	670	168	142	78	64
	8	20	1,9	Հվ 20	2050	7տձ3ս	3	0,9	50	260	65	55	30	25
	8	21	2,2	Հվ 10	2030	7խձ2տձ1թխ	4	1,0	45	150	45	38	19	19
	8	30	1,8	Ամ 25	2175	10ս+տձ	3	0,9	50	340	85	72	40	32
	9	2	9,0	Ամ 20	1930	10ս	1	0,9	45	2140	535	455	250	205
	9	3	3,7	Ամ 20	1870	10ս	1	0,8	45	780	117	100	60	40
	Ընդամենը		153,1							29620	6691	5677	3030	2647
Գետիկ	12	23	4,1	Հս-Ամ 15	1440	8կ2բ	4	0,8	110	690	104	88	20	68
	12	34	2,2	Հս-Ամ 20	1470	10կ+բ	3	0,8	100	510	76	65	25	40
	12	49	1,2	Հս 10	1560	10կ+բ	3	0,8	110	280	42	36	15	21
	14	10	8,0	Հս-Ամ 30	1460	9կ1բ	4	0,8	80	1180	177	150	60	90
	14	15	2,7	Հս 25	1470	5կ3բ2լ	4	0,7	110	440	44	38	4	34
	14	21	4,4	Ամ 20	1640	8կ2բ	4	0,8	80	680	100	85	17	68
	14	24	1,7	Հս-Ամ 15	1660	9կ1հց	5	0,7	120	230	23	20	5	15
	16	9	7,5	Հս-Ամ 30	1430	4կ2հց2լ2բ	3	0,7	80	1280	128	109	30	79
	17	41	2,9	Հս-Ամ 25	1780	8կ1թխ1բ+տձ	4	0,7	90	430	43	37	15	22
	17	46	2,2	Հս 25	1500	4կ3լ3բ+թխ	4	0,7	80	300	30	25	8	17
	18	16	11,4	Հս 20	1800	5կ2հց2բ1լ	4	0,7	90	1860	186	158	58	100
	19	6	5,0	Հս-Ալ 25	1790	5հց1բ1կ+լ	4	0,7	70	580	58	50	20	30
	20	19	3,4	Հս 25	1760	6կ3բ1հց+լ	4	0,8	80	580	87	74	14	60
	20	22	10,9	Հս-Ալ 25	1910	5կ4բ1թխ	4	0,7	100	1620	162	138	28	110
	20	26	11,6	Հս-Ալ 25	1830	8կ2բ+թխ	4	0,7	90	1730	173	147	44	103
	21	29	0,6	Հս-Ամ 20	1750	10հց	3	0,8	50	50	8	7	3	4
	21	35	2,0	Հս 25	1610	8կ1լ1թխ+բ+հց	3	0,8	90	430	65	55	20	35
	22	9	4,6	Հս-Ամ 25	1700	4լ3կ3բ+հց	3	0,7	80	1450	145	123	30	93
	23	8	2,4	Հս-Ամ 25	1760	4լ3կ3բ 5լ5թխ	3	0,4 0,3	70 30	250 70	30	25	4	21
	24	17	5,0	Ալ 25	1750	7կ2բ1լ+թխ	4	0,7	90	820	82	70	25	45
	24	26	1,1	Հս-Ալ 25	1900	7կ2բ1լ	3	0,7	90	230	23	20	7	13
	24	32	19,2	Ամ 30	1900	6կ3բ1թխ	4	0,7	80	2730	273	232	50	182
	25	13	1,9	Հս-Ալ 30	1730	5բ3կ1լ1հց	4	0,8	70	140	21	18	-	18
25	19	15,2	Հս-Ամ 30	1870	7կ2բ1թխ	4	0,7	100	2580	258	220	50	170	
26	16	1,5	Հս-Ամ 25	1600	8կ2բ+հց+լ	3	0,7	90	290	29	25	5	20	
26	40	7,2	Հս-Ամ 30	1620	8կ2թխ1բ	4	0,7	90	1330	133	113	34	79	
	Ընդամենը		139,9							22760	2500	2128	591	1537
Դպրատան	2	6	11,1	Հս-Ալ 30	1440	8կ2բ+հց+թխ	4	0,7	100	1890	189	160	40	120
	7	19	5,5	Հս-Ալ 30	1700	7կ2հց1բ+թխ+հ	4	0,7	140	1280	128	110	44	66
	11	20	12,4	Ալ 25	1680	6կ4բ	4	0,7	120	2190	219	186	50	136
	22	3	9,8	Հս-Ամ 25	1840	5բ3կ1հ1թխ+կչ	4	0,7	80	1990	199	170	17	153
	23	7	5,8	Հս-Ալ 30	1900	5կ3բ2հ	4	0,7	120	990	99	84	16	68
	26	5	4,6	Հս-Ամ 20	1600	6բ3կ1հ+թխ	4	0,7	90	930	93	78	8	70
	26	10	17,0	Հվ-Ամ 30	1800	6բ2կ2հց+թխ+տձ	4	0,7	90	3600	360	306	130	176
	27	7	8,0	Ամ 25	1750	6հ3բ1կ+թխ+ս	3	0,7	90	1740	174	148	40	108
27	8	7,8	Հս-Ամ 25	1650	6բ3կ1հ+հց+թխ	4	0,7	90	1580	158	134	15	119	

Անտառավայրություն	Քառակուսու №	Հատվածի №	Մակերեսը, հա	Կողմնադրությունը, վանջի թեքությունը, °	Ծովի մակերևույթից բարձրությունը, մ	Ծառատի կազմը	Քոնիտետը	Լրիվությունը	Տարիքը	Հատվածի պաշարը, մ³	Հատման համար նախատեսված պաշարը, մ³	Իրացվող		
												Ընդամենը	որից	
													Շինամայր	Վառելիքայր
	27	15	6,9	Ամ 30	1875	7բ2կ1հ+թխ	3	0,7	70	1460	146	124	12	112
	28	6	8,2	Հս-Ամ 30	1810	7հ3կ 10բ	3	0,6 0,3	110 70	2140 750	400	340	50	290
	30	3	2,9	Հս-Ամ 25	1780	6կ3թխ1բ	3	0,7	100	590	59	50	15	35
	31	4	21,5	Հս-Ալ 25	1890	8հ2կ+թխ	3	0,7	90	5930	593	500	125	375
	33	6	0,9	Հս-Ալ 30	1800	6հ2կ2բ	4	0,7	50	80	8	7	2	5
	33	19	5,0	Հս-Ամ 25	2180	5հ4կ1թխ	5	0,7	110	730	73	62	20	42
	34	20	1,6	Հս-Ամ 30	2080	10հ Առ. ծառ Հ	3	0,8	80 180	370 30	94	80	25	55
	35	12	3,6	Հս-Ամ 15	1870	8հ2կ	3	0,8	90	970	145	123	37	86
	35	13	6,0	Հս-Ամ 30	1870	10հ Առ. ծառ 10հ	3	0,7	110 180	1830 120	300	255	80	175
	35	16	7,1	Հս-Ալ 30	2050	8հ2թխ+բ	3	0,8	120	2480	496	420	126	294
	35	17	16,5	Հս-Ամ 25	2040	9հ1թխ Առ. ծառ 10հ	2	0,7	90 160	5350 330	600	510	160	350
	35	18	10,0	Հս 25	2020	10հ Առ. ծառ 10հ	2	0,8	70 170	2970 200	500	425	125	300
	35	19	5,8	Հս-Ալ 20	2080	8հ2թխ	3	0,7	80	1210	121	103	33	70
	Ընդամենը		178,0							43730	5154	4375	1170	3205
Ամբողջը անցումային			471,0							96110	14345	12180	4791	7389
Ամբողջը խնամքի հատումներ			541,4							108170	16940	14387	5825	8562

5.6.3. Անտառպաշտպանական միջոցառումներ

ՀՀ անտառային օրենսգիրքը (2005թ), սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառկառավարման պլանների մշակման հրահանգը սահմանում են անտառպաշտպանական միջոցառումների իրավական ասպեկտները և իրականացման կարգը, համաձայն որոնց անտառպաշտպանական միջոցառումները ներառում է անտառապաթոլոգիական ուսումնասիրություններ, անտառի վնասատուների և հիվանդությունների կանխարգելում և սանիտարական հատումներ:

Սանիտարական հատումների անհրաժեշտությունը և ծավալները հիմնավորվում են անտառապաթոլոգիական ուսումնասիրությունների կամ մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների հիման վրա (ՀՀ անտառային օրենսգիրք, հոդված 25), ընդ որում անտառապաթոլոգիական ուսումնասիրությունները պլանավորվում և ֆինանսավորվում են անտառչինական ծրագրից առանձին, ինչը ճամբարակի անտառտնտեսությունում չի իրականացվել:

Համաձայն անտառային տնտեսության կառավարման պլանների հրահանգի (ՀՀ գյուղատնտեսության նախարարի 10.08.2005թ. N 130-Ն հրաման) գլուխ 8, կետ 2-ի, անտառի գույքագրման ժամանակ գնահատման քարտում նշվում է նաև վնասատուներով և հիվանդություններով ծառուտների կամ առանձին ծառերի վարակվածության աստիճանը, վնասված ծառերի պաշարը և տնտեսական միջոցառումները:

Հիմք ընդունելով նշվածը, գույքագրման ժամանակ առանձին հատվածներում հաշվարկել է՝ հիվանդ, չորացող և չորացած ծառերի ծավալները և սանիտարական հատումների անհրաժեշտությունը, ընդ որում սանիտարական հատումները կատարվում են անտառչինական սանիտարական վիճակի բարելավման, ինչպես նաև

վնասատուների և հիվանդությունների բացասական ազդեցության հետևանքով կենսունակությունը կորցրած կամ ցցաչոր և չորացող ծառերի հեռացման նպատակով: Ընտրովի սանիտարական հատումներն իրականացնելիս հատվում են նշված պատճառներով կենսունակությունը կորցրած առանձին ծառեր, ընդ որում վերջինի դեպքում չպետք է խախտվեն ծառուտի կենսունակությունը, կառուցվածքը, արտադրողականությունը և նպատակային գործառույթները:

Կարևոր հանգամանք է, որ գերհասուն և ցցաչոր ծառերը կենդանական աշխարհի համար մնալու միջավայր են հանդիսանում և կենսաբազմազանության պահպանության նպատակով հատման բոլոր տեսակների ժամանակ արմատի վրա թողնվում են գերհասուն և ցցաչոր փչակով ծառեր՝ 1 հա-ի հաշվով 2-5 մ³:

Գույքագրման արդյունքներով սանիտարական հատման նախատեսվել են բացառապես ցցաչոր, նույն թվում նաև սոճու ծառերը, ընդհանուր 1000խտ մ³, որից իրացման ենթակա պաշարը՝ 850խտ մ³, որից էլ շինափայտը՝ 180մ³ (աղյուսակ 29):

Աղյուսակ 28. Ամփոփագիր սանիտարական հատումների հաշվարկային ծավալների 2021 – 2030թթ

Անտառաբաժնություն	Քառակուսու №	Հատվածի №	Մակերեսը, հա	Կողմնորոշություն, լանջի թեքություն	ԾՄԲ, մ	Շարահարկը	Մատղաչի քանակությունը	Ծառուտի կազմը	Բունիտերը	Լրիվությունը	Տարիքը	Հատվածի պաշարը, մ ³	Հատման համար նախատեսվող պաշարը, մ ³	Իրացվող	որից	
															Շինափայտ	Վառելիփայտ
Դպրաբակի	11	25	18,0	Ալ 20	1620	1	3000/2	5կ2հց2թխ1բ Յցաչոր ծառ կ,թխ,բ	4	0,7	200	3690 400	500	425	100	325
	33	16	12,8	Հս-Ալ 25	1940	2	-	6հ2կ2թխ 10հ Յցաչոր ծառ Հ,կ,թխ	3	0,3 0,4	170 60	1510 1290 300	400	340	70	270
	34	19	5,1	Հս-Ալ 30	2070	1	2000/2	10հ 6հ2կ2թխ2կ1հց Յցաչոր ծառ Հ,կ,թխ	3	0,5	90 160	920 100 100	100	85	10	75
Ընդամենը			35,9									8310	1000	850	180	670

5.6.4. Նախագծված անտառօգտագործման ծավալներն ըստ հատման տեսակների

Ճամբարակի անտառտնտեսությունում նախատեսված բոլոր հատումների ընդհանուր ծավալը 577,3հա-ի վրա կազմում է 17940խտ մ³, այդ թվում իրացման ենթակա անտառանյութի պաշարը 15237մ³ է, որից շինափայտը՝ 6005մ³:

Ըստ հատման տեսակների՝ խնամքի հատումները կազմում են հատումներ նախատեսած մակերեսի 93,8%-ը և հատման նախատեսած պաշարի 92,9%-ը, իսկ սանիտարական հատումները ընդամենը 6,2% և 7,1%-ը:

Ընդհանուր անտառօգտագործման մակերեսների 38,7%-ը և հատման ենթակա պաշարների 51,8%-ը նախատեսվում է Կարմիրի անտառապետությունում, համապատասխանաբար 24,2% և 13,9%-ը՝ Գետիկի, և 37,1% և 34,3%-ը՝ Դպրաբակի անտառապետություններում (աղյուսակ 30,31):

Աղյուսակ 29. Ամփոփագիր անտառօգտագործման նախատեսած ծավալների ըստ հատման տեսակների 2021-2030թթ.

№	Հատման տեսակները	Անտառօգտագործման ծավալները					
		Մակերեսը հա/%	Հատվածներում ընդհանուր պաշարը	Հատման նախատեսած պաշարը, խտ.մ ³			
				Ընդհանուր	Այդ թվում իրացման ենթակա	որից	
					շինափայտ	վառելափայտ	
1	Խնամքի հատումներ	541,4	108170	16940	14387	5825	8562
		93,8	92,9	94,4	94,4	97,0	92,7
2	Սանիտարական հատումներ	35,9	8310	1000	850	180	670
		6,2	7,1	5,6	5,6	3,0	7,3
3	Ամբողջը	577,3	116480	17940	15237	6005	9232
		100	100	100	100	100	100

Աղյուսակ 30. Ամփոփագիր անտառպետությունների անտառօգտագործման նախատեսած ծավալների 2021-2030 թթ.

№	Անտառպետություններ	Անտառօգտագործման ծավալները					
		Մակերեսը, հա/%	Հատվածներում ընդհանուր պաշարը	Հատման նախատեսած պաշարը, խտ.մ ³			
				Ընդհանուր	Այդ թվում իրացման ենթակա	որից	
					շինափայտ	վառելափայտ	
1	Կարմիրի	223,5	41680	9286	7884	4064	3820
		38,7		51,8			
2	Գետիկի	139,9	22760	2500	2128	591	1537
		24,2		13,9			
3	Դպրաբակի	213,9	52040	6154	5225	1350	3875
		37,1		34,3			
4	Ամբողջը	577,3	116480	17940	15237	6005	9232
		100		100			

5.7. Ոչ բնափայտային անտառօգտագործում

Անտառկառավարման պլանում բնափայտային արտադրանքից զատ կարևորում է նաև անտառի ոչ բնափայտային արտադրանքը, որը ամրագրված է նաև Հայաստանի Անտառային Օրենսգրքում (2005թ): Համաձայն օրենսգրքի 35-րդ հոդվածի՝ անտառներում, բացի բնափայտի մթերումից, կարող են ի կատար ածվել հետևյալ անտառօգտագործման տեսակները.

- երկրորդական անտառանյութի (կոճղեր) մթերում
- կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, մեղվափեթակների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, հատապտղի, սնկերի, դեղաբույսերի և տեխնիկական հումքի հավաքում)
- կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման և օգտագործման նպատակներով անտառօգտագործում
- գիտահետազոտական նպատակներով անտառօգտագործում
- մշակութային-առողջարարական սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործում:

Նշված անտառօգտագործման ձևերից տեղի բնակչության համար առանձնակի կարևորվում է անտառի կողմնարդյունքը:

Անտառտնտեսության անտառներում պտուղ-հատապտուղները հիմնականում ստացվում են ենթանտառից, որի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով

անտառկառավարման պլանների մշակման հրահանգը, համաձայն որի, ենթանտառը որոշակի անտառամասում խտության աստիճանով դասակարգվում է՝

1. խիտ, երբ տարածքի 50 %-ից ավելին է ծածկված թփատեսակներով,
2. միջին խտության, երբ տարածքի 10-49%-ն է ծածկված թփատեսակներով,
3. նոսր, երբ տարածքի 10%-ից պակասն է ծածկված թփատեսակներով, որպես օրինաչափություն՝ ենթանտառը հիմնականում կազմավորված է թփերի խառը տեսակներով, իսկ մակերեսները գնահատվել են թփերի կազմում գերակշռող տեսակներով:

Գույքագրման ընթացքում հաշվարկվել և քարտեզագրվել են անտառային պտղատու և հատապտղային տեսակների տարածվածությունը և հաշվարկային բերքը՝ ըստ անտառպետությունների և հատվածների: Գնահատումը կատարվել է դաշտային ուսումնասիրության և փորձագիտային եզրակացության, ինչպես նաև անտառտնտեսության համապատասխան մասնագետների և պահաբաժինների անտառապահների հետ քննարկումների արդյունքներով, իսկ ավելի հավաստի արդյունքների ստացման համար կպահանջվի ևս 2-3 տարիների աշնանային ուսումնասիրություններ:

Դաշտային գույքագրման արդյունքներով՝ անտառային պտուղ-հատապտուղներից ակնկալվող հաշվարկային մոտավոր բերքը գնահատվել է 3231,6 հեկտարի վրա տարեկան 173310կգ, որում գերակշռում է անտառային տանձր՝ 92000կգ:

Հաշվարկային տնտեսական բերքի ընդհանուր քանակությունը թեև քիչ չէ, բայց անտառտնտեսության կողմից մեծ ծավալներով իրացումը իրատեսական չէ այն հիմնավորմամբ, որ անտառամերձ համայնքների բնակիչները օգտվում են ՀՀ անտառային օրենսգրքի 44-1 հոդվածով ընձեռնած իրավունքից՝ ազատորեն առանց որեւէ թույլտվության գտնվելու անտառներում՝ հանգստի և անձնական օգտագործման նպատակով վայրի պտուղ-հատապտուղներ հավաքելու համար, սակայն իրականում հավաքում են անձնական կարիքներից շատ ավելի, իսկ հաշվառումը գործնականում հնարավոր չէ իրականացնել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանիքի անդամները կարող են հավաքը իրականացնել տարբեր անտառամասերում (աղյուսակ 32, քարտեզ 18):

Աղյուսակ 31. Անտառտնտեսությունում պտուղ-հատապտուղների մակերեսների և պաշարի (հաշվարկային տնտեսական բերք) բաշխվածությունը

№	Պտուղ-հատապտուղներ	Անտառպետություն							
		Կարմիրի		Գետիկի		Դպրաբակի		Անտառտնտեսությունում	
		հա	կգ	հա	կգ	հա	կգ	հա	կգ
1	Ընկույզ/կանաչ	-	-	2,1	150	-	-	2,1	150
2	Մոշ	-	-	73,3	1100	123,3	1850	196,6	2950
3	Մոռ	16,5	100	147,4	1180	159,7	1280	323,6	2360
4	Մասուր	9,9	5500	1137,0	13000	1094,3	10700	2241,2	29200
5	Սալոր	5	350	-	-	-	-	5	350
6	Խնձոր	7,2	3800	26,8	11000	26,9	8500	60,9	23300
7	Տանձ	42,9	2500	38,3	75000	38,4	14500	119,6	92000
8	Սզնի	2,7	150	155,5	13200	52,9	7500	211,1	20850
9	Զկեռ	-	-	43,5	1300	28,0	850	71,5	2150
Ընդամենը		84.2	12400	1623.9	115930	1523.5	45180	3231,6	173310

Ճամբարակի անտառտնտեսության տարածքում հանդիպող ուտելի խոտաբույսերից շատերը վաղուց կիրառվում են մարդու կողմից:

Ուտելի և համեմունքային տեսակներին են պատկանում շուշան-բանջար պալարավոր, շուշան-բանջար ոսկեգոծ, սնդրիկ, ավելուկ գանգուր, եղինջ երկտուն և այլ խոտաբույսերը: Սրանք օգտագործվում են ինչպես հում, այնպես էլ վերամշակված ձևով՝ աղցանների, թթու-մարինադների, հրուշակեղենի, ոգելից խմիչքների, թեյերի, հյութերի և այլնի պատրաստման ժամանակ:

Բնակչության կողմից սննդի համար առավել օգտագործվող խոտատեսակների մոտավոր պաշարները քարտեզագրվել և գնահատվել են դաշտային ուսումնասիրությունների, փորձագիտական եզրակացության և համապատասխան անձանց, ընդհուպ բույսեր հավաքողների ու ճանապարհներին վաճառողների հետ քննարկումների հիման վրա: Արդյունքում ընդհանուր 3301,6հա տարածքներում գնահատվել է ընդհանուր 6192կգ մոտավոր բերք (աղյուսակ 33):

Աղյուսակ 32. Ճամբարակի անտառտնտեսության տարածքների ուտելի խոտաբույսերի պաշարները

№	Ուտելի խոտաբույսեր	Անտառպետություն							
		Կարմիրի		Գետիկի		Դպրաբակի		Ընդամենը	
		հա	կգ	հա	կգ	հա	կգ	հա	կգ
1	Շուշան	38,7	116	292,6	878	490,8	1472	822.1	2466
2	Սինդրիկ	-	-	535,8	1072	243,1	486	778.9	1558
3	Ծնեբեկ	-	-	8,5	26	-	-	8.5	26
4	Ավելուկ	25,8	129	14,6	73	25,8	129	66.2	331
5	Եղինջ	35,9	54	136,3	204	61,4	92	233.6	350
6	Սիբեխ	3,8	11	24,8	74	10,8	32	39.4	117
7	Բալդրդան	30,2	121	56,9	228	32,9	132	120	481
8	Ուրոց (չոր)	207,0	145	780,4	546	245,5	172	1232.9	863
Ընդամենը		341,4	576	1849,9	3101	1110	2515	3301,6	6192

5.8 Անտառվերականգնման միջոցառումներ

Ճամբարակի անտառտնտեսության ներկայիս սահմաններում անտառմշակույթների հիմնման աշխատանքներ իրականացվել են դեռևս նախորդ դարի 50-ական թվականներից:

1985թ. անտառշինությամբ անտառմշակույթների ընդհանուր մակերեսը գնահատվել է 845,2 հա, նույն թվում չմիակցված սաղարթով անտառմշակույթները՝ 350,5հա:

2006թ. գույքագրմամբ անտառմշակույթների ընդհանուր մակերեսը կազմել է 809,9հա, նույն թվում 613,8հա. անտառածածկի հաշվեկշռում, որից 65,2%-ը սոճու անտառմշակույթներն են, հացին 14%, տանձենին 11,1%, խնձորենին 6,7%, իսկ մնացած տեսակները միասին 3%: Գնահատվել է նաև 196,1հեկտարը չմիակցված սաղարթով անտառմշակույթներ: Միակցված սաղարթով անտառմշակույթների մակերեսներից վիճակը գնահատվել է լավ՝ 68,7հա (11,2%), բավարար՝ 389,1հա (63,4%) և անբավարար՝ 156,0հա (25,4%): Ընդհանուր անտառմշակույթների 73,3%-ը գտնվել է

Կարմիրի, 23,1%-ը Գետիկի և ընդամենը 3,6%-ը Դպրաբակի անտառապետություններում:

2021թ. գույքագրմամբ անտառմշակույթների ճշտված մակերեսը կազմել է 471,8հա, նույն թվում չմիակցված սաղարթով անտառմշակույթները՝ 17,2հա:

Անտառմշակույթների վիճակը գնահատվել է լավ՝ 106,2հա (22,5%), բավարար՝ 251,0հա (53,2%) և անբավարար՝ 114,6 հա (24,3%):

2006թ. կառավարման պլանով նախատեսված է եղել հաջորդող տասնամյակում անտառհիմնում ոչ անտառածածկ տարածքներում ընդհանուր 52,6հա, նույն թվում բացատներում 28,2հա, անթրոպոգեն նոսրուտներում՝ 24,6հա, ինչպես նաև ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտներում բնական վերականգնման օժանդակում 91,5 հեկտարի վրա: Նախատեսված էր նաև պահպանության տեսանկյունից խոցելի տարածքների ցանկապատում ընդհանուր 6170զծմ:

Անտառտնտեսությունում 2007-2021 թվականներին անտառմշակույթներ հիմնվել են ընդհանուր 44հա, նույն թվում՝

- 2007թ. սոճի - 10հա, կաղնի - 10հա,
- 2008թ. սոճի հացի և թխկի տեսակների հետ խառը տնկարկ - 5հա,
- 2014թ. սոճի - 5հա,
- 2017թ. հացի - 4հա,
- 2018թ. սոճի հացի և թխկի տեսակների հետ խառը տնկարկ - 5հա,
- 2020թ. սոճի հացի և խնձորենի տեսակների հետ խառը տնկարկ - 5հա:

Անտառտնտեսությունում մինչև 25° թեքության ոչ անտառածածկ տարածքները զբաղեցնում են ընդհանուր 707,1հա, նույն թվում անտառային բացատներն ու պարապուտ տարածքները զբաղեցնում են 558,3հա մակերես, նոսրուտները՝ 148,8հա, որտեղ հիմնականում իրականացվում են անտառմշակութային աշխատանքները: 30°-ից բարձր թեքություն ունեցող տարածքները թողնվել են բնական վերականգնման տակ (աղյուսակ 43):

Աղյուսակ 33. Ոչ անտառածածկ մակերեսների տեղաբաշխումն ըստ լանջի թեքության աստիճանի և միջին բոնիտետային դասի

Լանջի թեքությունը	Միջին բոնիտետը	Նոսրուտներ	Բացատներ և պարապուտներ	Ընդամենը
Մինչև 5°	3,2	0,6	13,6	14,2
6-10°	3,9	15,8	101,6	117,4
11-15°	3,7	34,6	101,6	136,2
16-20°	3,8	49,5	209,1	258,6
21-25°	4,1	48,3	132,4	180,7
26-30°	4,7	30,7	64,7	95,4
31-35°	4,8	42,9	44,6	87,5
36°-ից բարձր	5,0	22,9	10,0	32,9
Ամբողջը	4,1	245,3	677,6	922,9

2021-30 թվականների համար նախատեսվում են անտառհիմնման միջոցառումներ՝ ընդհանուր 514,6 հեկտարի վրա, նույն թվում անտառային բացատներում և ազատ տարածքներում (պարապուտ)՝ 272,3հա, հատված և չվերականգնված տարածքներում, ինչպես նաև անթրոպոգեն նոսրուտներում ընդհանուր 114,6հա:

Ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է բնական վերականգնման միջոցառումներ ընդամենը 103,9 հեկտարի վրա, հարթակների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքով:

Բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է 20000գծմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 3500 հեկտար անտառներում կկանխվի անասունների մուտքը, ինչն էլ կնպաստի բնական վերականգնմանը:

5.8.1. Անտառաճեցման պիտանելիության դասակարգում

Անտառվերականգնման միջոցառումների նախագծման ժամանակ հաշվի է առնվել տարբեր անտառային տիպերում և հողային կատեգորիաներում բնական վերաճի ընթացքը և անտառաճման պայմանները: Անտառհիմնման, ինչպես նաև ագրոտեխնիկական միջոցառումների նախագծման համար հիմք են ընդունում հողային բերրիության և անտառաճեցման պիտանելիության դասակարգումը՝

- Անտառաճեցման պիտանելիության առաջին խմբի մեջ են մտնում մինչև 20° թեքության լանջերը, հողերը հզոր կամ միջին հզորության են, մայրական ապարների ելքը մինչև 20%: Այս պայմաններում կարող են աճել արժեքավոր, արագաճ, երկարակյաց անտառային, ինչպես նաև պտղատու տեսակներ:
- Երկրորդ խմբի մեջ են ներառվում ավելի փոքր հզորություն ունեցող հողերը, համեմատաբար վատ անտառաճեցման պայմաններով, այն է միջին աստիճանի քարքարոտ, մայրական ապարների ելքը 20-40%, միջին հզորության, մինչև 35° թեքության լանջերի վրա գտնվող տարածքները: Նշված պայմաններում բարձրարժեք տեսակները աճի և արտադրողականության տեսանկյունից զիջում են I-ին խմբին:
- Երրորդ խմբի մեջ մտնող հողային պայմաններում անտառաճեցման հնարավորությունները սահմանափակ են, որտեղ աճում են սահմանափակ տեսակների ծառաթփատեսակներ, որոնք պահանջկոտ չեն հողակլիմայական պայմանների նկատմամբ:
- Չորրորդ խմբի մեջ են մտնում հողային պայմանների այն տարբերակները, որոնք բավարար չեն անտառաճեցման համար, այսինքն շատ ուժեղ քարքարոտ են, իսկ մայր ապարի ելքը կազմում է 60% և ավելի:

5.8.2. Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ

Կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

Ցանքի եղանակով հիմնված տնկարկը սովորաբար ավելի երկարակյաց և կենսաբանորեն ավելի կայուն է, սակայն առաջին տարիներին մեծ է կախվածությունը բնական պայմաններից և սերմերի ծլունակությունից, բուսակները ենթակա են ոչնչացման կլիմայական պայմանների տատանումների հետևանքով, ինչպես նաև մոլախոտերի հետ միաժամանակ աճման պայմաններում ցածր է մրցակցությունը: Տնկման առավելությունը կայանում է նրանում, որ տնկիները առաջին տարիներին ավելի արագ են աճում, քանի որ իրենց դանդաղ աճման շրջանը անցել են

տնկարանում, ավելի քիչ են տուժում մոլախոտերի հետ պայքարում, ինչպես նաև քիչ են վնասվում կրծողների և թռչունների կողմից:

Դաշտային ուսումնասիրության արդյունքներով, հաշվի առնելով անտառածման պայմանները և ծառատեսակի կենսաբանական առանձնահատկությունները, ընտրվել են համապատասխան անտառվերականգնման եղանակները, հիմնման սխեմաները և հաշվարկվել են տնկանյութի ու սերմերի պահանջը:

Անտառհիմնումը հիմնականում նախատեսվում է հատկապես խրամատային եղանակով՝ կիրառելով սերմնաբուսակների տնկման և սերմերով ցանքսի եղանակը, իսկ խոշոր տնկանյութով համեմատաբար հարթ տարածքներում հիմնելու դեպքում՝ փոսային եղանակով: Խրամատների երկարությունը, կախված հողատեսքից և մայր ապարների ելքի աստիճանից, նախատեսվում է 1500-4000 գծմ/հա:

Անտառվերականգնում նախատեսվում է ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման նպատակներով և իրականացվում են մայր սաղարթի տակ ցանքսի կամ տնկման եղանակներով: Որոշ հատվածներում, որտեղ բնական պատուհանները համեմատաբար մեծ են և ընդգրկում են մակերեսի ոչ պակաս 40%-ը, անտառածեցման նպաստավոր պայմանների առկայության դեպքում, նախատեսվում է տնկման եղանակով:

Բնական վերականգնման օժանդակում իրականացվում է ցանկապատման և հանքայնացման եղանակով, նախատեսվում է հարթակներով (1x1մ) լրացուցիչ սերմերի ցանքսով, որոնց քանակությունը կախված ծառուտի լրիվությունից, մայր ապարների ելքից և առկա բնական վերածի քանակությունից, նախատեսվում է 500-1000 հատ 1 հեկտարում:

5.9. Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները

ա) Կաղնի խոշորատէջ

- Կաղնու սերմերի ցանքսով (հիմնական տեսակ) և հացի սովորական, թխկի սրատերև, կեչի, թխկի դաշտային և բարձր լեռնային, թեղի խորդուբորդ, լորենի՝ տնկիներով (ուղեկցող տեսակներ): Հողի նախապատրաստումը հատկապես 15° – ից բարձր թեքությունների վրա խրամատներով (0.5x0.35 մետր), երկարությունը սովորաբար վերցվում է 10 մետր, հորիզոնական ուղղությամբ 2 մետր ընդհատումով: Խրամատների ընդհանուր երկարությունը 1 հեկտարում, կախված մայր ապարների ելքի տոկոսից, նախատեսվել է 1500-4000 գծմ: Մեկ ցանքսատեղում առաջարկվում է 3-5 սերմ:
- Կաղնու բուսակներով (հիմնական տեսակ) և հացի սովորական, թխկի սրատերև, թխկի դաշտային և բարձր լեռնային, թեղի խորդուբորդ, լորենի՝ տնկիներով (ուղեկցող տեսակներ) փոսերով մինչև 15° թեքությունների վրա, միջջարքայինը 2,5 կամ 3մ, միջբույսայինը՝ 1մ սխեմայով:

բ) Սոճու անտառմշակույթների հիմնում, առաջարկվում է հիմնել սոճու 2 և ոչ ավել 3 տարեկան սերմնաբուսակներով, որի դեպքում հողի նախապատրաստման, տնկման և խնամքի ագրոտեխնիկական պահանջների բավարարման դեպքում ապահովվում է բարձր կաչողունակություն և ընթացիկ աճ: Հաշվի առնելով սոճուտներում, հատկապես սաղարթային հրդեհների առաջացման դեպքում հրդեհաշիջման աշխատանքների մեծ դժվարությունները և հնարավոր կորուստները, հրդեհների տարածումը կանխելու նպատակով նախատեսվում է խրամատային եղանակով հիմնել 2 շարք սոճի, յուրաքանչյուր 3-րդը լայնատերևավոր ծառատեսակների տնկիներով:

գ) Փոսերով հողի նախապատրաստումը (0,5x0,5x0,5 մետր) նախատեսվում է լանջերի մինչև 15° թեքություններում, համեմատաբար խոշոր տնկանյութով հիմնադրման համար 3x3 սխեմայով՝ անտառային տանձենու և խնձորենու կամ անտառային կեռասենու համար:

- Անտառային տանձենին և խնձորենին փոսային եղանակով 3x3 մ սխեմայով:

դ) Անտառվերականգնումը նախատեսվում է նաև ցածր լրիվության ծառուտների լրիվության և արդյունավետության բարձրացման նպատակով: 0,3-0,4 լրիվության անտառներում մայր սաղարթի տակ համեմատաբար բարձր թեքությունների վրա խրամատներով, սերմերի ցանքով, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ հանքայնացման եղանակով, որի դեպքում պատրաստում են հարթակներ (1x1 մետր), վերցվում է խաշամը, կատարվում է փխրեցում և հարթակների 4 անկյուններում ցանվում սերմերը:

Խրամատների ընդհանուր երկարությունը և հարթակների քանակությունը որոշվում է հաշվի առնելով ծառուտի լրիվությունը, առկա բնական վերածի քանակությունը և մայր ապարների ելքի տոկոսը: Այս տեսանկյուններով նախատեսվող հարթակների թիվը կազմում է 500-1000 հատ, որը ապահովում է համապատասխանաբար 2000-4000 ցանքատեղ, ընդ որում անմիջական մայր սաղարթի տակ սերմերի ցանք չի կատարվում, այլ կատարվում է սերմերի տարածման գոտուց դուրս:

Ցանկապատի պատրաստում նախատեսվում է ինչպես անտառմշակույթների հիմնում նախատեսած տարածքներում, այնպես էլ բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ նշանակած տարածքներում՝ անասունների մուտքը կանխելու նպատակով և նախատեսվում է մետաղյա փշալարով, իսկ սյունները փայտից, որոնց հիմքային մասը մշակվում է ձուլով:

Ագրոտեխնիկական միջոցառումներից կարևորվում են անտառմշակույթիների խնամքի աշխատանքները:

Անտառագիտական հասկացողությամբ անտառմշակույթիները բավարար կաչողականություն, աճ և արտադրողականություն ապահովում են հիմնման տարում և հաջորդող 4-5 տարիներին 15 անգամ կատարված խնամքի դեպքում, ընդ որում հիմնան տարում (գարուն) կատարվում է քաղհան փխրեցում 5 անգամ, 2-րդ տարում՝ 4 անգամ, 3-րդ – 3, 4-րդ – 2 և 5-րդ տարում – 1 անգամ:

Անտառմշակույթների հիմնման համար ծառերի և թփերի տեսակաշարը որոշվում է՝ հաշվի առնելով տարածաշրջանի հողակլիմայական առանձնահատկությունները, տեղանքների ռելիեֆը և վերականգնում նախատեսած առանձին հատվածների լանջերի դիրքադրությունը և ծովի մակերևույթից բարձրությունը՝ հիմք ընդունելով նաև հյուսիս-արևելյան Հայաստանի տարբեր անտառածման պայմանների համար առաջարկվող ծառերի և թփերի տեսակաշարը (աղյուսակ 44):

Աղյուսակ 34. Հյուսիս-արևելյան Հայաստանի տարածաշրջանի ծառերի ու թփերի տեսակաշարի

№	Քննափայտային տեսակների անվանումը	Լեռնալանջերի կողմնադրությունները	Հողերի տիպերը	Քարձրությունը ծովի մակերևույթից, մ
1	2	3	4	5
1	Կաղնի վրացական	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	550-1300
2	Կաղնի խոշորատեջ	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	1300 և բարձր
3	Հաճարենի արևելյան	հյուսիսայ, հս-արևմտյան, հս-արևելյան	հզոր, միջին հզորության, թարմ, խոնավ	900 և բարձր
4	Բոխի կովկասյան	բոլոր կողմնադրություններում	հզոր, միջին հզորության, թարմ	800 և բարձր
5	Սոճի դրիմյան	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	600 և բարձր
6	Սոճի կովկասյան	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	700-1800
7	Կեչի ելունդավոր	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1600 և բարձր
8	Կեչի Լիսվինովի	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1600 և բարձր
9	Թխկի բարձրլեռնային	հյուսիս, հս-արևմտյան, հս-արևելյան	հզոր, միջին հզորության, թարմ, խոնավ	1700 և բարձր
10	Թխկի սրատերև	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	650-1400
11	Թխկի դաշտային	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	1200-1800
12	Լորենի կովկասյան	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1400-1800
13	Լորենի մանրատերև	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1000-1700
14	Հացի սովորական	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	մինչև 1000 (1200)
15	Հացի սրապտուղ	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	մինչև 1500
16	Ընկուզենի հունական	բոլոր կողմնադրություններում	հզոր, միջին հզորության, թարմ	700-1100
17	Շագանակենի սովորական	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	900-1900
18	Թեղի խորդուբորդ	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	մինչև 1400
19	Իլենի Եվրոպական	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	1000-2000
20	Իլենի լայնատերև	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	900-1200
21	Կտսկենի սև	հյուսիս, հս-արևմտյան, հս-արևելյան	թարմ, խոնավ	1200-2300
22	Արոսենի սովորական	բացի հարավայինից	հզոր, թարմ, խոնավ	մինչև 1200 (1500)
23	Կիպրոս սովորական	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	600-1200
24	Ցախակեռաս այծի	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	800-2200
25	Ցախակեռաս սկովկասյան	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	մինչև 1300
26	Հոնի	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	800-1700
27	Տանձենի կովկասյան	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	700-1750
28	Խնձորենի արևելյան	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	1000 (1200)
29	Կեռասենի	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ	մինչև 1700
30	Շլորենի	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	700-1500
31	Տիլենի սովորական	բացի հարավայինից	հզոր, միջին հզորության, թարմ, խոնավ	650-1550
32	Ճապկի հարավային	բոլոր կողմնադրություններում	բոլոր տիպի հողերում	650-1550

Աղյուսակ 35. Ամփոփ հաշվեցուցակ Ճամբարակի անտառտնտեսության անտառպատման և անտառվերականգնման միջոցառումների

Անտառավտեսության անվանումը	Քառակուսի N	Հատված N	Մակերեսը, հա	Դիրքագրություն	ԾՄԲ, մ	Բնիխետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատ-րաստման եղանակ	Անտառվերա-կանգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսակներ ի քանակը, հատ	Տնկանյութի քանակը, հատ
Կարմիր	1	24	25,3 /10	Հս-Ալ 15	2000	3	ԵՆԹ C-3	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի Կեչի, հացի, թխկի	64		1600
	1	33	1,6	Ամ 20	1850	4	ԴՇԱ B-2	Ցածր լրիվության ծառուտ (0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	70		
	2	4	1,3	Հս-Ալ 20	1990	3	ՏՐԽ C-2	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի Կեչի, հացի, թխկի	52		1300
	2	5	4,0	Հս-Ալ 20	2000	3	ՇՂԽ C-2	Ցածր լրիվության ծառուտ (0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	88 4,0		
	2	7	2,7	Հս-Ալ 25	1950	3	ՇՂԽ C-2	Ցածր լրիվության ծառուտ (0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	116		
	2	10	4,7	Հս-Ալ 25	2150	4	ԲՇԽ C-2	Ցածր լրիվության ծառուտ (0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	103 5,0		
	2	13	1,9	Հս-Ամ 20	2100	3	ՏՐԽ C-2	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Կեչի		5050 2525	
	2	15	1,1	Հս 20	2140	3	ՏՐԽ C-2	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Կեչի		2860 1430	
	3	6	4,3	Հս-Ալ 25	1900	3	ՏՐԽ C-2	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի Կեչի, հացի, թխկի	172		4300
	3	7	2,4	Հս-Ալ 20	2000	3	ՏՐԽ C-2	պարապուտ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի Կեչի, հացի, թխկի	96		2400
	3	14	7,1	Հս-Ամ 15	1920	3	ՏՐԽ C-2	Ցածր լրիվության ծառուտ (0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի հաճարի	156 7,0		
	3	18	1,3	Ալ 25	1930	4	ՇՂԽ B-2	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Կեչի, հացի		3460 1730	
	3	22	1,5	Հվ-Ալ 20	1900	4	ՇՂԽ B-2	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Կեչի, հացի		4000 2000	
	4	1	11,6	Ամ 10	1970	3	ՇՂԽ B-2	Չմիակցված անտառմշակույթ 10ս	Խրամատներով 1500 զձմ/հա	Անտառմշակույթի լրացում	Սոճի Կեչի, հացի		15400 7700	
	4	2	8,2/ 5,0	Հս-Ամ 25	1920	3	ՏՐԽ C-2	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի Կեչի, հացի, թխկի	200		5000
	4	14	0,8	Հվ 10	1860	4	ՇՂԽ B-2	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Կեչի, հացի		2100 1050	
	4	20	0,7	Հվ-Ամ 20	1800	4	ՇՂԽ B-2	Բացատ	Խրամատներով 3000 զձմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Կեչի, հացի		2000 1000	

Անտառայտություն ամսանուն	Քարակրպի N	Հատված N	Մակերեսը, հա	Դիրքարտություն	ԾՄԲ, մ	Բունիտետ	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատ- րաստման եղանակ	Անտառվերա- կանգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Սերմերի քանակը, կգ	Սերմնաբուսակներ ի քանակը, հատ	Տնկանյութի քանակը, հատ
	4	22	1,4	Հվ 25	1800	4	ՇՂԽ B-2	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Կեչի, հացի		4000 2000	
	5	3	10,9	Հվ-Ամ 25	2090	4	ԵՆԹ B-3	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Կեչի		29000 14500	
	5	4	6,3	Հվ-Ամ 25	2100	4	ԵՆԹ B-3	Բացատ	Խրամատներով 3000 գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Կեչի		16800 8400	
	5	7	2,3	Ամ 25	2080	3	ՇՂԽ C-2	Ցածր լրիվության ճառուտ (0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	99		
	5	10	2,1	Հվ-Ալ 5	1920	3	ՇՂԽ C-2	Ցածր լրիվության ճառուտ (0,3)	Հարթակներով 700 հատ	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	90		
	5	12	3,0	Ամ 25	2030	3	ՇՂԽ C-2	Չմիակցված անտառմշակույթ	Խրամատներով 1000 գծմ/հա	Անտառմշակույթի լրացում	Սոճի Կեչի		2400 1200	
1.4.1.	Հատված և չվերականգնված տարածքներ, նստրուտներ	հա	246,7	119,9	-126,8	109,9	-136,8
1.4.2.	Բացատ և պարապուտ	հա	670,5	396,2	-274,3	393,2	-277,3
2.	Ոչ անտառային հողեր, ընդամենը	հա	563,9	563,9		563,9	
3.	Անտառտնտեսության Ընդհանուր մակերեսը	հա	8379	8379		8379	

Աղյուսակ 42. Անտառածածկ մակերեսի տեսակային կազմի փոփոխությունն ըստ գերակշռող ծառատեսակների

№	Գերակշռող ծառատեսակը	Չափման միավորը	2021թ. փաստացի	Կանխատեսվում է			
				2030թ.	Փոփոխությունը 2021թ. նկատմամբ+	2035թ.	Փոփոխությունը 2021թ. նկատմամբ
1	Սոճի	հա	337,0	373,0	+36,0	452,0	+115
2	Կաղնի	հա	4754,0	4823,6	+69,6	4975,1	+221,1
3	Հաճարենի	հա	925,0	933,0	+8	941,0	+16
4	Բոխի	հա	223,6	227,6	+4	231,6	+8
5	Հացի	հա	68,7	69,7	+1	70,7	+2
6	Թխկի	հա	45,9	46,9	+1	47,9	+2
7	Կեչի	հա	40,4	41,4	+1	42,4	+2
8	Լորենի	հա	366,3	367,3	+1	368,3	+2
9	Ուռենի ծառանման	հա	4,0	4,0		4,0	
10	Ղաժի	հա	25,7	26,7	+1	27,7	+2
11	Տանձենի	հա	61,0	73,0	+12,0	83,0	+22
12	Հունական ընկուզենի	հա	2,1	2,1		2,1	
13	Խնձորենի	հա	11,3	23,3	+12,0	33,3	+22
14	Սալորենի	հա	2,0	2,0		2,0	
15	Չիչխան	հա	1,4	1,4		1,4	
16	Յաքի	հա	11,4	11,4		11,4	
Ամբողջը		հա	6879,8	7026,4	+146,3	7293,9	+414,1

5.12 Անտառի պահպանություն

5.12.1 Անտառպահպանության խնդիրներն ու պահաբաժինների

առանձնացումը Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի

հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները: Պահպանության գործողություններում ներառվում են՝

- Դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնում, ինչը անհրաժեշտ է վտանգված տեսակների վիճակի բարելավման, ինչպես նաև անտառային հատվածների միասնականության և ամբողջականության ապահովման (ֆրագմենտացիայի նվազեցման) համար՝ ներկայացված է թիվ 9 անտառվերականգնման միջոցառումներ բաժնում:

- Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների (ԲԲԱԱ) առանձնացում և համապատասխան կառավարում: ԲԲԱԱ-ների կառավարման գործողությունները պետք է ուղղված լինեն հայտնաբերված արժեքների պահպանմանը և վերականգնմանը:
- Ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում:
- Համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, ընդ որում պետք է գտնվեն այդ անտառներից դուրս, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունները չպետք է բացասաբար անդրադառնան սերմնային ինքնավերականգնման վրա, իսկ համեմատաբար բարձր թեւությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործումը չհանգեցնի էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը: Բնակավայրերից շատ մոտ գտնվող վերականգնման ենթակա տարածքների ցանկապատում՝ ընտանի կենդանիների մուտքն արգելելու նպատակով:

Անտառի ընդհանուր վիճակի ուսումնասիրության արդյունքներով, հաշվի առնելով վերջին տասնամյակում անտառզնահատման հիմնական ցուցանիշների ոչ դրական փոփոխությունները, կարելի է եզրահանգել, որ անտառպահպանական աշխատանքների կազմակերպման գործընթացում առկա են լուրջ բացթողումներ:

Բավական է ներկայացնել վերջին 3 տարիներին Ճամբարակի անտառտնտեսությունում կազմված անտառխախտումների արձանագրությունները.

- 2018 թվականին անտառտնտեսությունում կազմվել է ընդամենը մեկ անտառխախտման արձանագրություն, ապօրինի հատված 14 ծառի (3,14 խտմ³ ծավալով):
- 2019 թվականին կազմվել է 24 անտառխախտման արձանագրություն, ապօրինի հատված 86 ծառի (112,98 խտմ³ ծավալով):
- 2020 թվականին կազմվել է ընդամենը 16 անտառխախտման արձանագրություն, ապօրինի հատված 58 ծառի (53,74 խտմ³ ծավալով), 1 արձանագրություն 0,015 հա-ի վրա ապօրինի ցանկապատման և 1 արձանագրություն 0,138 տարածքի վրա աղտոտման վերաբերյալ: Նշվածը բնականաբար իրական պատկերը չի բնութագրում:

Անտառների պահպանության ուժեղացման, բնականոն վիճակի պահպանման, վիճակի բարելավման և կայուն կառավարման իրականացման նպատակով ամբողջ տարածքը բաժանվել է 27 պահաբաժինների (աղյուսակ 53, քարտեզ 21):

Ամենամեծ պահաբաժնի մակերեսը 1247հա է (Գետիկի անտառպետություն, 1-ին պահաբաժին), ամենափոքրինը՝ 16հա (Կարմիրի անտառպետություն, 6-րդ պահաբաժին), պահաբաժինների միջին մակերեսը՝ 419հա: Պահաբաժինների չափը սահմանվել է հաշվի առնելով բնական պայմանները, բնակավայրերից հեռավորությունը և արդյունավետ հսկողության իրականացման հնարավորությունները: Հսկողության տեսանկյունից առավել վտանգավոր՝ բանուկ ճանապարհներին նախատեսվում է տեղադրել մշտական և շարժական ուղեփակոցներ:

Աղյուսակ 43. Ճամբարակի անտառտնտեսության պահաբաժինները

№	Անտառպետության անվանումը	Պահաբաժնի համարը	Քառակուսու համարը	Մակերեսը, հա
1	Կարմիրի	1	8, 10	193
		2	6, 7, 11	38
		3	5	131
		4	2, 3,4	247
		5	1	90
		6	9	16
	Ընդամենը			715
2	Գետիկի	1	23, 24, 25, 26, 31, 32, 33, 34, 35, 36, 38,39	1247
		2	21, 22	307
		3	18, 19, 20	341
		4	1, 2, 3, 4, 5, 6, 7, 8	541
		5	9, 10, 11	255
		6	12, 13, 14, 15, 16, 17, 30, 37	883
	7	27, 28, 29	251	
Ընդամենը			3825	
3	Դպրաբակի	1	3, 4, 5, 6	395
		2	10, 11, 13, 14, 15, 16, 17, 21	939
		3	1, 2, 7	407
		4	8, 9, 12	410
		5	18, 19, 20, 22, 23, 24, 25,	636
		6	26, 27	240
	7	28, 29, 30, 31, 32, 33, 34, 35	812	
Ընդամենը			3839	
4	Ամբողջը	20		8379

5.12.2 Ճանապարհային ցանց

Ճամբարակի տարածաշրջանը, որտեղ տեղաբաշխված են Ճամբարակի անտառտնտեսության անտառները, հանրապետության գլխավոր կոմունիկացիոն ուղիներին միացված է Երևան-Դիլիջան-Ճամբարակ և Երևան-Սևան-Ճամբարակ ասֆալտապատ ճանապարհներով:

Անտառտնտեսական ճանապարհները բնութագրող հիմնական տարրերն են.

- Օգտագործման գոտի - հողաշերտի այն հատվածը, որի վրա կառուցված է ճանապարհը: Հողային շերտի լայնությունը կախված է ճանապարհի կարգից.
 - 1-ին կարգ - 6,5մ և ավելի
 - 2-րդ կարգ - 4,5-6,4 մ
 - 3-րդ կարգ - 4,4մ և պակաս:
- Անցումային գոտի, որտեղով կատարվում է երթևեկությունը,
 - 1-ին կարգ - 5,5մ և ավելի լայնություն
 - 2-րդ կարգ - 3,5-5,4մ լայնություն
 - 3-րդ կարգ - անցումային մասի լայնությունը հաշվի չի առնվում:
- Ջրատար առվակներ (կյուվետներ) - ջրհեռացման խողովակներ կառուցվում և տեղադրվում են ճանապարհի երկու կողմից և լայնությամբ՝ մակերեսային և

գրունտային ջրերի հեռացման համար, որոնց բացակայությունը ճանապարհների փչացման հիմնական պատճառն է:

- Հողային պաստառ – կողային առուների միջև ընկած հողաշերտն է, որի վրա կառուցվում է ճանապարհի երթևեկելի մասը: Խճով, բետոնով, ասֆալտ-բետոնով կամ որևէ այլ ամուր շինությունով կառուցվածներն ամուր պատվածքով ճանապարհ են: Շատ հաճախ անտառմիջյան ճանապարհները լինում են բնահողային:

Անտառտնտեսությունում անտառային ճանապարհները ծառայում են ինչպես անտառտնտեսական, այնպես էլ հակահրդեհային նպատակների համար և դժվար է դրանք տարանջատել:

Ճանապարհները հիմնականում փափուկ (բնահողային) գրունտով են, սեզոնային օգտագործման, թեև մի մասում պարբերաբար կատարվում է մասնակի վերանորոգում ամբողջ տարի օգտագործման նպատակով, սակայն ջրհեռացման կյուվետների, խողովակների և խճածածկի բացակայության հետևանքով ճանապարհների վիճակն անմխիթար է:

Ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը 204կմ է, նույն թվում՝ Դիլիջան-Ճամբարակ 31կմ, համայնքային նշանակության 47կմ և գրունտային անտառային ճանապարհներ՝ 58կմ: Ճանապարհների ձգվածությունը 1000հա-ի հաշվով կազմում 41կմ (աղյուսակ 54, քարտեզ 22): Անտառկառավարման 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում ընդհանուր 30կմ:

Աղյուսակ 44. Ճանապարհային ուղիների բնութագիրը

№	Ճանապարհների տեսակները	Ճանապարհների երկարությունը, կմ
1	Դիլիջան-Ճամբարակ	31
2	Համայնքային նշանակության	47
3	Անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության	58
4	Անտառտնտեսությունում	204

5.13 Պահպանություն անտառային հրդեհներից

Անտառային հրդեհները լինում են գետնատարած, երբ այրվում է թափուկը, խաշամը, մամռային և խոտային ծածկույթը, շատ հաճախ նաև ենթանտառը, մատղաշը, իսկ սովորաբար ծառերը քիչ են վնասվում:

Շատ վտանգավոր է սաղարթային հրդեհը, երբ խաշամի, թափուկի հետ միասին այրվում է ծառերի սաղարթը, որի դեպքում այն ընթանում է թռիչքաձև:

Ելնելով եղանակային պայմաններից տարբերակվում են.

- Արտակարգ հրդեհավտանգ - երբ դիտվում է երկարատև տաք, չոր եղանակ և օդի միջին ջերմաստիճանը 20°-ից բարձր է, իսկ հարաբերական խոնավությունը 40%-ից ցածր:
- Ուժեղ հրդեհավտանգ - այն վայրերը, որտեղ երկար ժամանակ դիտվում է չոր եղանակ, երբեմն թույլ տեղումներով, իսկ հարաբերական խոնավությունը 40-60% է:
- Թույլ հրդեհավտանգ - երբ հաճախակի անձրևներ են տեղում և անտառային թաղիքը խոնավ է:

- Ոչ հրդեհավտանգ, երբ երկարատև անձրևներ են և հարաբերական խոնավությունը 80%-ից բարձր:

Անտառների հրդեհավտանգությունը բնորոշվում է անտառի տիպով, ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններով:

Անտառի գույքագրման ընթացքում յուրաքանչյուր քառակուսու համար որոշվել է հրդեհավտանգության դասը և տվյալները մշակել են համակարգչային ծրագրով, նույնիսկ ըստ հատվածների և քարտեզագրվել:

Անտառտնտեսության տարածքներում հրդեհավտանգության միջին դասը 2,73 է՝ Կարմիրի անտառապետությունում՝ 2,06, Գետիկի անտառապետությունում՝ 2,61, Դպրաբակի անտառապետությունում՝ 2,97:

Անտառտնտեսությունում 1-ին հրդեհավտանգության տարածքները կազմում են ամբողջ տարածքի 10,2%-ը (856հա), 2-րդ դասը՝ 1598հա (19,1%) 4-րդ և 5-րդ դասերի տարածքները միասին 8,4% (709հա), իսկ բացարձակ գերակշռում է 3-րդ հրդեհավտանգության դասը՝ 62,3% (5218հա) (աղյուսակ 55, քարտեզ 23):

Անտառտնտեսության կառավարման պլանի տասնամյա գործողությունների պլանում նախատեսվել են նախագույնացնող ցուցատախտակների տեղադրում, հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, ջրավազանների կառուցում, կրակմարիչների ձեռքբերում, հակահրդեհային ճանապարհների վերանորոգում, հանդիպումներ հարակից համայնքներում՝ հակահրդեհային իրազեկության բարձրացման և հակահրդեհային միջոցառումների իրականացման թեմաներով և այլն: Անհրաժեշտ է զարգացնել անտառային հրդեհներին արագ արձագանքման կարողությունները:

Աղյուսակ 45. Տեղեկագիր անտառային հողերի տեղաբաշխման ըստ հրդեհավտանգության դասերի

Անտառապետություն	Հրդեհավտանգության դասը, հա				Ընդամենը	Միջին դասը
	1	2	3	4		
Կարմիրի	336	18	351	10	715	2,06
Գետիկի	478	741	2414	193	3825	2,61
Դպրաբակի	42	839	2453	506	3839	2,97
Ընդամենը	856	1598	5218	709	8379	2,73
% %	10,2	19,1	62,3	8,4	100	

Աղյուսակ 46. Տեղեկագիր հակահրդեհային միջոցառումների

№	Միջոցառումներ	Չափի միավորը	Նախատեսվում է
1.	Նախագույնական միջոցառումներ		
1.1.	Խորհրդակցություններ խոշորացված համայնքում և բնակավայրերում	հանդիպում	10
1.2.	Մշտական ցուցատախտակներ	հատ	10
1.3.	Հանգստի և ծխելու տեղերի առանձնացում	հատ	10
2.	Հակահրդեհային կառուցումներ		
2.1.	Հակահրդեհային ճեղքվածքների կառուցում	կմ	2
2.2.	Հանքայնացված շերտերի կառուցում	կմ	2
2.3.	Ջրավազանների կառուցում	հատ	1
2.4.	Հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում	կմ	5

№	Միջոցառումներ	Չափի միավորը	Նախատեսվում է
3.	Հակահրդեհային սարքավորումների ձեռքբերում		
3.1.	Ավտոմեքենա	հատ	1
3.2.	Մոտոցիկլետ	հատ	3
3.3.	Կրակմարիչներ	հատ	20
3.4.	Օժանդակ սարքավորումներ	լրակազմ	3
4.	Կրակմարող կամավոր խմբերի կազմավորում	խումբ	3

5.14 Անտառտնտեսության կառավարում

Անտառտնտեսության կառավարման նպատակն է ապահովել համապատասխան մարդկային ռեսուրսներ և ստեղծել տեխնիկական հզորություններ կառավարման համար, ինչպես նաև հայթայթել ֆինանսավորման նոր աղբյուրներ՝ անտառտնտեսության կանոնադրական նպատակների իրականացման համար լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

«Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ առաջարկվում է ստեղծել մոնիթորինգի և գիտության միավոր (1 աշխատակից) և էկոլոգոսաշրջության միավոր (1 աշխատակից): Նրանք պետք է անցնեն հատուկ մասնագիտական վերապատրաստում և իրականացնեն արգելավայրի և ընդհանուր անտառտնտեսության համապատասխան գործառույթները:

Տնօրենի ենթակայությամբ հասարակայնության հետ կապերի պատասխանատուն պետք է համակարգի արգելավայրի և անտառտնտեսության իրազեկության և էկոլոգիայի աշխատանքները:

Տնօրենի ենթակայությամբ միջոցների համալրման պատասխանատուն պետք է իրականացնի ֆինանսավորման նոր աղբյուրների հայթայթման գործառույթը:

Անտառտնտեսության տնօրենը և հիմնական գործառույթներն իրականացնող պատասխանատուները պետք է սերտորեն համագործակցեն Անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժինների հետ և ստանան անհրաժեշտ աջակցությունը:

Անտառտնտեսության գործառույթների կազմակերպման և պատշաճ իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան մարդկային և տեխնիկական հզորություններ: Մասնավորապես անհրաժեշտ է անձնակազմի կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում՝ անտառների և կենսաբազմազանության պահպանության և մոնիթորինգի, անտառի պաշտպանության, էկոլոգոսաշրջության զարգացման, ֆինանսական միջոցների համալրման և այլ ուղղություններով:

5.15 Անտառի և կենսաբազմազանության պահպանություն

Անտառների և կենսաբազմազանության պահպանությունն ուղղված է լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովմանը, լեռնային անտառային էկոհամակարգերի և դրանց բնորոշ հազվագյուտ և արժեքավոր բույսերի ու կենդանիների պահպանությանն ու վերարտադրությանը:

5.16 Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ

Անտառտնտեսության տարածքում մոնիթորինգը և գիտական ուսումնասիրությունները կիրականացվեն «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ ստեղծված մոնիթորինգի և գիտության միավորը Անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գլխամասի համապատասխան պատասխանատուների հետ համատեղ և պետք է սերտորեն համագործակցի գիտական և ուսումնական հաստատությունների (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, համալսարաններ) և ՀԿ-ների հետ: Անրիաժեշտ է գտնել և ներգրավել այն հաստատությունները և հետազոտողներին, որոնք հետաքրքրված են հատկապես արգելավայրի տարածքում որոշակի տեսակների/էկոհամակարգերի վերաբերյալ թիրախային ուսումնասիրություններ իրականացնելու հարցում: Մոնիթորինգի դաշտային աշխատանքների իրականացմանն անհրաժեշտ է ներգրավել կամավորների՝ ՀԿ-ներ, դպրոցներ, համալսարանների ուսանողներ և այլն:

Անտառտնտեսության անձնակազմը պետք է աջակցի գիտնականներին, հետազոտողներին, կամավորներին՝ մոնիթորինգի և գիտական ուսումնասիրությունների դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում:

5.16.1 Մոնիթորինգի ծրագիր

Կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ներդրման հիմնական նպակակն է կանխատեսել բնական և մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացումը և կատարել կանխատեսումներ դրանց հետագա ընթացքի վերաբերյալ: Ստացված մոնիթորինգային տվյալները պետք է օգտագործվեն անտառտնտեսության տարածքում իրականացվող կառավարման գործողություններում համապատասխան փոփոխություններ և շտկումներ կատարելու համար՝ ուղղված էկոհամակարգերի, բնական միջավայրերի և տեսակների պահպանությանը և բնականոն զարգացմանը:

Կենսաբազմազանության մոնիթորինգի խնդիրներն են.

- Բացահայտել կենսաբանական բազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակական ցուցանիշների, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակը և միտումները:
- Բացահայտել յուրաքանչյուր էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցությունը:
- Գնահատել և կանխատեսել էկոհամակարգերի բաղադրիչների՝ կենսաբազմազանության և բնական ռեսուրսների քանակական և որակական փոփոխությունների ընթացքը:

Անհրաժեշտ է մշակել մոնիթորինգի ծրագիր: Այն կներառի ինդիկատորային տեսակների ընտրություն՝ էկոհամակարգերի վիճակի միտումները բացահայտելու համար, մոնիթորինգային արձանագրությունների մշակում, դիտակետերի և փորձահրապարակների որոշում և այլն: Անհրաժեշտ է ներդնել և վարել մոնիթորինգի տվյալների բազա և համակարգչային ծրագիր:

Գետիկի արգելավայրի տարածքում մոնիթորինգի ենթակա հիմնական խոշոր կաթնասուններն են գորշ արջը (*Ursus arctos*), միխրագույն գայլը (*Canis lupus*), այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Մոնիթորինգի ենթակա թռչնատեսակներից՝ գիշատիչները և այլ տեսակներ:

Զբոսաշրջության մոնիթորինգը պետք է ներառի արգելավայրի տարածքների զբոսաշրջիկների այցելության արդյունքում բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում և ճիշտ կառավարում, ինչպես նաև մատուցվող ծառայության որակի գնահատում: Մասնավորապես, մոնիթորինգը պետք է անդրադառնա զբոսաշրջության ծրագրի շրջանակներում իրականացվող գործողություններին, որոնք հնարավոր վնաս կարող են հասցնել էկոհամակարգերի ամբողջականությանը: Անհրաժեշտ է ստեղծել զբոսաշրջության տեղեկատվական բազա GIS համակարգով:

Անհրաժեշտ է ստեղծել մոնիթորինգ իրականացնող անձնակազմի և տեխնիկական հզորություններ: Անհրաժեշտ է կազմակերպել գործնական դասընթացներ անտառտնտեսության համապատասխան մասնագետների և անտառապահների համար:

5.16.2 Գիտական ուսումնասիրություններ

Գիտական ուսումնասիրությունները նպատակաուղղված են հիմնական գործառույթների՝ կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ու պատմամշակութային և բնության ժառանգության պահպանության արդյունավետ իրականացմանը:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքում ստացված տեղեկատվությունը կիրառվում է բնապահպանական միջոցառումների պլանավորման, այդ թվում էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության ու վերականգնման, և դրանց արդյունավետության գնահատման համար, պահպանվող համակարգերի և օբյեկտների վիճակի գնահատման և կանխատեսման, մոնիթորինգի իրականացման, էկոլոգիական հարցերի լուսաբանման, տուրիզմի և ռեկրեացիայի, ինչպես նաև իրականացվող տնտեսական գործունեության ազդեցության գնահատման համար:

Գիտական ուսումնասիրությունները իրականացվելու են կազմակերպության համապատասխան մասնագետների միջոցով: Նրանք պետք է համագործակցեն գիտնականների և հետազոտողների հետ՝ աջակցելով նրանց ու տրամադրելով տեխնիկական օգնություն դաշտային աշխատանքներում: Գիտական և հետազոտական աշխատանքները պետք է իրականացվեն անտառների կառավարման համար կարևոր ոլորտների բացահայտմամբ և առաջնայնությունների սահմանմամբ՝ համագործակցելով համապատասխան մասնագետների հետ:

Ելնելով վերոհիշյալից, 2021-2030թթ-ի գիտական ուսումնասիրությունների ծրագրում առաջարկվում է ներառել.

- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրություններ (գույքագրման իրականացում, թվաքանակի հաշվառման և պոպուլյացիաների

գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը,

- կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում/վարում և պահպանման ու հարստացման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում,
- հազվագյուտ և վտանգված տեսակներից կազմված էկոհամակարգերի (ծառուտների) և դրանց ինքնավերականգնման ու ինքնակարգավորման հնարավորությունների բարձրացման ուսումնասիրություններ և դրանց վիճակի բարելավման լրացուցիչ միջոցառումների նախատեսում,
- կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության բարձրացման ուսումնասիրություններ և կոնկրետ միջոցառումների նախատեսում,
- ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրություններ և բնական էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների նախատեսում,
- անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների ուսումնասիրություններ, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրությունները:

Աղյուսակ 47. Պահպանության և մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ

№	Սարքավորում, գույք	Քանակը
1	Ամենազնաց մեքենա	1
2	Ձիեր և հավելյալ միջոցներ (2-ական յուրաքանչյուր անտառապետության համար)	6
3	Մշտական ուղեփակոցներ	2
4	Շարժական ուղեփակոցներ	4
5	GPS սարքեր	5
7	Ֆոտո/վիդեո նկարահանման սարք	1
8	Հեռադիտակ	10
9	Գիշերային հսկման հեռադիտակ	4
10	Տեսահսկման համակարգեր՝ տեսախցիկներ	2
11	Ամառային համազգեստ	25
12	Ձմեռային համազգեստ	25
13	Անտառապահների սարքավորումների հավաքածու (բահ, դանակ, լապտեր, ուսապարկ, առաջին օգնության պարագաներ և այլն)	20
14	Գրասենյակային սարքավորումներ (համակարգիչ, տպիչ, սկաներ և այլն)	1

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմնադրության փաստաթղթի վերաբերյալ առաջին հանրային քննարկումները կազմակերպվել են 2021թ-ի ապրիլի 14-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահպանչների պահպանմամբ: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակվել է Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2021թ-ի մարտի 31-ի համարում, իսկ հայտարարության տեքստը և հայեցակարգային փաստաթուղթը ներկայացվել է համայնքապետարանին՝ հանրության համար հասանելի դարձնելու և քննարկումներին շահագրգիռ հանրության մասնակցությունը ապահովելու խնդրանքով: 1-ին հանրային քննարկումների հայտարարությունը, քննարկումների մասնակիցների ցանկը, արձանագրությունը և համայնքի նախնական համաձայնության գրությունը կցված են սույն Նախնական գնահատման հայտին՝ ստորև, որպես հավելվածներ:

Հավելված 2. 1-ին հանրային քննարկման մասնակիցների ցանկը

Մասնակիցների ցանկ

2021թ-ի ապրիլի 14-ին ժամը 11:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարանում նախատեսված «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2021-2030թթ կառավարման պլանի նախագծի վերաբերյալ հանրային հանրային ծանուցման և քննարկումների (1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Քարամյան Եսայի Եսայի	ՊՊ Բաղրամյան ՍՊԸ ԶԵՐԱԿ, Գեղարքունիք	098 1314 51	
2.	Վերքյան Վերքյան	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	034141808	
3.	Գրիգորյան Լիզա Գրիգորյան	Գրիգորյան Բնակավայր Գրիգորյան Վերքյան	094429503	
4.	Խոսրովյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Խոսրովյան Վերքյան	098070063	
5.	Ասատրյան Սարգիս	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	077446389	
6.	Սարգսյան Գրիգորյան	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	053036812	
7.	Մկրտչյան Գրիգորյան	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	093769230	
8.	Վերքյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	094100064	
9.	Վերքյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	077430363	
10.	Վերքյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	093544854	
11.	Գրիգորյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	091407566	
12.	Խոսրովյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	093-02-65-16	
13.	Գրիգորյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	098-008435	
14.	Վերքյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան		
15.	Վերքյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	099770639	
16.	Վերքյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	071387882	
17.	Վերքյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	091-77-21-91	
18.	Վերքյան Լուսինե	Վերքյան Բնակավայր Վերքյան Վերքյան	091223690	
19.				
20.				

Հավելված 3. 1-ին հանրային քննարկման արձանագրությունը

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2021-2030թթ կառավարման պլան» նախագծի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2021թ-ի ապրիլի 14-ին, ժամը 11:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Ճամբարակի համայնքապետարանում (հասցե՝ ք. Ճամբարակ, Գ. Նժդեհի 125) տեղի ունեցան «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2021-2030թթ կառավարման պլան» նախագծի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թ-ի մարտի 31-ի թիվ 55 (7496) համարում:

Հանդիպմանը մասնակցում էին կառավարման պլանը մշակող ընկերության («Ուայդ Գեյթ» ՍՊԸ), «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի, Ճամբարակի համայնքապետարանի, նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լուծումների կազմակերպման պատասխանատու ընկերության (Ի Սի Ի Քաուրագուս ՍՊԸ), ինչպես նաև «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղին հարակից բնակավայրերի ներկայացուցիչները:

Ճամբարակի համայնքապետարանի ներկայացուցիչ Ռ. Օհանյանը ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանդիպման նպատակը և ներկայացրեց մասնակիցներին: Նա հույս հայտնեց, որ քննարկումները կլինեն արդյունավետ և կնպաստեն «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի կառավարման պլանի այսպիսի նախագծի մշակմանը, որն օգտակար կլինի և՛ հարակից համայնքների բնակիչների, և պետության համար: Այնուհետև Ռ. Օհանյանը խոսքը փոխանցեց «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ. Հարությունյանին և Ի Սի Ի Քաուրագուս ՍՊԸ ներկայացուցիչ Մ. Նալբանդյանին:

Գ. Հարությունյանը հայտնեց, որ աշխատանքների ընթացքում արդեն իսկ եղել են մի շարք քննարկումներ և հանդիպումներ շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում նաև հանդիպել է ներկաներին, քննարկվել են տեխնիկական բնույթի և համայնքներին հետաքրքրող այլ հարցեր, որից հետո խոսքը փոխանցեց Մ. Նալբանդյանին բնապահպանական հարցերը ներկայացնելու նպատակով:

Մ. Նալբանդյանը ողջունեց մասնակիցներին և հայտնեց, որ հանդիպման նպատակն է «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի կառավարման պլանի նախագծի քննարկումը մասնակցային սկզբունքով, արտացոլելու համար նաև համայնքի/բնակչության շահերը և դիրքորոշումը: Նա նշեց, որ չնայած նախկինում, կառավարման պլանի մշակման ընթացքում եղել են բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ քարտեզագրման, գույքագրման և այլ միջոցառումների շրջանակներում, սակայն այս քննարկումը կազմակերպված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Կառավարման պլանը որպես հայեցակարգային փաստաթուղթ պետք է անցնի փորձաքննություն, օրենքով նախատեսված է իրականացնել ռազմավարական գնահատում, մշակել հաշվետվություն և կազմակերպել 4 հանրային քննարկում: Նշվեց նաև, որ հանրությունը և համայնքը պատշաճ կերպով ծանուցվել են:

Մ. Նալբանդյանը ներկաներին ներկայացրեց, որ անտառկառավարման պլանը իրենից ներկայացնում է տվյալ անտառտնտեսության ռազմավարական զարգացման փաստաթուղթ, որտեղ նշվում են առաջիկա 10 տարվա ընթացքում նախատեսվող զարգացումները, գնահատվում է առկա փաստացի վիճակը, տրվում են զարգացման ուղղությունները, իրականացվում է անտառգնահատում, գույքագրում, անտառօգտագործման ծավալների հաշվարկ, սահմանների ճշգրտում, մակերեսների ճշգրտում: Մակերեսների ճշգրտման շրջանակներում համայնքները կարող են ունենալ առավել հետաքրքրություն կապված սահմանների հետ: Այսօրվա հանդիպման քննարկման հիմնական հարցերը վերաբերում են բնապահպանական հիմնախնդիրներին, թեև այդ ձևակերպումը չի սահմանափակում ներկաներին քննարկել այլ իրենց հետաքրքրող հարցեր: Մ. Նալբանդյանը հակիրճ ներկայացրեց կառավարման պլանի հիմնական տվյալները՝ այն են. այս անտառտնտեսության կազմում ներառված են 3 անտառպետություն – «Կարմիրի», «Գետիկի» և «Դպրաբակի»; ցուցանիշները և համեմատական վերլուծություններ արված են 2006 թ-ի տվյալների հետ համադրությամբ, որի արդյունքում ստացվում է, որ ունենք որոշակի մեկերեսների նվազում, ընդհանուր առմամբ 643 հա-ի չափով: Մ. Նալբանդյանը նշեց, որ ներկայացվող թվերն ու ցուցանիշները դեռ հարկավոր չէ համարել որպես վերջնական, քանի որ փառատաթուղթը դեռ մշակման փուլում է և հնարավոր են ճշգրտումներ: 643 հա-ի չափով ավելանում են համայնքների հողատարածները; իրականացվել են քարտեզագրական աշխատանքներ, որտեղ նշված են հիշատակված անտառպետությունների սահմանները, իրենց նկարագրություններով, ներկայացված են ցուցանիշներ ըստ նպատակային նշանակության՝ արտադրական, պահպանական և հատուկ նշանակության; տրված է նաև բաժանում ըստ հողատեսակների, բաշխվածություն ըստ ծովի մակերևույթից բարձրությունների; նշված են մակերեսները և անտառային պաշարները ըստ հիմնական անտառկազմող ծառատեսակների (18 հիմնական ծառատեսակ); ներկայացված են նաև ըստ տարիքային կազմի (երիտասարդ, միջին տարիքի, հասունացող, հասուն և գերհասուն); իրականացվել է նաև անտառգնահատում ըստ գերակշիռ ծառատեսակների, հիմնականում գնահատումը արվել է սոճի, կաղնի, հաճարենի և բոխի ծառատեսակներով: Իրականացվել է նաև ներկա վիճակի վերլուծություն: Իրականացվել է ուսումնասիրություն ընդհանուր բնապահպանական առումով. մասնավորապես կենսաբազմազանության ուսումնասիրություն, որտեղ տրված է նկարագրություն ֆլորայի և ֆաունայի ըստ տեսակային կազմի, ընտանիքների և դրանց կարեվորության կամ վտանգավորության աստիճանի գնահատում է կատարվել: Անտառտնտեսության տարածքում գտնվող բույսերից 4 տեսակը գտնվում է 22 բույսերի Կարմիր գրքում, 3 տեսակ անողնաշար

կենդանիներ են ընգրկված Կարմիր գրքում, ողնաշարավորներից գնահատվել են 9 ձկնատեսակներ, որից 4-ը հիմնականում հանդիպում են Գետիկ գետում: Գետիկի արգելավայրի համար նույնպես իրականացվել են քարտեզագրման, գոյքագրման և այլ աշխատանքներ, որոնց արդյունքներով համապատասխան պետական լիազոր մարմինը կարող է կատարել կադաստրային գրանցում: Տրված են նաև անտառօգտագործման ծավալները, որոնք կարող են կարևոր լինել հարակից համայնքների բնակչության համար, մասնավորապես առաջարկվում են 2 տեսակի հատումներ 2021-2030 թթ-ի համար՝ խնամքի և սանիտարական, ընդհանուր առմամբ նախատեսվում է 180 խտացված խ.մ. խնամքի հատում և 8,300 խ.մ սանիտարական հատում: Մ. Նալբանդյանը նշեց, որ կա խնդիր ապահովելու համայնքների բնակիչների՝ փայտի ամբողջական կարիքները: Նախագծում մանրամասն նշված է, թե հատումներից ինչ քանակություն կարելի է օգտագործել որպես շինանափայտ և ինչքանը որպես վառելափայտ:

Հարց՝ Կառլեն Մարտիրոսյան – Հայաստանի բոլոր անտառտնտեսություններում պետությունը տրամադրում է սահմանամերձ բնակչությանը 8 խ.մ վառելափայտ անվճար, իսկ ինչու՞ ճամբարակում բնակչությանը հասնում է ընդամենը 2 խ.մ:

Պատասխան՝ Մ. Նալբանդյան – մոտեցումը բոլոր տեղերում նույնն է բնակչությանը պետք է տրամադրվի մինչև 8 խ.մ, պարզապես որոշ տարածաշրջաններում թափուկը հասանելի է, իսկ որոշներում՝ ոչ:

Ներկաները բուռն և երկար քննարկում ծավալեցին բնակչությանը տրամադրվող վառելափայտի քանակների, թափուկի որակի և այլ, իրենց համար կարևոր հիմնախնդիրների շուրջ:

Մ. Նալբանդյանը հորդորեց ներկաներին այս հարթակն օգտագործելով, բնակչության անունից հարց ձևակերպել թե կառավարման պլանի նախագծով նախատեսվող առաջիկա 10 տարվա կտրվածքով ինչքան թափուկի քանակ է նախատեսվում տրամադրել բնակչությանը կամ ինչքան վառելափայտի ծավալ է հաշվարկվելու:

Մ. Նալբանդյանը իրագեկեց նաև, որ առաջիկա 10 տարվա ընթացքում նախատեսվում է շուրջ 512 հա անտառվերականգնման աշխատանքներ: Նա հորդորեղ ներկաներին ծանոթանալ նախագծի մանրամասներին համայնքապետարանին տրամադրված նյութերից և հարկ եղած դեպքում կատարել նաև գրավոր հարցադրումներ իրենց հուզող խնդիրների մասին:

Ռ. Օհանյանը խնդրեց ավելի մանրամասն ներկայացնել անտառվերականգնման ցուցանիշները:

Մ. Նալբանդյանը ներկայացրեց անտառվերականգնման նախատեսվող ցուցանիշները, նշելով որ ընդհանուր նախատեսվում է իրականացնել 512 հա անտառվերականգնում, որից բացառային տեղամասերում 271 հա, չմիակցված տեղամասերում 16 հա, ցածր թեքությամբ ծառուտներում՝ 107 հա և նոսրուտներում 116 հա: Վերականգնման տեսակները նախատեսված են հետևյալը. կաղնի, հաճերենի – սերմերով; սոճի, կեչի, հացենի, թխկի, լորի, տանձենի, խնձորենի – սերմաբուսակներով և տնկիներով:

Մ. Նալբանդյանը ևս մեկ անգամ խնդրեց ներկաներին հանդես գալ հարցադրումներով, իսկ եթե այս պահին հարցեր չկան, նա հորդորեց ներկաներին հնարավոր հարցերի դեպքում կատարել նաև գրավոր հարցադրումներ, նշելով, որ առաջիկայում սպասվում են ևս 3 քննարկումներ, որոնց ընթացքում բնակիչներն ու շահագրգիռ կողմերը հնարավորություն կունենան առավել մանրամասն քննարկելու իրենց հետաքրքրո հարցերը:

Այլ հարցեր չհնչեցին և Ճամբարակի համայնքապետարանի ներկայացուցիչ պարոն Ռ. Օհանյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության համար և ամփոփելով ավարտեց հանդիպումը:

Քննարկումների վարող՝

«Ի ՍԻ Ի Քաուքազու» ՍՊԸ-ի ներկայացուցիչ



Մ. Նալբանդյան

Քննարկումների արձանագրող՝


«Ի ՍԻ Ի Քաուքազու» ՍՊԸ-ի ներկայացուցիչ



Մ. Բարայան

Քննարկումների պատասխանատուի ներկայացուցիչ՝

Ճամբարակի համայնքապետարանի ներկայացուցիչ



Ռ. Օհանյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝

«Ուսյոյ Գեյթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ



Գ. Հարությունյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գ. Լժոյնիի 125
Հեռ.՝ (0265)22255, էլ. փոստ՝ chambarak.gegharqunik@mta.gov.am

N 250
14 ապրիլ 2021թ.

**«ՈՒԱՅԴ ԳԵՅԹ» ՍՊՈ
ՏՆՕՐԵՆ՝ ԳԱՌՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Հարությունյան,

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021թ-ի ապրիլի 14-ին ժամը 11:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարանում տեղի են ունեցել «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2021-2030թթ. կառավարման պլանի նախագծի վերաբերյալ 1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ, որի ընթացքում նախագծի հեղինակների և այլ մասնագետների կողմից ներկայացվել և հանրային քննարկման մասնակիցների հետ քննարկվել է վերոհիշյալ նախագիծը: Ներկայացված նախագծի և քննարկման արդյունքների հիման վրա Ճամբարակի համայնքապետարանը սույնով տալիս է իր նախնական համաձայնությունը «Ճամբարակի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2021-2030թթ. կառավարման պլանի նախագծին:

Համայնքի ղեկավար՝



Վազգեն Աղամյան

Կապ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ռ. Օհանյան